ԳԻՐՔ XLVII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵԲՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ., 7.
1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնեցէք. Սմբատ Շահազիզեան 3
Եկէք մեր պարտքը կատարենք. Գիւտ ա. ք. Աղանեանց 4
Շամիրամ. պատկեր. Գէորգ Զուրար . . . 8
Յաղթական կոյսը *** 20
Հանճար. Մ Ենգիբարեան 32
Տէր Գաբրիէլ Պատկանեանց. Երուանդ Շահազիզ . . 33
Միրէյօ. Պրովանսական քերթուած, ֆրանս. թարգմ. Արշակ Զօպանեան 53
Արևելեան խնդիր. (փոխ.) Գիւտ ա. ք. Աղանեանց . 67
Ամերիկայի հայերը. Մ. Պէրպէրեան . . . 74

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Յոգնածութեան դէմ. օր. Նուարդ Աղանեանց . . 83

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Նամակ կ. Պոլսից. Հայրունի 85

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† Պերճ Պոշեանց։ — † Սմբատ Շահազիզեանց։ — Կովկասեան Փոխարքայութեան վերացումը։—Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւն։ — «Աղբիւրի» 25ամեակ։—Բագուի Հայոց Կուլտուրական միութեան ճիւղեր գաւառներում։—Էջմիածնի Ճեմարանի վիճակը։—Զուղայիցց։ — † Միքայէլ Թամամշեանց։ —Սրձան Խաչատուր Աբովեանին։—Շիրվանզադէի 25 ամեակ։ Հայ ուսուցիչները դատարանում։—† Արփիար Արփիարեան։ — «Վէրք Հայաստանի»։—Հայոց թատրոն։—«Արարատի № 1։—Եղբ. Նազարեանների նուէրը։—Ծննդեանների դրամրկղ։—Մի բացատրութիւն։ 86
Խմբագրութեան պատասխաններ 91

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳԻՐՔ XLVII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՏ., 7.
1908

ՕԳՆԵՑԷՔ!

Արեւ բացուեց սարի ծէրին,
Հետն էլ գարուն վարդը ճեռին.
Բայց տխուր սիրտս չգտաւ մի լար,
Որ թշուառին երգէր «մի՛ լար»!

Քօր աշխարի պէս, շունգուրը քօրած,
Որբերի խաթեր դոնէ-դուռ ընկած,
Հայոց հին երգիչն հին երգ է երգում,
Որ թէ սիրում՝ էք Փրկիչն երկնքում;
Առէք Նրա Խաչն եւ մ'տէք աշխարհ,
Օգնեցէք որբին, այնքան վշտահար!
Աստուած բարաբեաթ տայ ձեր տուն-տեղին,
Ձեր կալին, հանդին, բաղին ու գեղին,
Ձեզ բարեսէր կեանք եւ ազնիւ աւիւն,—
Ասացէք, այս չէ՞ մեր անմ'ահութիւն!?—

Արեւ բացուեց սարի ծէրին,
Հետն էլ գարուն վարդը ճեռին.
Բայց տխուր սիրտս չգտաւ մի լար,
Որ թշուառին երգէր «մի՛ լար»!

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

25 դեկ. 1898 թ.

ԵԿԷՔ ՄԵՐ ՊԱՐՏՔԸ ԿԱՏԱՐԵՆՔ

Ներկայ խառնակ ժամանակում, մամուլի այս ազատութեան միջոցին մեզ հարկաւոր են գործիչներ և մենք որոնում ենք նոցա։

Զարմանալին այն է, որ որոնում ենք, բայց չենք գտնում, մինչդեռ մի շարք լաւագոյն գործիչներ իսպառ քաշուած են ապրում ասպարիզից, հայ հասարակութիւնից։

Օրինակի համար հէնց «Նոր-Դարի» խմբագիր պ. Սպանդար Սպանդարեանը, Գալիցինեան ըէժիմի այդ զոհը, որ տնով տեղով աւերուեց ու աքսորի մատնուեց. այսպիսի մի խոշոր ոյժ լռել է մի այնպիսի ժամանակ, երբ իսկական գործիչների սով է մեկանում. և արդարև որ հայաբնակ քաղաք էլ գնում ես՝ ամենից առաջ հարցնում են քեզ, թէ ինչու է լռել «Նոր-Դարի» խմբագիրը, հարցնում են, տրտնջում և հետն էլ...հայհոյում նրան։

Նոցա, որոնք մեր խմբագրութեան դիմումներ են, արել այս մտքով և առհասարակ հարցասէր հասարակութեան մօտակայքում և հեռաւոր վայրերում, մենք կարող ենք այսքանը միայն ասել, որ այս լռութիւնն ակամայ է և ունի իւր խորունկ պատճառները։ Գալիցինեան հալածանքը քայքայել է նորան թէ նիւթապէս և թէ բարոյապէս և ոչ ոք այնքան չի տանջուել, ինչպէս նա. ահա այս հանգամանքով ենք բացատրում մենք նրա լռութիւնը։

Ակամայից դատապարտուած լռութիւնը մեզ համար աւելի զգալի է նրա համար, որ հէնց այս տարի, դեկտեմբերի 20-ին լրանում է «Նոր-Դարի» 25-ամեակը, մի

թերթի, որը երկար տարիներ այնպիսի մի ուղի է մշակել և հերկել, որ ճշմարիտ հայութեան գոյութեան միակ փրկութեան ուղին է և որի՝ աճող և ապրող սերնդի վերայ արած ազդեցութիւնն այնքան զօրեղ է եղել, որ որևէ մի նոր հով կամ վարդապետութիւն, ինչքան էլ որ կռուելու լինին այդ ուղղութեան դէմ, վերջիվերջոյ, թէկուզ ակամայ, մնալու է նրա ազդեցութեան տակ։

Բուն ազգային-յառաջադիմական այս ուղղութեան օրգան «Նոր-Դարի» 25-ամեակի հետ, որքան մենք գիտենք, լրանում է նաև նորա հիմնադիր պ. Սպանդարեանի գրական-հրապարակախօսական գործունէութեան երեսունհինգամեակը։

Մենք այժմ դիտաւորութիւն չունինք և անկարող ենք այդքան երկարամեայ գործունէութեան մասին թէկուզ ամփոփ մի տեսութիւն տալ, բայց կարող ենք դէթ մի երկու գիծ առաջ բերել այդ գործունէութիւնից.—

«Նոր-Դարի» խմբագիրը իբրև հրապարակախօս բոլորովին ուրոյն տեղ է բռնում այդ ասպարիզում. մեր մամուլի ընթացքին երկար տարիներ հետևողը անշուշտ կտեսնէ, որ նա ոչ մի կոմպրոմիս չէ արել ոչ կուսակցութիւնների և ոչ էլ իւր ուղղութեան հետ և երբէք չէ թոյլ տուել իրան, էժան ժողովրդականութիւն ձեռք բերելու համար, հոսանքի հետ գնալ, ինչպէս այդ անում են շատ շատերը, այլ միշտ կռուել է հոսանքի դէմ, երբ այդ պահանջել է ազգի և եկեղեցու շահը. և շատ հաւանալի է մեզ համար, թէ ինչու այսօր մենք ում ասես գովեցինք, փառաբանեցինք, իսկ միմիայն նա է, որին ամենքս թէ հայհոյեցինք և թէ մոռացութեան տուինք։

Կարծեմ դեռ հասարակութիւնը չգիտէ, թէ «Մշակի» ամենօրեայ դարձնողը «Նոր-Դարի» խմբագիրն է եղած այն ժամանակ, երբ ինքը Արծրունին ուզում էր դադարեցնել «Մշակը»։ Իսկ երբ նա հեռացաւ «Մշակից»՝ այնուհետև պ. Սպանդարեանցը «Մեղուն» դարձրեց ամենօրեայ և «Մեղուին» այն տեղը հասցրեց, որ Արծրունին

առաջնորդողներով «Մեղուի» դադարումն էր խնդրում երկնքից, որովհետև արդէն հայոց ազգը խելագարուած էր համարում, քանի որ ամենքը «Մեղու» էին կարդում և «Մեղուով» յափշտակւում։ Սա փաստ է։ Այս ոգևորութիւնը և Սպանդարեանցի թէ խօսքի և թէ գրչի՝ մտքերի վերայ ունեցած ներգործութիւնը կարելի էր նկատել և այն հանգամանքից, որ Կովկասեան հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովին, 1882-ին, ուր հաւաքուած էին ամեն կողմից հայ ինտէլլիգենցիան և ուսուցիչները, նորա բանկէտին մասնակցող հարիւրաւոր ուսուցիչների և ուսուցչուհիների ներկայութեամբ, երբ Դօնդուկովի կենացը խմեցին, չնայելով նախագահ պ. Շահպարոնեանցի և ուսուցչական մասնաժողովի անդամների ջանքերին կենացի կարգը պահպանելու, անկարելի եղաւ խանգարել այն բանը, որ բոլորեքեան վերկացան և օվացիաներով ցոյցեր արին Սպանդարեանցին. այս մենք յիշում ենք իբրև ներկայ եղող ուսուցիչներից մինը։

Ո՞վ էր, որ Մելքիսեդեկ, Իզմիրլեան և Խապայեան եպիսկոպոսներին հրապարակ բերաւ ու կուում էր հոսանքի դէմ այն ժամանակ, երբ Արծրունին Մուրատեանին տիրացու էր անուանում և մինչև անգամ «տգեղ», իսկ Իզմիրլեանին խաւարամիտ պահպանողական։

Ո՞վ էր, որ պաշտպանում էր Հայոց թատրոնը և Ադամեանի տաղանդը և Հայոց թատրոնի համար ճանապարհ հարթում և ոգևորում այն ժամանակ, երբ Արծրունին Ադամեանի ոչնչութիւնն էր հռչակում «Մշակ»-ում և թատրոնի դէմ կուում։

Այս ամենը կարծում ենք մեզանից լաւ գիտեն շատ շատերը, բայց որովհետև նա հեռացել է ասպարիզից և տարիներ են անցել վրայից, մոռացութեան են տրուած։

Մենք կարծում ենք, որ «Նոր-Դարի» առաջիկայ 25-ամեակը և նրա խմբագրի 35 ամեայ հրապարակախօսական գործունէութիւնը ամենալաւ առիթն է, որ հայ հասարակութիւնը հրաւիրէ նրան նոր գործունէութեան

ասպարէզ։ Կարծում ենք, որ ինքը Սպանդարեանն էլ պիտի յիշէ այս ամենը և չկարծէ թէ այլևս ոչ մի պարտաւորութիւն չունի նա դէպի ազգը, մանաւանդ որ հրապարակի վերայ հրատապ ազգային խնդիրներ կան։

Առ այժմ մենք մեր ասելիքը վերջացրինք. այժմ խօսքը պատկանում է նրա զինակիցներին և նրա ուղղութեան համակրողներին, այն ուղղութեան, որ մի շկոլա է ստեղծել և որ ոչ մի արհեստական ճանապարհով ջնջել չէ կարելի. ահա այդ ուղղութեան հոգով ապրող հասարակութեան և կարող անձերին է ճիւում առիթից օգտուել և նրան հրապարակ կոչել, որպէսզի քանի այդ ոյժը գոյութիւն ունի, գործածենք նրան յօգուտ հայութեան և ոչ թէ սպասենք, որ վերանայ ասպարիզից և ապա՝ կորուստը ողբանք։

Վստահանում ենք ասել, որ եթէ մենք կուսակցական և նեղ անձնական հաշիւները մէկ կողմ դնենք և նայենք իբրև հայ հայութեան հրապարակի վրայ, պիտի տեսնենք, որ եթէ կայ մի հաստատութիւն, որի գոյութիւնը անհրաժեշտ է՝ և նրա կարիքն զգացւում ժողովրդի համար, առաջին տեղը բռնում է «Նոր-Դարը» իւր ուղղութեամբ. և եթէ կայ մի հրապարակախօս, որի յօբելեանի կատարումը չէ կարելի անուշադիր թողնել, առաջին տեղը անտարակոյս բռնում է «Նոր-Դարի» հիմնադիրը։

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՇԱՄԻՐԱՄ

(Պատկեր)

Գիշերը հասնում էր։

Բնութիւնը ցերեկուայ աշխատանքից յետոյ քուն էր մտնում. ոչինչ չէր խանգարում նրա քաղցր նիրհը. հանգիստ էր առնում քամին, որ երբեմն երբեմն միայն անցնելով երկար մուգ կանաչ սօսիների միջով, շոյում էր նրանց թերթիկները, կռացնում էր նրանց սրածայր կատարները և իսկոյն կորչում, անհետանում էր լուռ ու մունջ տարածութեան մէջ. հանգիստ էին առնում թռչնիկները, վերջ տալով իրենց ուրախ, անհոգ երգերին. հանգիստ էր առնում նոյն իսկ առուակը, որի կարկաչը այդ ընդհանուր խորհրդաւոր լռութեան մէջ դարձել էր աւելի մեղմ, աւելի ծոյլ...

Փերեզեայ երկնակամարում երևաց լուսնեակը և ձգելով վրայից արծաթափայլ քողը, սկսեց հանդարտ լողալ եթերի անհուն տարածութեան մէջ. լուսնի գալուստը ողջունեցին ոսկեայ աստղերը և ուրախ, ուրախ պզպզացին կապուտակում...

Անահիտի մեհեանի մարմարիոնեայ սանդուղքները սպիտակին էին տալիս լուսնի մեղմ փայլի տակ և իջնում էին ցած, մեծ գեղեցիկ պարտէզը, որի աւազոտ, դեղնագոյն ճեմելիքները անհետանում էին մութ խաւարի մէջ։

Լուռ էր պարտէզը և միայն շատրուանը թափում էր իւր խոշոր արծաթափայլ արցունքները տեղ տեղ բորբոսնած, կանաչած աւազանի մէջ։

Մեհեանի անկիւնի փոքրիկ պատուհանը լուսաւորուած էր. կամարակապ, տեղ տեղ ոսկեզօծ առաստաղից կախուած լապտերը սփռում էր իւր աղօտ, երերուն լոյսը և անուշահոտ ձէթի բուրմունքը տարածուել էր այդ փոքրիկ սենեկում, որ մեծ քրմապետի բնակարանն էր։

Լայն բազմոցի վերայ բազմած էր ինքը քրմապետը։ Երկարահասակ, չոր ու ցամաք. մօտ 70 տարեկան այդ մարդը պատկանում էր այն անհատների թուին, որոնք նոյն իսկ առաջին անգամից խորը տպաւորութիւն են թողնում դիտողի վերայ. նրա լայն, կլորակ ճակատը վերջանում էր խիտ յօնքերով, որոնց տակ փայլում էին սուր թափանցիկ աչքեր. այդ աչքերի հայեացքը միշտ մելամաղձոտ, միշտ տխուր էր. հանդարտ նայում էին նոքա և գեղեցիկ փորագրած պատերին և յատակի գոյնզգոյն տաշուած քարերին և բազմոցի մօտ մորթու վերայ նստած օրիորդին, որը առած իւր գլուխը ձեռների մէջ խուլ կերպով հեկեկում էր։

Երևում էր, որ ծերունի քրմապետի գլխով անցել էր շատ բան. կեանքը իւր առօրեայ երևոյթներով, իւր կարճատև երջանկութիւններով և անվերջ կսկիծով լաւ ծանօթ էր նրան. ամեն ինչ փորձել էր ծերունին և նրա լայն ճակատի խորը ներս ընկած խորշոմները կարող էին պատմել շատ անցքեր, շատ բաներ... Սենեկի լռութեան մէջ վերջին անգամ լսուեց օրիորդի խուլ խեղդուած հեծկլտանքը և քրմապետը, վեր կենալով բազմոցից, բացեց գունաւոր ապակիներով զարդարած պատուհանը. լուսնի արծաթափայլ շերտերը թափուեցին ներս և, ընկնելով օրիորդի վերայ, լուսաւորեցին նրա արտասուքներից թաց, մի քիչ ուռած սև աչքերը, նրա ճիշտ հայկական նուրբ գծագրած երեսը և մսալի կարմիր այդ բոպէին պինդ սեղմուած շրթունքները։

—Վեր կաց, Մայի... ես այժմ դիտեմ ամեն ինչ... լսիր ինձ... անմահ աստուածները պարգևել են խեղճ մարդկութեանը մի մեծ, սքանչելի պարգև. դա սէրն է. նա բե-

բում է իւր հետ և երջանկութիւն և կսկիծ միանգամայն. այդպէս է և վարդը. գեղեցիկ ծաղիկը ունի և փշեր. ով կամենում է վայելել վարդի անուշահոտ բուրմունքը, նա շատ անգամ ծակոտում է իւր ձեռը և ցաւ է զգում, արտաքուստ առողջ մրգի մէջ շատ անգամ բոյն է դրած լինում որդը... և ով գիտէ, կարելի է ամենաբաղդաւոր երջանիկ սէրն անգամ տանջանք ու ցաւ է սիրողի համար...

Ծերունին տարաւ իւր սպիտակ երկար մատներով ձեռը ճակատին, տրորեց և, ձգելով ուսից երկար ալեզարդ մազերի գանգուրները, շարունակեց.

—Դու սիրում ես, Մայի, և քո սէրը տանջում է քեզ, որովհետև փոխադարձ չէ այդ սէրը: Անմահ Աստղիկը վառել է միայն քո սիրտը և իւր նետով չէ վիրաւորել քո սիրեցեալի սիրտը...

—Ոչ... ոչ, սրբազան հայր, բացականչեց լալագին իշխանուհին, ոչ... ոչ... Արմէնը սիրում է...

—Ուրիշին... գիտեմ:

—Այո... Շամիրամին.. և ես... ես, իշխանի դուստրս, այնքան անբաղդ եմ, որ իբր մուրացկան պիտի հայցեմ Արմէնից նրա սէրը և պիտի գողանամ Շամիրամից այդ սէրը... ո՜հ, ես անզօր եմ, սրբազան հայր, և ահա, ծնկաչոք խնդրում եմ քեզանից օգնութիւն... դու կարող ես աղօթել անմահ աստուածներին և նրանք կդարձնեն Արմէնի սէրը Շամիրամից դէպի ինձ... օգնիր ինձ և ես խոստանում եմ զոհեր մատուցանել ամենակարող Անահիտին... ես կնուիրեմ նրան իմ ոսկեայ մանեակս... գիտես... այն որ հայրս բերեց Հրէաստանից... միայն օգնիր ինձ, օգնիր, աղաչում եմ քեզ...

—Վեր կաց, Մայի, անմահ աստուածների համար չը-կայ ոչինչ անկարելի... եկ վաղը մեհեանը ու աղօթիր և հզօր աստուածները կօգնեն քեզ...

Ծերունի քրմապետը կռացաւ, բարձրացրեց բարձի վերայից Մայի իշխանուհուն և երկուսը միասին դուրս եկան մեհեանից:

Արշալոյսը ծագում էր։ Արևելքում հորիզոնը ծածկուել էր նրա առաջին մեղմ կարմիր շերտերով, որոնց մէջ տեղ տեղ երևում էր արդէն երկնակամարի յստակ, ջինջ, ոսկեգոծ կապուտակը։

Մեհեանի մարմարիոնեայ սիւները ծառերի մուգ կանաչում աւելի էին սպիտակին տալիս և նրանց փաթաթուող խաղողի թերթիկների վերայ հազիւ նկատելի ցոլքով խաղում էին ծագող արևի առաջին, դեռ վախկոտ, երերուն ճառագայթները։

— Ես կրգամ, շշնչաց Մային և, ծածկելով գլուխը սպիտակ թափանցիկ քողով, մտաւ պարտէզի օձապտոյտ ճեմելիքներից մէկը։

Քրմապետը ոչինչ չ'պատասխանեց. նա, թեւերը խաչած կրծքին, կանգնած էր ժամանակից սրուած մարմարոնեայ սանդուղքների վերայ և անթարթ նայում էր ծագող արևին։

Նրա դէմքի արտայայտութիւնը մտածող և ծանրակշիռ էր և նրա նեղ, չորացած, անարիւն շրթունքները շշնչում էին առաւօտեան աղօթքի խօսքերը...

Եղեգնով և տուփերով ծածկուած գետի բարձրաւանդ ափը կազմում է Ա... լեռնաշղթայի եզերքը, որ, իջնելով ցած, վերջանում է փոքրիկ, կանաչազարդ զառիվայրով։

Այդ զառիվայրի փեշերից մի անգամից երևում է ամբողջ վետը իւր սառն արծաթեայ փայլով, մուգ կանաչ ափերով և օձապտոյտ հոսանքով։

Մի քանի նաւակներ կողքի ընկած են ափի աւազում և արևի ճառագայթների տակ սևին են տալիս իրենց շուռ եկած տախտակամածներով, նրանց ստուերում նստած են ձկնորսները և կրակի վերայ, եռոտանիից կախ տուած ամանի մէջ պատրաստում են իրենց կիսօրեայ ճաշը։

Վայրի բադերը լայն տարածել են իրենց թևերը օդի մէջ և, թռչելով գետի միւս ափը, իջնում են եղեգնի մէջ, իրենց ընները։

Օդը անշարժ է և ողողուած գետի ջրի կապդուրիչ թարմութեամբ։ Կիսօրեայ արևը շեշտակի ձգում է իւր ճառագայթները գետնին և ոսկեփայլ ցոլքերով անդրադառնում է գետի ջրերում և պզպզուն փայլով խաղում է կանաչ եղեգնի սրածայր թերթիկների, շուռ ընկած նաւակների և ձկնորսների արևառ, քամուց սևացած, կոշտացած երեսների, նրանց ծակծկոտած շորերի ծուէնների վերայ. այդ շորերի տակից տեղ տեղ երևումեն ձրկնորսների մազոտ, յաղթանդամ կուրծքերը, ամուր թիկունքները և երկաթեայ, կարծես ուռած մկանունքները։

Խարոյկի ծուխը կամաց, շեշտակի բարձրանում է վերև անշարժ օդում և նրա քուլաները երկար չեն ցրւում եթերքի տարածութեան մէջ։

Հեռուից, գետի միւս ափից, լսվում է տխուր, սրբատաճմլիկ երգի դլգլոցը. կարծես մէկը գանգատւում է անողոք բաղդից և այդ պարզ երգի մէջ պատմում է իւր չարչարանքը, կրած աղէտները, իւր սև օրերի սրտամաշ պատմութիւնը։ Իբրև հակապատկեր դրան երեխաների մի խումբ ուրախ, զուարթ լողանում է գետում և գոռում գոչիւնով թնդացնում է օդը. նրանցից մի քանիսը դուրս են գալիս ջրից, վազվզում են ափին և, խրուելով տաք աւազի մէջ, դէմ են տալիս արևի այրող ճառագայթներին իրենց մերկ, թաց մէջքերը և թիկունքները։

Փայտատները կարճ թաց շապիկները հագերին, մերկ, ցեխոտած ոտներով դուրս են բերում, հանումեն ջրից անտաշ գերաններ, հաստ տախտակներ և, հևալով, երկաթեայ շղթաները ուսերին, քարշում, տանում են վերև.

— «Հայ—հուշ», լսւում են անդադար նրանց խռպոտ աղաղակները։

— «Հայ—հուշ, կրկնում է խուլ արձագանքը։

Փայտատների մէջքերը աւելի և աւելի կռանում են, քրտինքը ծածկում է նրանց կիսամերկ մարմինը, ձեռքերի մկանունքները ուռչում են, երկաթեայ շղթան համարեա խրւում է նրանց արևառ ուսերի մսի մէջ և ծանր գերանները շարժւում են վերջապէս տեղից։

— «Հայ—հո՛ւյ», լսւում է այդ լծի տակ տնքող մարդկանց աղաղակը։

— «Հայ—հո՛ւյ կրկնում է տխուր արձագանքը...

Զառիվայրի ստորոտին երկու մեծ կռացած նոճիների տակ նստած է Շամիրամը. նրա թուխ երեսի գծագրութիւնը նուրբ է և գեղեցիկ. բարակ աղեղնաձև յօնքերի տակից նայում են երկու խոշոր սև աչքեր երկար խիտ արտևանունքներով. արծուի քթի նեղ ռնդները անդադար շարժւում են և ցոյց են տալիս օրիորդի հոգու ալէկոծութիւնը. փոքրիկ բերանի նեղ շրթունքների ծալքերում հազիւ հաղ նկատւում են կնճիռները. խօսելիս նա ցոյց է տալիս իւր սպիտակ մարգարտաշար ատամները. նրա ուսերին ցրիւ են եկել սև ծամերը և օղակաձև գանգուրներով պատել են նրա երկար փղոսկրեայ վիզը։

Նրա կողքին յենուած սօսենու բորբոսնած թփին կանգնած է Արմէնը. նրա արևառ երեսի խիտ յօնքերի տակից փայլող մի ներքին, սուր կրակով աչքերը, նրա ջղային շարժումները ակներև ցոյց են տալիս, որ տեղի ունեցած խօսակցութիւնը և ծանրակշիռ է և մօտ է երկու խօսակիցների սրտերին։

Երիտասարդը հանել է սաղաւարտը գլխից և անխնայ տրորում է նրա վերայի սպիտակ երկար փետուրները։

—Ինչու՞ ես ուրանում.. Մային քեզ սիրում է.. ո՛հ, ես գիտեմ այդ.. ինձ ամեն ինչ պատմեց վհուկ Սաթին... նա ջրի մէջ ցոյց տուեց քո և Մայիի պատկերը.. այո... նա սիրում է քեզ և դու վերջին ժամանակներս փախչում ես ինձնից...

— Երդւում եմ անմահ աստուածներով, սկսեց Արմէնը, դնելով ձեռը կրծքին..

— Ոչ... ոչ... մի սպիր և ունայն, լզուր մի երդուիր աստուածների անունով.. առաջ դու միշտ որոնում էիր ինձ, ցանկանում էիր տեսնել ինձ, գալիս էիր մեհեանները մեծ տօներին, յաճախում էիր մեր պարերը, իսկ վերջերը.. դու.. դու փախչում ես ինձնից... քո սէրը սառել է.. ինչու.. ասա, Արմէն... ինչու...

Այդ «ինչու»ն այնքան պարզ էր և միանգամայն այնքան սրտառուչ, որ Արմէնը մի սուր ցաւ զգաց ամբողջ մարմնում, ցնցուեց և, առնելով Շամիրամի փոքրիկ, փափուկ ձեռները իւր կոշտացած ձեռների մէջ, արտասանեց վրդովուած ձայնով.

— Լսիր, իմ աստղիկս.. ես երբէք դադարած չեմ քեզ սիրելուց... երբէք մի ուրիշ աղջկայ պատկերը և գեղեցկութիւնը չէ հրապուրել ինձ.. ես քոնն եմ, Շամիրամ, քոնն եմ վաղուց, բայց...

Եւ նրա ձայնը յանկարծ կտրուեց.

— Բայց... ինչ է պատահել... ասա... ասա ինձ, ստիպում էր Շամիրամը, նայելով ուղղակի Արմէնի աչքերին.

— Ինձ հարկադրում են դառնալ ուրիշի ամուսինը, շշնչաց երիտասարդը բոպէական լռութիւնից յետոյ.

— Հարկադրում են... հա.. հա.. հա.. լսուեց Շամիրամի ջղային ծիծաղը, հարկադրում են... և ով կարող է հարկադրել քեզ, հարիւրապետիդ...

— Մեծ քրմապետը...

Անախորժ ծանր լռութիւնը տիրեց նոճիների տակ. Շամիրամը լուռ էր. նա լայն բացած, շաշ աչքերով նայում էր Արմէնին. նրա երեսի գոյնը գնացել էր. սարսուռը անցնում էր նրա մարմնով և նեղ շրթունքները ցնցողաբար դողում էին.

— Մեծ քրմապետը, շշնչաց նա վերջապէս և, թողնելով Արմէնի ձեռը, կռացած նստաւ խոտերի մէջ։

—Բայց ես կմնամ քեզ հաւատարիմ, իմ նազելիս, արտասանեց Արմէնը և կամեցաւ սեղմել Շամիրամի գլուխը իւր կրծքին, հաւատա... ինձ..

— Ոչ.. ոչ, հազիւ լսելի ձայնով արտասանեց Շամիրամը... քրմապետը... այո... նա... միայն նա... կարող է։

Եւ այդ բոպէին նա արձակեց մի այնպիսի սուր ճիչ, որ գետի ափում մինչև անգամ լսեցին այդ աղիողորմ, այդ մաշուած, տանջուած սրտում կուտակուած զայրոյթի, յուսահատութեան և անզօրութեան պոռթկումը։ գետից փչեց քամին։ նա հետզհետէ սաստկանում էր հօրիզոնը սկսեց մթնել. սև արճճային ամպերը կուտակուեցին Ա... լեռնաշղթայի գագաթին. մօտակայ ծառերի խշշոցը խառնւում էր ամպերի խուլ որոտման հետ. անձրևի խոշոր կաթիլները ընկան վաղուց ծարաւած հողի վերայ. երկու ագռաւներ տխուր կռաւելով թռան անցան նոճիներով վրայով...

— Մարեց իմ արևը... Գրողը տանում է ինձ, կձնրողացաւ միայն պինդ սեղմած ատամների միջից արտասանել Շամիրամը և ուշաթափ փռուեցաւ թաց խոտերի վերայ...

—

Վարդավառի տօնն էր։

Անահիտի, այդ պտղաբերութեան, երկրագործութեան հզօր աստուածուհու մեծ տօնը։

Կռապաշտ Հայաստանը քանի օր առաջ արդէն պատրաստութիւն էր տեսնում այդ նուիրական օրուայ համար։ Ջերմեռանդ ժողովուրդը մանաւանդ այս տարի կամենում էր կարելւոյն չափ փառաւոր և շքեղ դարձնել Վարդավառի օրը։ Հզօր Անահիտը բարկացել էր ժողովրդի վերայ և ի նշան իւր ցասման կապել էր անձրևը. դաշտերը, հովիտները դեղնել, չորացել էին, չոր ու ցամաք հողը ճեղքուել էր, տեղ տեղ բացուել և կարծես ցոյց էր տալիս իւր վէրքերը, իւր ցաւը. հունձն ու կալը չկարողացան տալ անգամ ցորենի սերմացուն. քաղցը իւր սոսկալի հետևանքներով սպառնում էր մօտ ապագայում խեղճ ժողովրդին. երկնքում երևացին չարագուշակ նշաններ և խելքը կորցրած ժողովուրդը թափում էր իւր վեր-

ջին ճիգը և աշխատում էր զոհերով, նուիրատուութեամբ և աղօթքով Անահիտի սիրտը առնել, իջեցնել նրա բարկութիւնը և զայրոյթը։

Թառնիճաղանճ ամբոխը վաղ առաւօտեան հաւաքուել էր Անահիտի մեհեանը և տեղի սակաւութեան պատճառով լցուել էր պարտիզի ճեմելիքներում, խռնուել էր աւազանի մօտ, բռնել էր բոլոր նստարանները և պարապ տեղերը։

Մեծ քրմապետը քրմերի հետ միասին, այսօր պիտի հանէր մեհեանից աստուածուհու անդրին և թափօրով պիտի բերէր պարտիզի գլխաւոր մուտքի մօտ և այնտեղ, բացօթեայ պիտի կատարուէր ընդհանուր մաղթանքը։ Ժողովուրդը անհամբեր սպասում էր թափօրի երևալուն։ Ամենքի ձեռին կային սպիտակ և կարմիր, վարդերից հիւսուած պսակներ, փունջեր. նրանցով ժողովուրդը պիտի զարդարէր Անահիտին։

— Կրկին անամպ է երկինքը, դարձաւ ժողովրդից մէկը իւր դրացիին... Կրկին երևի անձրևի երես տեսնելու չենք..

— Հզօր է մեծ և անմահ Անահիտը և եթէ կամենայ այս րոպէիս ծովեր կթափէ Հայաստանի խանձուած դաշտերը, պատասխանեց դրացին և նայեց երկնքին։

— Ում արդեօք կտայ այսօր քրմապետը պսակը և ով կոյսերից կդառնայ Անահիտի քրմուհին, հարցրեց մի նորահաս օրիորդ իւր ընկերուհուց։

— Այդ սրբազան գաղտնիք է և յայտնի է միայն մեծ քրմապետին, պատասխանեց ընկերուհին.

— Ես զոնէ չէի կամենալ արժանանալ այդ փառքին, ծիծաղով նկատեց օրիորդը, մնալ միշտ կոյս և ամբողջ կեանքը անցկացնել մեհեանի չորս պատերի մէջ... ոչ... ոչ...

— Իհարկէ... ով կկամենայ... կեանքը այնքան գեղեցիկ է և հրապուրիչ... պէտք է ապրել և լիովին վայելել կեանքի բարիքները, նկատեց ընկերուհին և նրա Լաչքերը սկսեցին աւելի ևս ցոլալ։

— Այս կտորը որտեղից առար, հարցնում էր մի միջահասակ կին, դիտելով իր հարևանի թաւշեայ շղարշը։

— Հրէայ վաճառականից... Նա բերել էր և թանկագին օղեր, բայց ամուսինս չառաւ, դժգոհ ձայնով պատասխանեց հարուստ, շքեղ հագնուած կինը։

— Թափորը... Թափորը, լսուեց այդ բոպէին ամէն կողմից։

Մի ակնթարթում խորին լռութիւնը տիրեց ամենուրեք. ջերմեռանդ ամբոխը, գլխաբաց, ծնկաչոք, անթարթ նայում էր այն կողմը, ուր սպիտակ հագնուած քրմերի ուսերին մեղմ տատանւում էր Անահիտի ոսկեզօծ անդրին. հազարաւոր աչքեր մեխուել էին այդ փոքրիկ ոսկեզօծ անդրիին, հազարաւոր ձեռներ ջերմեռանդ տարածուել էին դէպի նա, որից կախու�ունէր ժողովրդի կեանքը, նրա չարն ու բարին, նրա ապրուստը. հազարաւոր շրթունքներ արտասանում էին աղօթքի և պաղատանքի կցկտուր խօսքերը. իսկ նա, այդ փոքրիկ ոսկեզօծ անդրին, խոժոռ դէմքով, դանդաղ շարունակում էր իր փառաւոր ուղին և մեղմ օրօրւում էր երիտասարդ քրմերի ուսերի վերայ. արևի ճառագայթները ընկնում էին Անահիտի ոսկի անդրիի վերայ և վերջինը ցոլում էր պսպղուն, փայլուն ցոլքերով. այդ ցոլքը, տատանուելով այս ու այն կողմը կարծես մեծանում էր, փուում էր շուրջ, ողողում էր ծնկաչոք աղօթող ժողովուրդը, ամբողջ պարտէզը, մօտակայ դաշտերը, արար աշխարհը... Եւ ամեն մէկը բաղկատարած ամբոխից կարծես հաղորդակից էր լինում այդ չրբազան ցոլքին, այդ անաւոր հրաշքին, որ ահա ակներև կատարւում է ժողովրդի աչքերի առաջ. ջերմեռանդութեամբ լցուած սրտերը մի ինչ որ կրօնական զառանցանքի մէջ պայթեցին և օդը թնդաց բերկրալից աղաղակներով...

Իսկ ոսկեզօծ անդրին, մեղմ օրօրուելով, շարունակում էր իր ուղին...

Թափորը վերջապէս կանգ առաւ. քրմերը տեղաւո-

ըեցին անդրին մի բարձր քարտաշ խորանի վերայ, որի առաջ ոսկեայ եռոտանիներում վառուում էր անշէջ կրակը. հոտաւէտ փոշու ծուխը թանձր քուլաներով բարձրանում էր վերև անշարժ օդի մէջ և կարծես թափանցիկ շղարշով պատում էր Անահիտի խոժոռ, լուրջ, անքննին դէմքը։

Հեռուից լսուեց քրմերի և քրմուհիների սրբազան երգերի մեղեդին։ Ժողովուրդը դեռին խոնարհուեց և ամենքը մեծ քրմապետից ջոկ ծածկեցին իրենց գլուխները։

Կատարուում էր ամենախորհրդաւոր արարողութիւնը և մահկանացուն իրաւունք չունէր տեսնել այդ բոպէին Անահիտի սրբազան դէմքը և իւր շնչով պղծել անարատ անշէջ կրակը։

Հզօր աստուածուհին ընտրում էր իրեն քրմուհի և պիտի յայտնէր նրա անունը քրմապետին։

Երկար տիրեց այդ խորհրդաւոր լռութիւնը. բոպէները դարձան ժամեր։

Սրբազան երգը դադարեց։

— Անմահ աստուածուհին ընտրեց իրեն քրմուհի, լսուեց քրմապետի դողդոջուն ձայնը, եկ առաջ, Շամիրամ, դուստր Արայի և այս պսակով զարդարիր մեծ աստուածուհու արձանը...

— Շամիրամ... Շամիրամ, խուլ կերպով տարածուեց ամբոխի մէջ և առաջ եկաւ գլխիկոր Շամիրամը. մեռելային սպիտակութիւնը ծածկել էր նրա երեսը. լայն բացուած աչքերով նա նայեց իւր շուրջը, կամենալով կարծես գտնել, տեսնել այդ դեռին խոնարհուած ամբոխի մէջ մէկին, որ կարողանար օգնել նրան. բայց ամբոխը անշարժ էր և լուռ. դողոջուն, անհաստատ քայլերով մօտեցաւ Շամիրամը քրմապետին, մեքենայաբար առաւ նրա ձեռից սպիտակ վարդերից հիւսուած պսակը և նոյնպէս գլխիկոր մօտեցաւ խորանին։

Արևի ճառագայթները ուղղակի զարկում էին արձանի

երեսին և անտանելի էր նայել այդ ոսկու փայլին, այդ ամենուրէք սփռուող ցոլքին։

Շամիրամը բարձրացրեց իւր գլուխը. ոսկի, երերուն փայլը մի րոպէ հարկադրեց նրան փակել իւր աչքերը։

Անցաւ մի քանի րոպէ։

Շամիրամը բացեց իւր աչքերը և ուղղակի նայեց Անահիտի երեսին։

Աստուածուհին կարծես կենդանացել էր։

Շամիրամը տեսաւ, ակնյայտնի տեսաւ, ինչպէս անդրիի նեղ շրթունքները շարժուեցին և ծռուեցին ջրդաձգական շարժումներից։

Անդրին, անշունչ անդրին ժպտում էր մի կծու հեգնական ժպտով...

Մի սուր ցաւ զգայ Շամիրամը իւր կրծքում, անօգնական նայեց նա մթնող աչքերով իւր շուրջը, նայեց գետին տարածուած ամբոխին և, տանելով իւր սառն ձեռը սրտին, ցնցուեց ամբողջ մարմնով և փռուեց գետին...

Նրա անշունչ դիակի մօտ ընկած էին թառամած վարդերը...

Գ. Զուբար

1906

Ն. Նախիջևան։

ՅԱՂԹԱԿԱՆ ԿՈՅՍԸ

Ա.

Իշխան մը կայ հարուստ, հզօր թագակիր,
Կը սասանին ոտքին տակ հողն ու երկիր.
Աչքէն զայրոյթ դէմքէն սարսափ կը ցայտի,
Սրտէն միայն անգութ հրաման կը ծընի։
Դաժան է նա կաշկանդած է ոյզ երկիր,
Իւր գերիներ կը տառապին վրշտակիր.
Անողոք է, ծրծէ արիւն անխնայ,
Իւր ոսկի գահ սրատաստքով կը լուայ։
Որչափ սրներ նա կործանեց հիմնովին,
Որչափ քաջեր նա զոհ բերաւ իւր սրրին.
Ուր որ երթայ, անդ գերեզման կը բացուի,
Գարշապարէն կը ցայտի մահ սոսկալի։
Անարդար է և պղծութեամբ սիրար լի,
Հրամանն անպարծ, որմէ երկիր կը սարսի.
«Ուրտեղ գտնէք աղջիկ՝ լուսնի պէս սիրուն,
Բերէք իմ քով, բերէք պալատս զարդարուն»։
Այդ երկրին մէջ կայ մի ազնիւ ընտանիք,
Պատուով հարուստ, անկեղծ սիրով երջանիկ.
Անդ կը շողայ պարկեշտութիւն, շնորհք, յարգ,
Իւր ժպիտով Աստուած օրհնած է այդ յարկ։
Ընտանեաց հայրն բոլորի յոյսն է անդին,
Եւ հնազանդ՝ միշտ ահաւոր իշխանին.
Մայրը չքնաղ պերճ թագուհի իւր տան մէջ՝
Զաւակներուն կուտայ նա միշտ սէր անշէջ։

Սակայն այս տան զարդն է պայծառ ու շրքեղ
Աղջիկ մ՚կարծես ծրնած երկնէն կապտադեղ.
Հոգին ամբիծ, աչքերն աստղիկ, վարդ երես,
Ձայնը քնքուշ ջինջ վտակի երգին պէս։
Առաւօտեան երբ կը դիտէ նա երկին,
Այգուն վարդեր այտերուն մէջ կը ծաղկին.
Եւ իւր ժամեր ափսոյն առջի նրշուլէն
Հիւսուած, խուրծ խուրծ կը փրփրին վար ուսերէն։
Անոր-Քուրի՛կ-կը կոչէ պերճն արշալոյս,
Անոր տեսքէն տէն հոգի կ՚առնէ յոյս.
Քաղաքին մէջ հրրեշտակ մ՚է նա չքնաղ
Եւ պաշտպանող որբին, խեղճին անսքաղ։
Լրսեց իշխանն աղջկան համբաւ պանծալի,
Մոայլ իւր սիրտ նոր տարփանքով կ՚արծարծի.
«Պէտք է բերէ՛ք, շո՛ւտ, այդ աղջիկն դահիս տակ,
Անոր այտերն մարեն թերևս սէրս անյաղ։
Մեծամեծներն անոր հօրը քովն եկան,
Ոսկի, գոհար ընծայ բերին աղջրկան.
«Փափուկ գոտերդ մեր քաջ իշխանն է կարօտ,
Հրամանն է, տանենք անոր իրեն մօտ»։
«Հեռու ինծմէ, գոչեց աղջիկն զայրագին,
Թող արժգունին ծեր նուէրներ թանկագին.
Սև իշխանին չեմ տար սէրս աննրման,
Մեծ սիրոյ մը չի վայելեր այդպէս բան
Ի՞նչ պէտք ինձի իրեն փառքերն յաղթութիւն
Երբ գիշեր է իր սիրտ, հոգին դառն թոյն.
Կը զարհուրիմ իւր աչերէն նուազկոտ,
Թող չը դպչին ինձ իւր ձեռքերն արիւնոտ։
Աւերակաց մուխով սևցած է իւր թագ,
Թող գահակից լինի իրեն կին վայրագ.
Թող փերիներն հրաւիրէ շուրջ գահին,
Հէք տատրակը, ո՜հ, մի մատնէք չար բրբին։

Բ.

Կատղեցաւ իշխանն, դազան է վայրագ,

Բերանն վրիրահոս, դէմքն այլագունակ.
Զի հանդուրժեր սիրտն, կը ժայթքէ լեղի,
Կը փշրէ ցասմամբ գոհարներն թագի։
Ինքն իշխան հզօր և տէր բոլորին
Կրնա՞ն իսկ մերժել իւր հրաման չնչին,
Կրնա՞ն չպագնել իւր ոտքին սև հող.
Նա ամբողջ երկիրն կը հանէ ի դող։
Բայց ահաւասիկ աղջիկ մը ակար,
Կը ժպրհի դինքը կոչել անտրպար.
Կ'անարգէ իւր գահ, իւր փառքն ու իւր սէր,
«Վատ դաղան է նա», կ'ասէ անվեհեր։
Կը գոռայ իշխանն և ձայնն ահռելի
Սարսափ կը ծրգէ ամէն ցած սրտի.
«Ելէ՛ք, զինուորնե՛ր, կապեցէ՛ք սուսեր,
Պատժեցէ՛ք բոլորն, պատի՜ժ մգհարեր»։
Սիրուն ասպետներն դրլխահակ կեցած
Կը լրսեն հրաման սասսիկ ու անդարձ.
«Պիտի կործանէք անոնց տունն ամբողջ,
Մ'իայն այն աղջիկն կը բերէք ինձ ողջ։
Կ'երթան զինուորներ մրռայլ գիշերին
Հոյակապ, հոխ տան կը պատեն չորս դին.
Սուրերու շաչիւն կը սփռէ սարսափ,
Նախճիր կը գործէ ներտեւ տարափ։
Եւ ահա կրակն ցայտեց կարմրագոյն
Վիշապի նման պաշարեց խեղճ տուն,
Ճաչելով կ'ընկնին սիւներն ու գերան,
Անգութ զինուորներն հրպարտ կը խնդան։
Վիրաւոր ընկաւ մայրն աղջկան առաջ.
Կրրակն ալ խեղդեց իւր վերջին հառաչ.
«Մայրի՛կ», կը կանչեն մանուկներն սիրուն,
Արեան տաք հեղեղ ողողեց սև անիւն։
Ծուխը բարդ ու բարդ կը սուրայ երկին,
Հողմերն հիւսիսի կը փչեն ուժգին,
Հրդեհն աւելի կը ցայտէ կայծակ,

Ողբերն աւելի կուտան արձագանգ։
Փառաշուք այն տունն դարձաւ աւերակ,
Դիտապատ բնկան մայրերն ու զաւակ.
Ոչ ոքին դթաց իշխանին վատ սուր
Ոչ ոքին խղճաց անոնց վատած հուր։
Գերի՛ բռնեցին հայրը սրդասատուեր,
Զթողին գոնէ ապէտն իւր տեսնէր.
Բայց ո՞ւր է արդեօք աղջիկն իւր շքեղ.
Ոչ մէկը կրցաւ դտնել անոր տեղ։
Հայրը մուրթ բանտը ծդին անխնայ,
Ձեռքերուն դարկին պողպատէ շղթայ,
Եւ ան, զոր Աստուած կը սիրէր այնքան,
Մարդիկ սև բանտին արժանի դտան։
«Ո՞հ, խնդրե՞մ, ինծ ալ այրեցէք մէկէն
Դո՞ւք, որ այրեցիք տունս հոյաշէն.
Ապրե՞լ, երբ մեռաւ ընտանիքս անգին,
Նրաւոր ճրագ մ՚եմ անոր դամբանին։
Ո՞ւր էիր արդեօք, ո՛վ մահ փրկարար,
Ի՞նծ դէպի երկինք ինչո՞ւ չտարար.
Արե՛ւ, որ աղէտս անհոտ դիտեցիր,
Ալ ի՞նչպէս նայիմ երեսդ ոսկեծիր։
Կ՚ողբայ թշուառ հայրն, բայց անդութ բոլոր,
Անհուն տանջանքներ կուտան ամէն օր.
Փետտեցին մազերն, փորձեցին զոյգ աչք,
Ընտանեաց սուրբ հայրն եղաւ անսրդանք։
Կը վիսայ իշխանն, և ծայնն է դժխեմ,
«Ես այսպէս ահա վրէժ կը լուծեմ.
Ոչ ոք յանդգնի ատել իմ անուն,
Բուերու բընիկ կը դարձնեմ իւր տուն»։

Գ.

Մուրթ ծորին մէջ ո՞վ է արդեօք
Կը թափառի այսպէս մինակ,
Կը թաչի զինչ սատրակ անոք,
Մխուած կուրծքին փայլուն սրլաք։

Աղջիկ մ'է սա դէմքն լուսաղգեաց
Կ'անցնի՞ արագ ոտքերն բոբիկ,
Ինչպէս թրփիկ բոցէն վառուած
Խլած գետնէն ուժգին մրրիկ։
«Եկո՛ւր մեր քով, մենք անվեհեր,
Քեզ կը պահենք», կ'ըսեն կաղնիք.
«Մի՛ երկնչիր, գոչեն լեռներ,
Մենք քեզ պաշտպան ենք սիրով լիք»։
Բայց նա կ'ողբայ միշտ սրբատաղող,
Կուլան իւր ձեռ սիւքն ու վրտակ
Մեծ ընտանեացն միակ լացող,
Պայծա՞ռ է նա ինչպէս հրեշտակ։
Նա կը դիտէ լեռնէն ուժգոյն
Հայրական տունն՝ մութ աւերակ,
Մայրիկն ընկած կուրծքին դաշոյն,
Դառն տղէտին զարդն սևորակ։
Կը բարձրանայ դեռ մուխը վեր
Խեղճ ընտանեաց շունչն է մոլար,
Մարդն ու պտրտէղն, այդիքն աւեր։
Վայրագութեան պատկեր խաւար։
Ո՜հ, կը դիտէ աղջիկն այսպէս,
Կը կայլակէ սիրտ վէտ վէտ.
«Այս բոլորն ալ ե՛ս ըրի, ե՛ս,
Իմ պատճառովս այսքան տղէտ։
Սպաննեցի տունս համօրէն
Միայն չնչին պատուոյս համար.
Աղատեցի հոգիս բոցէն,
Կրակի տուի պարտէզն ու ծառ։
Մայրս, որ ինձ գրկէր իւր ծոց,
Գրկեց այժմ մահն դառնալիր.
Եւ այն արեամբ, որ ինձ սընոյց
Իւր ճերմակ կուրծք ներկեց կարմիր։
Սարսափեցայ դադանէն վատ,
Իւր ժանիքէն ինձ փրկեցի

Բայց ո՜հ, հայրիկս քաղցր, հարազատ
Զրդեցի վիհն մրոայլ բանտի։

Դ.

Սև դիշեր մ'է մութ են ծոր, լեռ,
Թուխպերն խեղդած են ասողեր.
Մեղմիկ երգող չկայ մի ծայն,
Ողջ բնութիւնն է դամբան։
Փառած է կոյսն կարմիր ժայռին,
Սիրտը սեղմած պաղ քարին,
Քարն իսկ ջեռնու վշտէն անբաւ,
Որչա՜փ սատիկ է իւր ցաւ։
Եւ նրւաղած վշտէն անհուն
Ծունր դրրաւ դողդոջուն,
Պարզեց ձեռքերն դէպի երկին
Մռայլ՝ նրման իւր սրտին։
—Վա՜յ—մր թռաւ բերնէն զինչ նեաս.
Ձեղքեց ամպեր սրդաւէտ.
Վեհ մի աղօթք բղխեց իւր վերք
Հնչեց համայն տիեզերք։
«Աստուած ահաւոր, որ բազմած երկին
Կը սարսես աշխարհն միակ ակնարկով,
Ո՜հ, նայէ՛ մէկ ինձ, էակիս չնչին,
Որու սրտին թոյն անհուն է քան ծով։
Նայէ մէկ ինձ Տէ՛ր, այս ժայռին կատար
Քու քովդ եմ եկած, խնդրել գթէդ մաս.
Դիտէ՛ անհունէն, ո՜հ, թշուառս անճար,
Եւ լսէ՛ ողբերս, դո՛ւն ով պի՛տ ողբաս։
Կո՜յս մ'եմ տարաբախտ պատուոյս պատճառաւ
Որ պարգևեցեր դու ինձ սրբալի,
Մղեցի կրուիս, պահեցի նա լաւ,
Բայց անձէ վրսեմ բաներ կորուցի։
Կորուցի մայրիկ՝ պատկեր քո սիրոյն,
Եւ հայրիկս անուշ քո վեհ փոխանորդ.
Աստուած, ալ չունիմ հայրական սուրբ տուն,

Աւերակաց զաւակն եմ թշուառ ու խորդ։
Անողոք իշխանն վիրաւոր դառներես,
Կորզեց այդ բոլորն, արդ կը խնդրեմ քեզ,
Քու ձեռքով անոնք ինձի դարձնես,
Զի զօրաւոր ես, քան իշխանն այն վէս։
Թէև վիշտն ու ցաւ, Աստուա՛ծ բարերար,
Մարմինս ու հոգիս կը լափեն անդադ.
Բայց խիղճս է հանգիստ և ատոր համար,
Կը խնդրեմ քեզմէ այսպէս համարձակ։
Կը պաղատեմ քեզ, սիրտս կը յուսայ
Կը ցրուես շնչովդ վշտերս դառնադոյն.
Արդարութեան մէջ հիմնած ես քո դահ։
Միթէ կը մերժե՞ս այժմ արդարութիւն»։

Ե.

Մինչ կոյսն այսպէս հեզ կ'աղօթէր,
Վսեմ Թրոիչ կ'առնէր ծայն
Կը ցայտէին աչքերն կայծեր,
Լոյս կուտային մթութեան։
Տիեզերքն յուզուած իւր աղօթքից
Կը ծայնակցէր քաղցրադին,
Բոլորն էին իւր ցաւակից,
Տիրոջ դուռը խնդրէին։
Կուսի մրռայլ սրտում յանկարծ
Ծագեց մի լոյս շողարձակ.
Ինչպէս գիշերն ամպով պատած,
Կը փողփողէ հիւսիսայդ։
Դառն վշտաց կապերն ամուր
Խորտակուեցան միառմի.
Եւ ճակատի ուչորող հուր
Մեղմեց զեփիւռն կենսալի։
Դիտեց երկին նա յուսավառ
Եւ աչքերէն կապուտակ
Առատ ցայտեց արցունք պայծառ
Մարեց որդին տաք կրրակ։

«Կ'արհամարհեմ իշխանն այն չար,
Նա չէ երկնի տէրն՝ իշխան.
Աստուածն ունիմ ես շողավառ
Իւր աչն ինձի միշտ պաշտպան։
«Պիտի փշրի՞ իւր գահն ոսկի,
Տիրէ իւր շուրջ սև սարսափ.
Ահաւոր է Աստուածն երկնի,
Չի՛ համբերեր նա այսչափ»։
Կը մրմնջէր ոգսպէս անմեղ
Հոգին երկին կը նախրէր,
Սեւ ժայռին հետ կարծես մէկտեղ
Կը սրբանար ջինջ եթեր։
Եւ տե՛ս, ահա երկինքն խաւար
Իրեն առջև ճեղքուեցաւ,
Մռայլ ամպերն սարսափահար
Փախան իսկոյն լեռներն սեաւ։
Ճառագայթ մը ցայտեց մէկէն,
Փայլեց երկին գեղեցիկ.
Հրեշտակ մ'ելաւ լուսի մէջէն
Ջինջ մայիսի պերճ ծաղիկ։
Նա մօտեցաւ աղջկանն արի,
Գրգուեց այտերն ոսկեման,
Ծրփիկ ծամերն նման շողի
Անոր ծամին խառնեցան։
Եւ աչքերէն ցոլաց կայծակ
Անոր աչքին մէջ վսեմ.
Դէմ առ դէմ են երկու հրեշտակ,
Մին երկնային, միւսն երկրէն։
«Քոյր իմ գեղեցիկ, լսա՛ հրեշտակ,
Ճամբեց ինձ քու մօտ Տէր Աստուած բարին,
Աղօթքէդ լսին սրտվրէք լուսաթագ,
Աստուած հառաչեց, և սարսեց երկին։
Կը սիրէ նա քեզ, պաշտպանդ է հզօր,
Իւր զօրութենէն կամ մը կուտայ քեզ.

Պիտ կրնաս անով պատժել յանցաւորն,
Եւ լուծել վրէժդ, վրէժ բոցակէզ։
Քեզ զէնք եմ բերած. ա՛ռ այս սուրն ու սէգ,
Սոքա սրրուած են Տիրոջ զայրութով.
Վա՜յ ոճրագործին, անոնց ուռած վէրը
Երկրնքի մէջ իսկ, չի բուժուր շուտով։
Կապէ՛ այս զէնքերն, հեծի՛ր երիվար,
Թշնամուդ պալատ դնա՛ սրարշաւ.
Թափէ անդ վրէժդ կայլակն հրավառ,
Քեզ հետ է երկինք, մի՛ վախնար բնաւ։
Սրլացաւ հրեշտակն, դոցուեցաւ երկին,
Վսեցին ամպերն բռնել իրենց տեղ.
Գրտաւ տիեզերքն իւր հանդիսան առջին,
Եւ նրնջեց կոյսը, սիրաը սիրազեղ.
Քնացա՜ւ խաղաղ. և երկինքն ու լեռ,
Կը դիտեն զնա յուզմամբ հոգեւոր.
Լուսին վայրկեան մը ճեղքեց սև ամպեր,
Գոնէ մէկ անգամ ան.անել դէմքն անոր։
Սև ժայռին կատար անուշ կը ննջէ,
Զեփիւռն իրեն շուրջ կը թռչի վէտ վէտ.
Կը պահէ զնա ամեն վատնդէ,
Անոր տաքուկ շունչ կը խառնէ իւր հետ։
Թռչնիկներն խմբով թառած իրեն քով
Կը դիտեն երեսն, աչերն լուսազեղ,
Որ այդուն մէկտեղ ժառերուն շուքով
Երգեն այդ կուսի, սէրն ու սիրան անմեղ։

Զ.

Ո՞վ է այդպէս արշաւանդը կ'ընթանայ,
Այդը ճակատին յօրիներ է թագուկ.
Լեռներն անոր շուտ կը բանան լայն նամբայ,
Կրսեն—մե՛զ ալ խնդրե՞նք, քեզ հետ տղատէ՞—
Կը սուրայ նա և հրեղէն իւր նժոյգ
Գետէն, վիհէն յորխորատրաբ կը ցատկէ,
Մարտի պատրաստ իւր քաջարի կուրծքն առոյգ,

Իւր խրխնջիւն ժայռերուն մէջ կը վանդէ։
Կոյս մ'է նա վեհ, զրահապա՞տ, ահռելի՞,
Սաղաւարտը՝ գլխին արփի կը շողայ.
Լանջապանակն՝ կուռ երկաթէ կը փայլի,
Կայծակնացայտ սրունապաններն են ոսկեայ։
Կոյս մ'է քնքուշ, բայց դիւցազն է քաջ ու վէս,
Արդար զայրութեն անոր տուած է թեւեր,
Գարդմանակէն ահաւոր է իւր երես,
Եւ դէնքերէն՝ իւր ակնարկն է մահաբեր։
Կողքին կապած կը շարժի սուրն սայրասուր,
Վրէժի թոյն կը կաթկրթի միշտ անկէ.
Բայց իւր բաղուկն ահաւոր է քան իւր թուրն.
Իւր զօրութեամբ ժայռերն անգամ կը ճեղքէ,
Նեղ ծորերէն անցաւ արագ, սրտահեծ,
Եւ հեռուէն տեսաւ իւր աւունն աւերակ.
Խոր հառաչ մը դէնքն ու զրահն դող հանեց,
«Աւերակնե՛ր, ծեզ պիտի տամ ես նոր կեանք»։
Դողաց քաղաքն, դիտեն անոր անմրուունչ,
Բոլոր սրտերն ընկճեց երկիւղն, վախն անբաւ.
Կոյսը հրզօր շրջեց արագ քաղքին շչուրջ,
Եւ իշխանի պալատին դէմ կանգ առաւ։
Իւր ակնարկէն կը սարսափի ամէն բան,
Աղջիկ չէ նա, դիւցազնուհի երկնային.
Սաղաւարտի տակէն ժամերն կը ժփան,
Ինչպէս առիւծ, երբ կը ցնցէ բաշն ուժգին...
Զայնի շեշտերն կարծաղանդեն սրբրնթաց
Ինչպէս վագրի մրռընչիւնը դառնագին
Երբոր իրմէ փոքրիկ ձագերն են խլած,
Վրէժ լուծել կը խնդրէ մութ գիշերին։
«Ելի՛ր, իշխա՛ն, յաղթականն է դէմդ եկած,
Լուծել քեզմէ այնչափ պատուոյ վրրէժներ;
Իշի՛ր զահէդ, որ արեան մէջ ես հիմնած,
Պիտի ցոչդնեմ քեզ իմ ցասդամ ֆահաբեր։
Դրրած գլուխդ անպատուութեան կարմիր թաղ

Սեւ հրամաններ բերնէդ կելնեն ննխրտիր.
Եկած է ժամն վառել հոգիդ դառնորակ
Այն բոցերով, որ այնչափ սիրտ այրեցիր։
Աստուած կարդեց զքեզ իշխան քաջարի,
Դու բոլորին հանդէպ եղար դաւանան,
Հայր էիր քու ժողովրդեան և ազգի,
Բայց զաւակներդ անպատուեցիր ամէն ժամ։
Արտա՛քս եկիր, ահա սուրով երկնառաք
Պիտի փշրեմ ես բռնութիւնն ու շղթայ։
Դարէ ի դար թող միշտ հնչէ արծաթանգ,
—Անօրէնին պատիժն Աստուած միշտ կուտայ»։—
Կը դուչէ կոյսն, կը կրկնէ նոյնն և երկին,
Զբահի ցոլքէն պարսի փայլն է նրաղ.
Կը դոփէ ձին և իւր կուրծքով ահագին,
Կուզէ փշրել խիւներն մարմար ու չքնաղ։
Ապարանի դռնէն ահա հէք, մրռա՛յլ,
Ելաւ իշխանն կորաքամակ և անծայն.
Այտն ու ճակատն ոճիրներով սեւափայլ,
—Անիրա՛ւն է—հնչեց քաղաքն միածայն։
Խոյացաւ կոյսն, քաշեց սուրը շողշողուն,
Շարժեց արագ, դրաւ կրկին իւր պատեան.
Ինչպէս արփին կ'ելնէ ամպէն սեւագոյն,
Եւ անոր տակ կը ծուծկուի նոյն վայրկեան։
Քանդակազարդ սեան քով ընկած է իշխանն,
Եւ չը թրռաւ բերնէն զղջման մէկ հնչիւն.
Ներկեց արեամբ մարմար քարն ու ապարան,
Որ պեսած է միշտ ոճիրներն իր անհուն։

Է.

Կոյսը շուտ թողուց այս ախուր պատկեր,
Իջաւ նրժոյգէն դնաց մութ բանտեր.
Խորտակեց դռներն ծեռքերով շուշան,
Նեռս սուրաց արագ, ո՜հ, ի՜նչ տեսարան,
Պառկած է իւր հայրն սև քարին վրայ,
Ձեռքերուն զարնուած պողպատե շղթայ.

Կուրծքը վիրաւոր, դէմքը դալկահար,
Ձայնը մահադոյժ, աչքերը խաւար։
Ընկաւ շուտ գետին, զէնքերու շառաչ
Հաղածեց իսկոյն բանտերու հառաչ.
Գրկեց հայրիկը, փարեցաւ կուրծքին,
Եւ ուժգոյն ճակատն քրսեց իւր պարին։
«Խնդրեմ, պատմէ՛ ինծ, հայրիկ սիրագին,
Ո՜հ, ի՞նչ տանջանքներ այստեղ քեզ տուին.
Ա՜խ, ի՞նչ էր արդեօք յանցանքդ սեւորակ,
Միթէ ոճի՞ր է պաշտպանել դաւակ։
Հա՛յր, դու ինծ համար այս բանտերն ընկար,
Այս կուրծքդ արիւնոտ եղաւ ինծ պատուար.
Ձկա՜ն սիրելիք, գնացի՞ն անյուշ,
Ուրիշ մէկ դատրիկ, և ես հայր Օմ՛անուշ։
Կը պաղնէ իւր հայրն, կ՚ողբայ խանդակաթ,
Եւ ղոյգ աչքերէն արցունք երկու կաթ
Հօր աչքերուն մէջ սահեցան մեղմիկ,
Բացուեցան աչքերն տեսաւ իւր աղջիկ։
Նայեցաւ անոր, հագած է ղրահներ,
Զինչ երկնէն իջած հոգի լուսահեր.
Անոր մէկ ժպիտն մոռցուց ամէն ցաւ,
Անոր տաք շնչէն նոր ուժ ըստացաւ։
Ձեռքերով անոր գրկեց խիստ յուզուած,
Համբուրեց դատրիկն, ողջեց Աստուած.
Եւ անոնց սրտի բերկրութիւնն անհուն
Բերկրութիւն սփռեց աշխարհին ողջոյն։

* *

ՀԱՆՃԱՐ

Հարտասան լեզուով մարդկանց հմայել,
Սուտ անշահասէր դրսից ձևանալ,
Բարոյականը խօսքով քարոզել,
Ձեռն ընկած աւանդ փողերը կուլ տալ,
Կեղծաւոր զθած, մօլի եսասէր,
Հակառակորդի կրունկից խփել,
Գլխում օդային ամրոցներ շինել,
Ուժը չ՚չափած կռիւ յորդորել,
Եւ ցնորամիտ, դաղարկ յոյսերով
Պուլեմնոտի դէմ փայտերով կռուել.
Հետևանքը ի՞նչ.—մի մեծ պատուհաս
Հայերիս օրհաս,
Բարքերի անկում
Երկրի քայքայումն
Արիւն և կրակ, աւեր և արիւն
Ահա արդիւնքը քո սին խօսքերուն·
Եւ այս բոլորը ազգասիրաբար,
Հարկ կատարել միայն քո հանճար։

Մ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ.

1 Օգոստ· 1907·

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ[1]

Գլուխ Ե.

«Ներսէսի լրտես» խօսքերը Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանի թեթև բերանով շուտով հռչակուում է քաղաքում և թշնամացնում Գաբրիէլի հետ և այն աղանեերից շատերին, որոնք թէև մի առանձին սէր էլ չունէին դէպի Պատկանեանց սարկաւագը, գոնէ, ատեցող, թշնամի էլ չէին նորան: Առհասարակ Նախիչևանի մեծամեծները չէին սիրում ենթարկուել իւրեանց հոգևոր իշխանաւորներին, դժկամակում էին, չէին ընդունում նոցա հեղինակութիւնը եկեղեցական գործերում, եկեղեցական գումարների հաշիւը չէին ուզում տալ և իրանց լիակատար տէր էին համարում թէ եկեղեցիների և թէ նոցա պատկանած գոյքերի: Այդ հանգամանքից առաջ էր գալիս անընդհատ կռիւ ու կռիւ առաջնորդների և նոցա մէջ, անընդհատ խռովութիւն էր ծագում քահանաների ձեռնադրութեան, մագիստրատի և քաղաքային գումի հոգևոր կառավարութեան գործերին խառնուելու, քաղաքագլխի առաջնորդների իշխանութիւն բանեցնելու վերաբերմամբ: Նոքա իւրեանց այդ ձգտումով և ուղղութեամբ ամբողջ 20 տարի մաքառել էին Յովսէփի դէմ, 10 տարի Եփրեմի և 15 տարի Յովհաննիսի. նոքա մինչև անգամ հաշտ չէին եղել բարեհոդի Պետրոս Մարկոսեանի հետ, նորանից ծածուկ յարաբերութեան մէջ մտնելով ռուս իշխանաւորների հետ, չենք խօսում արդէն այն մեծ նեղութիւնների մասին, որ տուել էին նոքա հանգուցեալին Սամարում գաղթականութեան ժամանակ: Այժմ էլ ահա հաստատուել էր նոր առաջնորդ, և նոքա պատրաստուում էին նոյնը անել, նոյն դիրքը բռնել և Ներսէսի վերաբերմամբ. և այդպիսի հանգամանքներում յանկարծ նոքա իմանում էն, որ իրանց մէջ կայ մէկը,

*) Լումայ 1907 № 3—4

որ նորա լրտեսն է, ուրեմն, և հաստատակութեան ու քաղաքի թշնամի։

Միմեանց յաջորդող դէպքերն էլ շատով այն բնաւորութիւնն են ընդունում, որ կարծես թէ դալիս են իրականացնելու նոցա ենթադրութիւնները Գաբրիէլի մասին և հաստատելու լուրը։ Երբոր Ներսէսը կարդում է առաջնորդ. ամեն տեղ թուղթ է ուղարկում և տեղեկութիւն խնդրում վիճակների մասին։ Մի այդպիսի թուղթ էլ դալիս է Նախիջևանի Հողևոր Կառավարութեան վերայ։ Տէր-Գաբրիէլեանը պատասխանում է, թէ քարտուղար չունենալու պատճառով, չի կարող ցանկացած տեղեկութիւններն ու հաշիւները հաղորդել, այն ինչ հէնց դոյն իսկ ժամանակները առաջնորդը մի թուղթ էր ստացել Տէր-Աստուածատրից, թէ նա 17 տարի ծրի քարտուղարութիւն է անում, բայց ամեն տարի տօնավաճառ է գնում Տէր-Գաբրիէլը, և խնդրում էր, որ իրան թոյլատրուի Մակարիա երթալու։ Ներսէսն այդ երկու միմեանց հակասող թղթերը ուղարկում է Գաբրիէլին, որ նա Խաչատուր Խռմաշեանի հետ խորհրդակցելով, իմաց տայ իրան գործի էութիւնը։ Տէր-Գաբրիէլը տեղեկանալով, որ Գաբրիէլը նշանակուած է իւր վերայ պատասխան, իսկոյն իմաց է տալիս նորա հակառակորդներին, որոնք և հաւաքուելով, աշխատում են ամեն տեսակ կռուեցնել նորան Ներսէսի հետ.—նոքա համոզում են նորան, որ նա չետ դարձնէ Ներսէսին Տէր-Գաբրիէլի մասին ուղարկուած թղթերը և ասէ, թէ ժամանակ չունիմ։ Գաբրիէլը ընկնում է մեծ նեղութեան մէջ, որովհետև մի կողմն էր հզօր իշխանութիւնը, միւս կողմը հաստատակութիւնը։ Այս առթիւ է լինում, որ Խաչատուր Խռմաշեանը, բան իւր սովորութեան, կրկնում է. «զարմանալի, զարմանալի, զարմանալի բան. մեր քաղաքացիք մեղադրում են, թէ առաջնորդներն ուտում են եկեղեցու փողերը, իսկ ինքեանք թէ եկեղեցիների, թէ առաջնորդատան և թէ աթոռատան դրամները ուտեցնում են մի տէրտէրի»։ Գաբրիէլը այս դժուարութիւնից դուրս գալու համար, հրաւիրում է Խռմաշեանին, Տէր-Գաբրիէլին, Տէր-Աստուածատրին և Կիրակոս աղա Արարատեանին և դոցա ստորագրութեամբ մի պատասխան է գրում Ներ-

ասէին, թէ, հիշդ է, Տէր-Աստուածատուրը 17 տարի ծրի ծառայում է կառավարութեան մէջ, բայց քարտուղարի անունը կրում է Կիրակոս աղա Արարատեանը և Տէր-Գաբրիէլը այդպէս է գրել, որ իրաւունք ստանայ Տէր-Աստուածատրին առանձին նշանակելու և յետոյ արդէն պահանջուած տեղեկութիւնները նորան գրել տալու։ Ներսէսն իրաւունք է տալիս Տէր-Աստուածատրին ասնավանառ երթալու, բայց տեղեկութիւնները գրելը յանձնում է Գաբրիէլին, որովհետև վատահ չէր նոցա վերայ։

Դոյն ժամանակները արդէն լրանում է Գաբրիէլի Նախիջևանում ուսուցչութիւն անելու երկրորդ տարին։ Աշակերտներից յառաջադէմները կամենում են և ռուսերէն սովորել, որովհետև թէև կար հին վարժարանի մէջ ռուս ուսուցիչ, բայց նոքա չէին ուզում յանախել նորա մօտ՝ լեզուն չհասկանալու պատճառով։ Գաբրիէլը, որ փոքր ինչ ռուսերէն ևս գիտէր, սկսում է ռուսերէն սովորեցնել մի 3—4 հոգու, որոնք և շատ հեշտութեամբ սովորում են, որովհետև ամէն բան մեկնում էր հայերէն և ամէն բան այդ միջոցով հասկանալի էր լինում։ Միւս աշակերտների ծնողները պահանջում են, որ իրանց որդիներին ևս ռուսերէն սովորեցնէ Գաբրիէլը, բայց նա մերժում է, ասելով, թէ առանց հասարակութեան կամքի չի կարող կատարել նոցա ցանկութիւնը, քանի որ իւր պայմանագրի մէջ չկար ռուսերէն սովորեցնելու խնդիրը։ Այն ժամանակ նոքա բողոքում են, և քաղաքի կառավարութիւնը կարգադրում է, որ ով որ կամենում է, որ իւր որդին ռուսերէն ևս սովորէ, պարտական է հատուցանել Պատկանեանցին 10—10 մանէթ։ Սորանից մեծ խռովութիւն ու ալմուշ է առաջանում, և խռովութիւն յարուցանողները լինում են նոքա, որոնք ուսումնարանի մէջ ոչ զաւակ ունէին, ոչ էլ բան էին հատուցանում, ինչպէս Վարդերես Հալաջեանը, Մրկրը Պօպովը, որոնք պնդում էին, որ Պատկանեանցը ռուսերէն չ՝սովորեցնէ։ Գաբրիէլն ինքն էլ շատ ցանկութիւն չունէր ռուսերէն սովորեցնելու, քանի որ ինքն էլ լաւ չ՝գիտէր, բայց պահանջում էին ծնողները, զգալով օգուտը։

Քաղաքի կառավարութիւնը խռովութիւնների առաջն

առնելու համար, միւս անգամ կարդացրում է, որ ով ուզում է ռուսերէն սովորել, թող երթայ ռուս վարժապետի մօտ, բայց աշակերտները չեն կամենում, որ չզրկուեն հայերէնից: Այդ ժամանակ հրաման է արձակուում, որ Գաբրիէլը մի օր հայերէն, միւս օրը ռուսերէն սովորեցնէ, բայց նա չի յօժարում, որովհետև այդ դէպքում նա կսխումն պիտի ունենար Տագանրոգի պետական ուսումնարանական վարչութիւնից: Գալիս է և Տագանրոգի գիմնազիոնի վերատեսուչը, փորձում է աշակերտների գիտութիւնը, գլուխը շարժում և գնում է: Գաբրիէլը, վերջապէս, որոշում է ռուսերէնը հայերէնի հետ խառը սովորեցնել ամենին, բայց սորանից էլ անբաւական և դժգոհ են մնում 10 մանէթ տուողները, ասելով, թէ ինչու աղքատների զաւակներն էլ, որ ոչինչ չեն տալիս, միևնոյնը պիտի սովորեն: Դպրոցը այս ու այսպիսի հանգամանքների մէջ շատ չի զարգանում, նամանաւանդ որ սովորութիւն էր եղել, որ տղայքը շուտով և անժամանակ թողնում էին ուսման գործը թերի և ընտրում էին իրանց համար առևտրական գործունէութիւն, որ մեծ շահ էր տալիս նոցա: Իսկ առևտուրն այդ ժամանակները շատ զարգացել էր Նախիջևանցւոց մէջ—ցորենի, բրդի, երկաթի առևտուր: Սկսում են Ռուսաստանի և ուրիշ տէրութիւնների զինուորական բանակների համար ձիերի երամակներ գնել զալմուխի, թաթարի և նոգայի անտապատներից և տանել Լեհաստան. սկսում են ոչխարի, եղերի և կովերի հօտեր գնել ոչ միայն մսի համար, այլ և բրդի, կաշուի, մորթու, ճարպի և իւղի համար, սկսում են Սիբիրի կողմերն երթալ և արդար իւղ բերել և տանել վաճառել Պոլիս, Իտալիա, Ցունաստան, Ֆրանսիա և Անգլիա: Երկու եղբայր Կարապետ և Խաչերեա Աւանեանք, որոնք կոչուում էին Մոլլայի տղայք, սկսում են կանեփի և վշի սերմ ցանել, որ շատ տարածուում է և մեծամեծ վաստակ հայթայթում այդ գործով պարապողներին:

Գաբրիէլը, իւր ասելով, թէև չունէր համալսարանական գիտութիւն, բայց անդադար կարդալով, ինքնուսութեամբ սովորելով, գրելով ու շարադրելով այնքան զարգացրել էր իւր միտքն ու հոգին, որ շատ հմտացել էր բարձր կրթութեան հա-

մար աշակերտների միաքը մշակելու և նախապատրաստելու արուեստի մէջ, ինչպէս ցոյց է տալիս Նալբանդեանցի օրինակը։ Ոակայն այս բոլորին շատ արդելք է լինում Նախիջևանցւոց խռովարար բնութիւնը, որ նոքա ժառանգել էին Անեցիներից. նոքա շատ բան մոռանալով ազգայինից, սեփականել էին իրանց Ղրիմի ծէսը, որ ազգային էին համարում, և ոչ մի բանով չէին ուզում շեղուել նորանից։ Ահա այսպիսի հանգամանքներում լրանում է աղա Խաչատուր Խռմահեանի քաղաքագլխութեան եռամեակը և յաջորդ 1830,31 և 32 եռամեակի համար Խալիբեանի գործ դրած ջանքով ընտրուում է քաղաքագլուխ աղա Մարկոս Պոպովը, որ մի կատարեալ պատուհաս է դառնում դպրոցի և Պատկանեանցի դլխին։ Այս Խալիբի կողմից լինում է, նախ, մի վարձատրութիւն Մարկոս աղայի դէպի նա ցոյց տուած բարեացակամութեան և մտերմութեան համար, երկրորդ, նա կամենում է եղել հետևեալ եռամեակի համար ինքն ընտրուել քաղաքագլուխ և ուզում է եղել, որ իրանից առաջ քաղաքագլուխ լինի մի այնպիսի անընդունակ անձն, որ յետոյ ինքը աւելի բարձրիդլուխ հանդիսանայ։

Այդ Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, որ Նախիջևանցւոց սովորութեամբ իբրև քահանայի սերունդ իւր ազգանունը դրել էր Թարգմանաբար Պոպով, մի շատ ագէտ, գոռոզ և վերին աստիճանի փառասէր մարդ էր. նա իւր այդ յատկութիւններով ամենևին չէր յիշեցնում իւր ցեղի նախահայր Եւպատորիայի նշանաւոր աւագ քահանայ Տէր-Մարկոսին, որ այնքան նահատակուել էր իւր ազգի և հայրենիքի համար։ Դաւիթ-բէկի ապստամբութեան ժամանակները 1720 թուին Ղրիմից ուրիշ հայ ուխտաւորների հետ գնում են Երուսաղէմ և հրկու ծերացած և պատուաւոր քահանայ՝ Թէոդոսիայի Տէր-Բարթուղիմէոսը, որ Հայոց բերդը շինող յայտնի Տէր-Մաղաքիայի ցեղիցն էր, և Եւպատորիայի աւագ քահանայ Տէր-Մարկոսը։ Նոքա հասնելով Երուսաղէմ և իւրեանց ուխտը կատարելով, առիթ են ունենում թէ ճանապարհին և թէ Երուսաղէմում պատահելու Հայաստանից եկած ուխտաւորների և նոցանից լսելու հայրենիքի տառապանքի և Դաւիթ-բէկի Սիւնիք հրաւիրուելու մասին։

Ականատեսների պատմածների աղդեցութեան ներքոյ նոցա մէջ եռում է նախնի Անեցիների դիւցազնական արիւնը, և նոքա իւրեանց ծեռքը դնելով Քրիստոսի դերեզմանի վերայ երդուում են, ուխտ են կապում, որ երբ վերադառնան Ղրիմ, հաւաքեն պատերազմող մարդիկ հայ երիտասարդներից և երթան Դաւիթ-բէդին օգնութեան։ Նոյն 1720 թուի աշնան վերջին երկու քահանան հասնում են Ղրիմ և Թէոդոսիայում խորհուրդ անելով, թէ ինչպէս կատարեն իւրեանց կապած ուխտը, և օգտուելով Հրեշտակապետաց տօնի Ուրբաթ երեկոյի նախատօնակի առթիւ եկեղեցի հաւաքուած ժողովրդի բազմութիւնից, հրաւիրում են զգեստաւոր ակնաւոր մարդկանց և յայտնում նոցա իւրեանց խորհուրդը։ Ամենքը հաւանում են և խոստանում են իւրեանց թէ՝ նիւթական և թէ բարոյական օգնութիւնը ցոյց տալ այդ կարևոր խորհուրդը գլուխ հանելու դործին։ Ժամանակներն էլ շատ յարմար և նպաստաւոր էին. Ղրիմում այդ ժամանակ աւազակին-մրդանները-ապստամբել էին իւրեանց իշխանաւոր Խափլան-խանի դէմ, որ ժառանդել էր Ղազի Գիրէյի աթոռը, և ամբողջ թերակղզին ծփում էր խռովայոյզ ազմուկի մէջ։ Կարճ միջոցում երկու քահանայի շուրջը հաւաքուում են 285 հոգի առոյդ երիտասարդներ և քահանաները, օգտուելով խանութեան սահմաններում կատարուող ժխորից, աննկատելի կերպով խումբ-խումբ ճանապարհ են հանում նոցա դէպի Փոքր Ասիոյ ափերը, ժամադիր լինելով միմեանց հանդիպելու Տրապիզոնում։

Ամենից յետոյ վանառականի զգեստով և տաւանծին նաւերով ճանապարհ են ընկնում և ինքեանք քահանաները, նախապէս իւրեանց տեղը կարդելով քահանայ իւրեանց համանուն որդոցը հանութեամբ ժամանակի առաջնորդ Աստապատցի Վարդան եպիսկոպոսի։ Ժամադրած տեղը հասնելով, նոքա բաժանում են իւրեանց մարդկանց զանազան խումբերի, 10—15 հոգուց բաղկացած, և ընտրուած Օնբաշիների առաջնորդութեամբ, լաղերի զգեստ հագցնելով ամենին, որպէս զի ճանապարհին նոքա անվտանգ անցնեն արիւնարբու Լաղերի և վայրենի քուրդերի միջից, ուղևորում են նոցա Դաւիթ-բէկի բանակը։ Խումբերը ա-

ռանձին-առանձին դնում են, նախ, Մուշ, յետոյ Կարս և, վերջապէս, հասնում են Դաւիթ-բէկի բանակը 1722 թուին հէնց այն ժամանակը, երբ եկել էին և նշանաւոր Տէր-Աւետիք և Տէր-Մկրտիչ քահանաները, և Դաւիթ-բէկը նշանակելով Մխիթար դիւցազնին զօրաղլուխ, կողմում էր իւր բանակը և սպասում էր Գենաւուղի Թորոս և Մեղրու Ստեփաննոս իշխանների դալստեան, որ գնայ Պարսից դէմ։ Խրիմեցիք մնում են Հայաստանում մինչև 1729 թիւը և մասնակցում են Դաւիթ-բէկի մղած բոլոր ճակատամարտներին, իսկ երբ որ 1728 թուին մեռնում է Սիւնեաց հերոսը, նոքա հաւատարիմ մնում են նորա յաջորդ Մխիթարին, մինչև որ 1729 թուին դաւանանութեամբ սպանուում է Խնձորեսքում և այդ դիւցազը և բանակը ցրուում է։ Այդ ժամանակ ահա վերադառնում են Ղրիմ իւրեանց մարդկանց հետ և Տէր-Մարկոսն ու Տէր-Բարթուղիմէոսը, նախապէս այցելելով Մուշի Ս. Կարապետը, Որոսն առանը, որտեղ թաղուած էր Տէր-Մաղաքիան, և կործանուած Անին, որտեղից դուրս էին եկել նոցա նախնիքը, և այդ նուիրական տեղերում իւրեանց ուխտը կատարելով։ Բարեբաղդաբար նոցա գնալը, Հայաստանում այնքան երկար մնալը և կռուելը մահմեդականների դէմ և վերադառնալը անվտանգ տեսկատելի է մնում թաթարներից։ Բայց դաւանանութիւնը Հայերի միջից էր. կային ոմանք, որ նախանձում էին Տէր-Մարկոսի և Տէր-Բարթուղիմէոսի փառքին, և յատկապէս մէկը, որ կոչուում էր Դրնան Արթին և իւր լրտեսութեան, դաւանանութեան և մատնողութեան համար սիրելի էր խանին։ Այդ Դրնան Արթինը և դորա համախոհները աշխատել էին վնասել նոցա, երբ դեռ նոքա Հայաստանումն էին, երկու անգամ առանձին մարդու ձեռքով կեղծ նամակներ ուղարկելով և նոցա յետ կոչելով այն առակութեամբ, թէ թաթարները իմացել են նոցա գնալը և բանտարկել են նոցա ազգականներին ու սիրելիներին։ Բայց չէին յաջողել. նոքա հասկացել էին կեղծիքը և չէին վերադարձել։ Այժմ էլ երբ նոքա վերադառնում են Իւրեանց սիրելիների մօտ, ենթարկուում են մատնութեան, Իսանը կոչում է իւր մօտ ու

հարց ու փորձ անելով, արձակում է, կասկածելով Ռուսների վերահաս արշաւանքից։

Արթինը թէ և այս անգամ չի կարողանում վնասել Տէր-Մարկոսին և Տէր-Բարգուղիմէոսին և դոցա հետ գնացողներին և յետ դարձողներին, բայց մի հինգ տարուց յետոյ մեծ պատուհաս է բերում ընդհանրապէս Ղրիմի բոլոր Հայերի գլխին։ Ասում են, որ նա մահամերձ հիւանդանում է և խանը գալիս է տեսնելու իւր մտերմին։ Գնալիս, խանը հարցնում է, ի՞նչ խնդիրք ունի իւր սիրելին։ Հիւանդը շարունակում, թէ ինքը ոչինչ չի ուզում, միայն որ խնդրում է, որ երբ ինքը մեռնի և տանեն թաղելու, իւր մարմինը գերեզման իջեցնելուց առաջ, նա բանալ տայ և նայէ։ Խանը խօսք է տալիս և հրամայում է շրջապատողներին, որ անպատճառ իրան իմաց տան նորա մահուան և թաղման մասին։ Արթինը կապում է իւր վզին մի հաստ կապոյտ ժապաւէն և պատուիրում է իւրայիններին, որ ոչ մի դէպքում, մինչև իսկ իրան պատանելիս էլ, չ՚քակեն այդ ժապաւէնը։ Շուտով նա մեռնում է և մեծ բաղմութեամբ տանում են նորան թաղելու։ Ճանապարհին յուղարկաւորութեան թափորին ընդառաջ դուրս է գալիս խանը և բանալ տալով նորա մարմինը և տեսնելով նորա վզի ժապաւէնը, թէև հասկանում է իւր սիրելու կեղծիքը, բայց բոլորի վերայ մեծ տուդանք է դնում, ասելով, որ Հայերը խեղդել են իւր բարեկամին։

Ահա՛ վերոյիշեալ բարեյիշատակ Տէր-Մարկոսի ժառանգներից էր Մարկոս աղան, բայց ո՞րքան մեծ տարբերութիւն երկուսի մէջ։ Մարկոս աղայի իդէալն էր գանձը, հոխութիւնը. նա իւր փառքն ու պատիւը որոնում էր արքունի ծառայութեան և դորա հետ կապուած զանազան դատարկ սեթևեթների՝ ասպիճանների, փայլուն նշանագգեստի և զանազան շքանշանների մէջ, որոնց հասնելու համար միջոցների մէջ էլ խրտրութիւն չէր անում, մոռանալով մինչև անգամ և ազգ և լեզու և ազգային դաստիարակութիւն։ Նորա առաջին գործն այն է լինում, որ կրճատում է ուսուցիչների ռոճիկը, յետոյ արգելում է։ Պատկանեանցին ռուսերէնի դասատուութիւնը, որից և աշակերտներից շատերը թողնում, հեռանում են դրպ-

բոցից. նա պահանջում է Պատկանեանցից, որ նա, բացի ուսուցչութիւնից, սարկաւագութիւն էլ անէ եկեղեցում, բայց նա մերժում է, որովհետև, նախ, այդ չկար նորա պայմանագրի մէջ, երկրորդ, դորա համար նա ժամանակ էլ չունէր։ Այն ժամանակ նա գրում է Ներսէսին և պահանջում է, որ նա իրաւունք չունենայ հասարակութեան փողով վարձուած վարժապետին ուրիշ գործեր յանձնել, բայց նա այդ նամակն ուղարկում է Գաբրիէլին և վերստին կրկնում է, որ իւր յանձնարարութիւնը կատարէ։ Նա գրաւում է և դպրոցի վերատեսչութիւնը և սկսում է աշխատել, որ վարժարանը հանէ հասարակութեան ձեռքից և ենթարկէ պետութեան ուսումնարանական իշխանութեան։ Մէկ ռուս ուսուցիչ Սաքուն անունով խոստանում է տէրութիւնից պարգև բերել տալ նորա համար, եթէ նա կարողանայ այդ գլուխ բերել, բայց Գաբրիէլը արգելք է լինում, ուստի և նա ստստկացնում է հալածանքը նորա դէմ, ջանալով նորան իսպառ հեռացնել Նախիջևանից։

1831 թուին Հաշտարխանի կողմերից տարածուում է մահտարաժամ, և Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեան աւագ քահանան յունիսին վարունդ ուտելով, բռնուում է համաճարակից և մեռնում։ Պատկանեանցի հակառակորդները լուր են տարածում, թէ քահանան թունաւորուել է նորա ձեռքով, և երբ այդ սուտ է դուրս գալիս, որովհետև քիչ էր մնում, որ անդամահատէին, ասում են, թէ Պատկանեանցի պատճառով նորա մաղձը գլուխն է ստուել։ Համաճարակի պատճառով դպրոցը, հետևելով տէրութեան ուսումնարանների օրինակին, փակուում է ամիս ու կէս ժամանակով։ Օգտուելով այդ պարապութեան ժամանակամիջոցից, Ներսէսը հրամայում է Պատկանեանցին գնալ Քիշինև, և այդ հրամանը հասնում է Նախիջևան Տէր-Գաբրիէլեանի թաղման միւս օրը։ Հրաւիրելու պատճառն այն էր, որ Ներսէս հաստատուած լինելով առաջնորդ Նախիջևանի Բեսսարաբիոյ վիճակի, պիսի հաստատէր Քիշինեւում նոր կոնսիստոր, որովհետև Ցովսէփի հաստատած կոնսիստորը Հաշտարխանումն էր, իսկ այն վիճակը ունցել էր Սերովբէ Կարնեցու ձեռքը։ Պատկանեանցը պիսի կազմակերպէր նոր կոնսիստորը, որովհետև

նա 7 տարի ատենադպիր էր եղել Հաշտարխանի կոնսիստորում և այդ պատճառով էլ լաւ գիտէր բոլոր կարգերը։

Մարկոս աղայի և նորան թելադրող Խալիբի համար լաւ առիթ էր թշնամացնելու Գաբրիէլին Ներսէսի հետ, ուստի և նոքա ճիգ են թափում, որ նա չկատարէ առաջնորդի հրամանը և չերթայ։ Այս պատճառով էլ երբ նա ապերսադիր է մատուցանում քաղաքապլխին, որ նա հրամայէ հոգևոր կառավարութեան, որ իրան անցաթուղթ տայ Քիշինեւ երթալու, դալիս են նորա կողմից չորս մարդ, որոնց թուում և Խալիբը, և խոստանում են նորա ռոճիկը աւելացնել, միայն որ չերթայ, պատճառ բերելով մահտարաժամը։ Գաբրիէլը պատասխանում է, որ Ներսէսի հետ չի կարելի խաղալ և որ ինքն, իբրև հոգևորական, պարտական է հնազանդել նորա հրամանին։ Դորանից յետոյ որոմհետև քաղաքապլխի հրամանը արծակուրդ տալու ուշանում էր, Գաբրիէլը նորից կրկնում է իւր ադերսադիրը և ստանում է արծակուրդ հետևեալ մակագրութեամբ, թէ իրաւունք ունիս դնալու, միայն որ միւս անդամ այլ ևս չվերադառնաս. քո վարժապետութիւնը մեզ այլ ևս հարկաւոր չէ։

Նա դուրս է դալիս Նախիջևանից յունիսի 28-ին և հասնում է Քիշինեւ յուլիսի 6-ին ու տալիս է առաջնորդին Մարկոս աղայի մակագրած թուղթը։ Ներսէսը հարցնում է, թէ ինչու եկար. նա ոչինչ չի պատասխանում, այլ միայն դարմանում է, որոմհետև ունէր ծոցին նորա հրամանը։ Դայն բոպէին բերում են փոստը, և Ներսէս ստանում է Նախիջևանից երկու ծրար. առաջինը մի թուղթ էր 200 ստորագրութեամբ, որով քաղաքացիք բողոքում էին քաղաքապլխի դէմ, թէ նա քանդում է դպրոցը, և դովում էին Գաբրիէլին ու խնդրում, որ նորան քահանայ ծեռնադրէ և վարժապետութիւնը նորան յանձնէ, որ իրանց զաւակները ուսումից չդրկուեն. երկրորդը Մարկոս աղայինն էր. նա գանդատւում էր Գաբրիէլից, թէ նա առևտուրի բան չի սովորեցնում, այլ սաղմոս, շարական, պատմութիւններ, քարոզ տսել և այլն այդպիսի անպէտք բաներ և, որ դլխաւորն է, անպատուում է քաղաքապլխին, իւր զաւակին կրնքահայր անելով ոչ իրան, այլ Առմաջեանին։ Ներսէս այս խոս-

քերի վերայ ծիծաղում է և չի վերջացնում նամակը, որի վերջաբանն այն էր, որ Գաբրիէլը միւս անգամ չ'վերադառնայ Նախիչևան։ Ներսէսն ասում է, թէ ինքը մինչև հիմայ կարծում էր, որ Մարկոս աղան լիրբ ու յանդուգն է, իսկ այժմ իմացաւ, որ նա գիժ էլ է, որ կարծել է թէ Պատկանեանցի գաւակների կնքահայրութիւնն էլ կապուած է քաղաքագլխութեան պաշտօնի հետ։

Գլուխ Զ.

Ներսէս հրամայում է Թադէոս սարկաւագ Բէկնազարեանին, որ յետոյ ծեռնադրուեց վարդապետ և եղաւ առաջ Ղրիմի յաջորդ, յետոյ Պարսկաստանի առաջնորդ, որ նա լաւ բնակարան տայ Պատկանեանցին և հանդստացնէ, իսկ ինքը պատասխան է գրում Մարկոս աղային, թէ տիրացու Գաբրիէլը միւս անգամ չի դալ Նախիչևան, այլ նորա տեղ կ'դայ Տէր-Գաբրիէլը և, փոխանակ քաղաքային վարժարանի, կունենայ հոդևոր վարժարան։ Նոյն իսկ օրը նա պատրաստուում է գնալ Գրիգորուպոլ, որովհետև այդ քանի օրերը պիտի գար Յարութիւն Ալամդարեանը, և նա կամենում էր դիմաւորել նորան։ Գաբրիէլը ընտրում է իւր համար բնակարան Գրիգոր սրբազանի բաղնիքը, որ յետոյ հաւաքոյն էին շինել, և սկսում է մաքրել, բայց հէնց նոյն օրը մաղձացաւի է հանդիպում, և Ներսէսը քանիցս այցելում է նորան և հրամայում է իւր բժշկին լաւ խնամել նորան։

Մինչդեռ Գաբրիէլը հիւանդ պառկած էր Քիշինեւում, Ալամդարեանը եկել էր Նախիչևան և հակառակորդները լցրել էին նորա ականջը անցած-դնացած դէպքերի պատմութեամբ ու իրանց կողմը դրաւել նորան։ Ալամդարեանի հետ Պատկանեանցը ծանօթացել էր Հաշտարխանում դեռ 1822 թուին, երբ նա եկել էր այնտեղ Մոսկովից, միտքը դրած լինելով բռնել նորա տեղը, բայց չէր յաջողել. նա ստիպուած էր եղել շուտով վերադառնալ իւր տեղը, որովհետև լսել էր իւր կնոջ մերձ'ի մահ հիւանդանալը։ Մի քանի օր Նախիչևանում մնալուց յետոյ, նա ճանապարհ էր ընկել և եկել, հասել Գրիգորուպոլ, բերելով իւր

հետ և Ներսէսի քեռորդի Զաքարիա Յովհաննիսեան Շահազիզեանին։ Վերափոխման պահոց եօթնեակին վերադառնում է Գրիգորուպօլից Ներսէսը, բերելով հետը իւր քեռորդուն և Ալամդարեանին, որ արդէն կարողացել էր այն աստիճան փոխել առաջնորդի տրամադրութիւնը դէպի Գաբրիէլը, որ Շահազիզեանը ուղղակի ասում է նորան, թէ այսուհետև Նախիջևանի դուռը փակ է քո առաջ։ Վերափոխման տօնի օրը, որ և Քիշինեւի եկեղեցու տօնն էր, առաջնորդը մեծ ընդունելութիւն է ունենում. ամենքը դալիս են շնորհաւորելու սրբազանին և նորա աջն առնելու. դալիս է և Գաբրիէլը, որ այդ օրը վերաբերում էր արել, բայց Ներսէսը կանգնեցում է նորան և սկսում է նախատել նորան, պատմելով հանդիսականներին ամեն բան, ինչ որ միայն գիտէր նորա մասին, սկսած 1802 թուից, թէ ինչպէս նա նորան հրաւիրել է Թիֆլիս, բայց նա չի գնացել, և տեղը նորա ցուցմունքով Գէորգ աղա Արծրունին հրաւիրել է Ալամդարեանցին, ինչպէս նա 1827 թուին գնացել է Նախիջևան և շփոթութիւն ծգել այնտեղ ժողովրդի մէջ, այնպէս որ նա արտաքսուել է Նախիջևանից և քաղաքացիք Ալամդարեանի բերանով լուր են ուղարկել իրան, որ նորան միւս անգամ Նախիջևան չուղարկէ, և այլն։ Հէնց այդ խօսքերի վերայ ուշաթափուում է Ալամդարեանը, և նա չի կարողանում աւարտել իւր խօսքը։ Այդ ժամանակն էլ հէնց թղթատարը բերում է „Сѣверная Пчела“ օրագիրը, որ Ներսէսը տալիս է կարդալու Գաբրիէլին։ Ցայտնուում է, որ լրագրի մէջ տպագրուած է, թ՝ միջի այլոց, կայսերական հրաման Եփրեմի հրաժարականը ընդունելու և Կարբեցուն հայրապետ ծեռնադրելու։ Ներսէսն այլայլուում է և թուղթը պատուիրելով Գաբրիէլին թարգմանելու, ասում է. «պատերազմ ունիմ Նիկոլայի հետ. նա պէտք է իւր կայսերական խոստմունքը կատարէ. ես չեմ թողնիլ, որ Յովհաննէսը պղծէ հայրապետական սթոռը»։ Երբ Գաբրիէլը թարգմանում, վերջացնում է կայսերական հրամանները, Ներսէսը նորից փոխուում է դէպի նա. նորա հետ փոխուում են և միւսները։ Առաջնորդի եղբօր որդի Յովակիմ Կարապետեան Շահազիզեանը, որ առաջնորդարանի ելքի ու մուտ-

քի վերակացուն էր, այդ ժամանակ Ներսէսի առանձին յանձնարարականով դնում է Թիֆլիս։ Ալամդարեանը կարծում էր, որ ինքը կ՚ստանայ նորա պաշտօնը, բայց Ներսէսը տալիս է նոյն պաշտօնը Գաբրիէլին, որ սակայն ինքը ստանձնում է միայն ընդհանուր վերակացութիւնը, իսկ ներքին տնտեսական գործը, առաջնորդի համաձայնութեամբ, յանձնում է Տէր-Անտոն աւագ քահանայի երիցակնոջ—«Տիրուհուն», որ Գրիգոր եպիսկոպոսի օրով աղաս մուտք էր ունեցել առաջնորդարան։ Ներսէսը սիրում էր Ալամդարեանին, ինչպէս որդի, բայց տնտեսական գործին մօտ չէր թողնում. նա էլ կարծելով, որ դորա պատճառը իւր առաջնորդարանից հեռու բնակուելն է, տեղափոխուում է այնտեղ, որտեղ առաջ ապրում էր գնդապետ Յարութիւն Մակարեան Խուդաբաշխեանը, որի մի եղբայրը Գրիգոր քաղաքագլուխ էր Գրիգորուպոլում և դորանից երկու ամիս առաջ մեռել էր, իսկ միւս եղբայրը ժեներալ Աղէքսանդրն էր որ ապրում էր Պետերբուրգում։

Ալամդարեանի Հաշտարխանից դուրս գալուց և Քիշինև ժամանելուց յետոյ, եկել էր Նախիջևան Բզնունեանց Սիմէօն եպիսկոպոսը և մնացել էր այնտեղ, որովհետև ճանապարհին ոտքը կոտրել էր. նա կամենալով նշանել Ալամդարեանի դուստրը Գաբրիէլի եղբօր տիրացու Պետրոսի հետ, գրում է այդ մասին Քիշինեւ Ներսէսին, Ալամդարեանին և Գաբրիէլին։ Ներսէսը կամք է տալիս և խօսում այս մասին Գաբրիէլի հետ և վերջացնում գործը, մինչ փեսան Նախիջևանումն էր, հարսնացուն Հաշտարխան։ Օժիտը խոստանում է տալ Ներսէսը, որ դեռ Թիֆլիզում նշանակել էր Ալամդարեանի ամեն մի աղջկան երկու-երկու հազար առ ծեռն պատրաստի դումար և երկու-երկու հազար թղթադրամ էլ զարդերի համար։ Սիմէօն եպիսկոպոսը հաւանելով Նախիջևանին, միտքն է դնում առ միշտ մնալ այդ տեղ և այդ նպատակով կամենալով երկուսի՝ Ալամդարեանի և Գաբրիէլի ճանապարհն էլ փակել դէպի Նախիջևան՝ գրում է Ներսէսին, ի միջի այլոց, և այն, թէ Պատկանեանցն այսուհետև այլ ևս ընդունելի չի լինիլ Նախիջևա-

նոամ, իսկ Ցարութիւն վարդապետը կարող է պատասխանել քա տաւչնորդութիւնը։

Մի օր երբ Գաբրիէլը զբաղուած էր տաւչնորդարանի այգու-այգեքաղի գործով և մշակներ էր վարձում, յանկարծ դուրս է գալիս Ներսէսը և արձակում մշակներին, ասելով, թէ դեռ կարելի է այլ ևս մի քանի օր սպասել. նա, ի միջի այլոց յայտնում է, թէ նամակ է ստացել Բղնունուց և մտադիր է տաւչիկայ կիւրակէին ձեռնադրութիւն անել. Թադէոս սարկաւագին պիտի տայ աբեղայութիւն և ուղարկէ Ղրիմ յաջորդութեան պաշտօնով, իսկ իրան, Գաբրիէլին, քահանայութիւն և ուղարկէ Նախիջևան։ Գաբրիէլը պատասխանում է, թէ ինքը չի ուզում գնալ Նախիջևան և թէ ձեռնադրութեան համար դեռ պատրաստ չէ—պաս չի կարող պահել և հիւանդութեան խաղաւարտները դեռ չեն անցել մարմնի վրայից։ Ներսէսը բարկանում է և մտնելով տաւչնորդարան ու պատահելով Ալամդարեանին, ասում է, թէ ինքը ուզում է Պատկանեանցին ձեռնադրել, իսկ նա հրաժարուում է, ասելով, թէ խաղաւարտներ կան մարմնի վրայ և պաս չի կարող պահել։ Ներսէսը կամենում էր Գաբրիէլին քահանայ ձեռնադրել և ուղարկել Նախիջևան, որ Մարկոս աղան, Խալիբը և դոցա համախոհները, որոնց նա մի անունով կոչում էր «Խալիբի սրիկայք», չկարծէին, թէ նա վախենում է նրանցից։ Գաբրիէլը խնդրում է, որ իրան Պետերբուրգ ուղարկէ, բայց Ներսէսը մերժում է, ասելով, թէ չես դիմանալ Լազարեանների բրդութեան։

Հասնում է, վերջապէս, նոյեմբեր ամիսը, և Գաբրիէլի միտքը փոխում է։ նա համաձայնում է վերադառնալ Նախիջևան, որովհետև իմացել էր հօրից, թէ Սերոբէ աբքեպիսկոպոսը հասել է Հաշտարխան և գրել է Սերովբէ վարժապետին, թէ նոքա թող գան։ Նա խորհում է քահանայ ձեռնադրուել Ներսէսից, վերադառնալ Նախիջևան և իւր ծնողների հետ գնալ Հաշտարխան և վերանորոգել տպարանը, որ Ցովսէփի ժամանակից մնացել էր խանգարուած։ Ձեռնադրութիւնը պիտի լիներ 1832 թուի սկզբին. Մոսկովից պիտի դար մի նորընծայու, Գրիգո-

բուպօլում էլ կար մէկը. Գաբրիէլը սկսում է իւր պատրաստութիւնը տեսնել, թէև Ալամդարեանը, առաջնորդի դրդիչ «կաշի» կոչուած Ստեփան վարդապետ Վաղարշապատցին և Նախիջևանի ս. Խաչի վանահայր «Փնասապարա» Մկրտիչ վարդապետը համոզում էին նորան Նախիջևան չերթալ:

Դեկտեմբերի 31-ին հրաման է լինում Գաբրիէլին երթալ Գրիգորուպօլ և այնտեղ սպասել առաջնորդի դալստեան: Յունուարի 1-ին Գաբրիէլն արդէն այնտեղ է լինում և գնում է այցելութեան Յարութիւն Խուդաբաշխեանին, որ բնակում էր իւր Գրիգոր եղբօր տանը. նա հիւանդ էր և անկողնում նըստած, հաւի միս էր ուտում: Նա հարցնում է Գաբրիէլին նորա Գրիգորուպօլ դալու պատճառը և իմանալով, որ եկել է ծեռնադրուելու, ասում է թէ չի ուզենալ նորան քահանայ տեսնել: Գաբրիէլը պատասխանում է, թէ դորա շատ հեշտ ճանապարհը կայ՝ փոխուել առ Աստուած: Նա ծիծաղում է և հաւի ոսկրը ծնում է կոկորդում ու մեռնում է: Յունուարի 10-ին գալիս է առաջնորդը, բերելով իւր հետ վարդապետներին, երիցակնոջը և ուրիշներին—ընդամենը 10 կառք: Ձեռնադրութիւնը լինում է կիւրակէ, Յունուարի 17-ին և նորընծայ Տէր-Գաբրիէլը սկսում է քառասունք պահել ս. Նշան եկեղեցում: Միւս օրը գալիս է նորան այցելութեան Սրբազանը և օրհնում ու վերջին պատուէրներն է տալիս, խոստանալով Քիշինևից ուղարկել նորա իրեղէնները և քահանայութեան վկայականը: Տէր-Գաբրիէլի քառասունքի ծանծրացուցիչ միայնութիւնը փարատում ու մխիթարում են տեղի երկու զառամեալ քահանաները Տէր-Գէորգը և Տէր Յովհաննէսը, որոնք գալիս են նորա խուցը և հնութիւնից և մոռացուած անցեալից զանազան հետաքրքրական պատմութիւններ անում. նոքա, ի միջի այլոց, հաղորդում են նորան զանազան տեղեկութիւններ Ղրիմի գաղթականութեան մասին և մատնացոյց են անում մի ծեռագիր տետրակի վրայ, որ պահպանուում էր տեղացի բնակիչ ծերունի Դաւիթ-Բէկի մօտ, որ Ներսէս սրբազանի լաւ բարեկամն էր: Նա խնդրում է այդ ծեռագիրը և նորա մէջ կարդալով վերոյիշեալ Տէր-Մարկոսի և Տէր-Բարդուղիմէոսի պատմութիւնը, ուղարկում է նոյն տես-

բակը կարդալու առաջնորդին. նա էլ տալիս է Ալամդարեանին, իսկ այդ վերջինը յանձնում է Ստեփան «կաշի» վարդապետին, որ հասցնէ Տէր-Գաբրիէլի ձեռքը, բայց նա չի կատարում այդ յանձնարարութիւնը և գնում է ս. Էջմիածին և ձեռագիրն էլ հետն է տանում։ Փետրուարի 28-ին լրանում է քառասունքը և Տէր-Գաբրիէլը, որ այդ ժամանակ լինում է ուղիղ 30 տարեկան, պատարագ է մատուցանում հերթով երկու եկեղեցում ևս և ժողովրդի ցանկութեամբ քարոզ է ասում։ Դոյն իսկ օրերը վախճանում է յիշեալ ծերունի Դաւիթ-Բէկը, և Ներսէսը նորից գալիս է Գրիգորուպոլ ներկայ գտնուելու իւր բարեկամի յուղարկաւորութեան. նա դամբանական է խօսում և հիացնում ժողովրդին, որ լսել էր Գիւմուշխանցի Մանուէլ վարդապետին, որ հռչակուած էր իբրև հրաշաքարոզ։

Մաղկազարդին նա հրաման է ստանում գնալ Քիշինև և իսկոյն ճանապարհ է ընկնում, բայց կառապանի հարբած լինելու պատճառով, նա շեղուում է ճանապարհից և ընկնում է Բենդեր, որով և անակնկալ կերպով առիթ է ներկայանում նորան տեսնել և այդ քաղաքը։ Բայց Քիշինևից, Գրիգորուպոլից և Բենդերից նա այդ ժամանակները տեսնում է և Աղքիրման քաղաքը, ուր ուղարկում է նորան Քիշինևից առաջնորդը՝ Գրիգորի ժամանակներից մնացած առաջնորդապատկան իրեղէնները բերելու։ Տէր-Գաբրիէլին ճանապարհ ծգելու համար հաւաքուում են առաջնորդարան Յարութիւն Ալամդարեանը, Քիշինևի Գէորգ վարդապետը, Մկրտիչ վարդապետը, Յարութիւն աւագ քահանան, Սողոմոն Քէթխուդովը և միւսները։ Ներսէս Յովհաննէս սրբազանի Պատկանեանցին տուած վկայականից հաւաստիանալով, որ նա, երբ քահանայ ձեռնադրուի, իրաւունք պիտի ունենայ աւագութիւն ստանալու և «խարայ փիլոն» կրելու, տալիս է նորան 200 բուբլի և պատուիրում է Օդեսսում գնել իւր համար Ժաղկեայ փիլոնացու և նոյն գնով կամիրաւկայ։ Յարութիւն վարդապետին էլ հրամայում է մի թուղթ գրել նախարարութեան Տէր-Գաբրիէլի մասին, թէ ինքը կոչել էր նորան Քիշինևի Հողևոր կառավարութիւնը վերածելու կոնսիստորիայի, և նա յաջողութեամբ կատարել է իւր հրամանը, որի համար և

ինքը ձեռնադրեց նորան քահանայ Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու վերայ, յանձնելով նորան միանգամայն և բոլոր եկեղեցիների տնօրինութիւնը թէ Նախիջևանում և թէ շրջակայքում։ Ապրիլի 29-ին դուրս գալով Քիշինևից, նա մայիսի 1-ին հասնում է Օդեսսա, որտեղ ներկայանալով Վօրոնցովին, մատուցանում է Ներսէսի նամակը և նորանից էլ նամակ ստանալով Տաղանրոգի քաղաքապետ Դունայևի վերայ և տեղ հասցնելով, ժամանում է Նախիջևան մայիսի 10-ին, ընդամենը ճանապարհ Քիշինևում 11 ամիս։

Ներսէսը հրամայել էր, որ վախճանած Տէր-Գաբրիէլեանի ժուխը տրուի Պատկանեանցին, բայց որովհետև ինքը հանգուցեալ Տէր-Գաբրիէլեանը իւր ժուխն անձամբ երբէք չէր հովուել, այլ Տէր-Մինասի և Տէր-Աստուածատուր Նապոլէոնիկեանի ձեռքով, այդ պատճառով էլ նորա մահից յետոյ նորա ժուխը մնացել էր նոցա ձեռքին։ Առաջնորդի հրամանի մէջ կար և այն պայմանը, որ ով այն ժխականներից կամենայ Պատկանեանցի ժուխը լինել, պէտք է թղթով յայտնէ այդ մասին հոգևոր կառավարութեան և կամ անձամբ երթայ և ձեռագիր տայ։ Սկսուում է խռովութիւն, որովհետև հոգևոր կառավարութեան դրան առաջ Մարկոս աղայի հրամանով կանգնում են լրտեսներ և եկող-գնացողներին բէշլիներով[7]) տանում են Մադիստրատ, որտեղ նոցա հայհոյում, նախատում և շատ նեղութիւն են տալիս, թէ ինչու նոքա Պատկանեացի ժուխ են գրուել և գրուում։ Ներսէսը տեսնելով, որ այդ միջոցով չի կարողանում Տէր-Գաբրիէլի համար ժուխ կազմել, հրամայում է, որ առհասարակ ով որ կամենայ և ուրիշ ժխերից ինքնայօժար նորա ժուխը լինել, կարող է անարգել։ Այս միջոցը յաջողութիւն է գտնում, բայց ժուխ են գրուում միայն հալածեալները, վշտացեալները, խեղճերն ու աղքատները, և այդպիսի դերդաստանների թիւը հասնում է 150-ի։ Աստուած սակայն շուտով օրհնում է, և նորա ժխի մէջ էլ կարճ միջոցում երևում են հարուստներ և առհասարակ կարողութեան տէր մարդիկ։ Սակայն Տէր-Գաբրիէլի և նորա այդ ժխականների մէջ յաճախ պատահում են դժտութիւններ, որովհետև նա չէր սիրում ուտել, խմել, երկար նստ-

տել տօներին, խնջոյքներին, հրաւէրքներին, ուստի և ծխականները կարծում էին, որ իրանց տան քահանան արհամարհում է, բանի տեղ չի դնում իրանց: Եւ այս դժուարութիւնները բոլորը ևս բողոքի ձևով ու սև ու թանձրացած գոյներով գրում էին առաջնորդին և այդ բոլորին էլ վկայութիւն էր տալիս Բզնունին, որ Տէր-Գաբրիէլի անկումը կամենում էր իւր համար բարձրանալու աստիճան շինել:

Այդ Բզնունի եպիսկոպոսը կամենում է մինչև անգամ թշնամութիւն սերմանել և Պատկանեանցի ընտանիքի մէջ. նա անդադար գրգռում էր նորա ծնողներին, թէ ինչու Տէր-Գաբրիէլը չի շտապեցնում տիրացու Պետրոսի ամուսնութիւնը, որ ինքը նորան քահանայ ձեռնադրէ, թէև ամենքն էլ գիտէին, որ նա իրաւունք չունի, չի կարող Ներսէսի վիճակում ձեռնադրութիւն անել: Տէր-Գաբրիէլը ստիպուած է լինում հոգևոր կառավարութիւնից շուտով անցաթուղթ տալ եղբօրը, որ նա երթայ Հաշտարխան և ամուսնանայ: Տիրացու Պետրոսը տանում է իւր հետ եղբօր նոր միայն գրած «Ցեփթայէ» բանաստեղծութիւններից մի օրինակ, որ տեսնում ու կարդում է Սերովբէ եպիսկոպոսը և այնքան հաւանում, որ Տէր-Գաբրիէլի անունը դնում է «Ցեփթայէի հեղինակ»: Սիմէօն եպիսկոպոսը արգելք է լինում նորա գործունէութեան և հոգևոր կառավարութեան մէջ. նա սեփականել էր իրան բոլոր հոգևոր գործերի տնօրինելու իրաւունքը, իբրև պատկեր վիճակաւորի: Տէր-Գաբրիէլը որպէս զի կարողանայ կառավարութեան վերին աստիճանի խճճուած գործերը կարգի բերել, ստիպուած է լինում բոլոր իրաւունքը խլել նորա ձեռքից: Նա Յովհաննէս սրբազանի 1815-ին մտցրած, բայց անգործադրելի մնացած հաշուեմատեանները աշխատում է գործադրել և պարզել եկեղեցիների եկամուտքը: Յայտնւում է, որ Լուսաւորիչ, Համբարձում և ս. Թորոս միասին ունին 10 հազար ռուբլի թղթադրամ, Ս. Գէորգ — 30 հազար, իսկ ս. Աստուածածինը, որ Մրկրը աղայի ձեռքին էր, ընդդիմանում է և հաշիւ չի տալիս, որից և առաջ է գալիս Մրկրը Պօպովի բազմակնեիս հաշուեատուութեան գործը,

որի համար ուղարկում է Նախիջևան Թադէոս վարդապետ Բէկնազարեանը։

Առաջնորդին Պատկանեանցի վերայ ուղարկուած բաղմաթիւ բողոքները, որոնց մէջ խառն էր, ինչպէս ասացինք, և Բղնունի Սիմէօն եպիսկոպոսի մատը, վերջապէս, ունենում են իւրեանց ազդեցութիւնը։ Ցանկարժ դալիս է Սողոմոն Քէթխուդովը և երեք օր Ինալով եպիսկոպոսի տանը, վերջին, դնալու օրը միայն մտնում է Պատկանեանցի տունը, տալիս է Ներսէսի ծրարը և դնում է։ Թղթի մէջ գրուած էր յանդիմանութիւն, հիմնուած զրպարտութիւնների և խեղաթիւրուած փաստերի վերայ, որից այնքան վշտանում է նա, որ «մի անսանձ մոլեգնութիւն» է ընկնում նորա սրտի մէջ, և նա մի յանդուգն պատասխան է գրում, որ վերջանում էր հետևեալ խօսքերով՝ «յերեսս ոնկեալ աղերսեմ տալ ինձ հրաման դալ 'ի Գրիգորուպոլ և անդ 'ի ծերում ատենի երես առ երես վիճաբանել ընդ այնոսիկ, յորս միանգամայն մատնացոյց եղեալ է զրպարտիչն, և թէ հաճոյ իցէ ծերում սրբազան քահանայապետութեան՝ յատենի անդ գտցի և պատգամաւոր 'ի դիմաց Վօրոնցով կոմսին»։ Սորա հետևանքն այն է լինում, որ Ներսէս մխիթարական նամակ է գրում նորան և հրամայում Սիմէօն եպիսկոպոսին վերադառնալ Ս. Էջմիածին։

Տէր-Գաբրիէլը երբ վերադառնում է Քիշինեւից, սակայն է լինում հրաժարուել քաղաքային վարժարանի ուսուցչութեան պաշտօնից, որովհետև Մարկոս ապան տեսնելով, որ նա պաշտօն է վարում և հոգևոր կառավարութեան մէջ, կրում է նորա ռոճիկը։ Այն ժամանակ նա առաջնորդի հրամանով բաց է անում Հոգևոր վարժարան և իւր վարժապետութեան գործունէութիւնը փոխադրում է այնտեղ։ Նոր բացուած դպրոցով Նախիջևանում դպրոցների թիւը այդ ժամանակ լինում է չորս՝ խօնախ կամ քաղաքային նորաշէն վարժարան, որի մէջ Մարկոս ապայի բարեհաճութեամբ վարժապետութիւն էր անում Թիքիչի Օհան անունով մէկը, որ իւր տգիտութեամբ յիշեցնում էր նախկին Յովհաննէս վարժապետին, Եկմանեանի վարժարան, որի մէջ ծաղկած էր վայելչագրութեան արուեստը,

և Թէոդորոս Խաչամեանի վարժարանը, որ շատ քիչ աշակերտ ունէր և այդ պատճառով էլ շուտով փակուում է, և Խաչամեանը դրագրի պաշտօն է ստանձնում Որբոց Իրաւարանում։ Հոգևոր վարժարանը եկամուտ չունէր, միայն մունը վարձուում էր եկեղեցական փողով, որովհետև նոյն շէնքում տեղաւորուում էր և Հոգևոր կառավարութիւնը, իսկ ինքը Պատկանեանցը իւր վարժապետութեան համար ոչ մի վարձատրութիւն չէր ստանում։ Այդ Հոգևոր վարժարանի աշակերտների համար է լինում, որ նա գրում է իւր «Նոր Յեփթայէ»-ն, որի մասին մենք վերը խօսեցինք։

Մարկոս աղան տեսնելով, որ իւր բողոքները մնացին անհետևանք և Պատկանեանցը քահանայ ձեռնադրուած վերապարձաւ Նախիջևան, ստանձնելով պաշտօն և Հոգևոր կառավարութեան մէջ և Հոգևոր վարժարան ևս բանալով, դիմում է մի ուրիշ միջոցի. 1832 թուի հոկտեմբերի 10-ին քաղաքական դումի ժողովում 186 մարդու ստորագրութեամբ մի համախօսական — «բրիկաւոր»-է կազմում և ուղարկում առաջնորդին, խնդրելով հեռացնել քաղաքից ոչ թէ միայն Տէր-Գաբրիէլին, այլ բոլոր Պատկանեանց տոհմը իբրև վնասակար, խռովութիւն յարուցանող և առաջնորդի սիրար հասարակութիւնից սառեցնող։ Թէ ինչ հետևանք է ունենում այդ համախօսականը, մենք չենք կարող ասել, բայց պէտք է կարծել, որ առաջնորդը ուշադրութիւն չի դարձնում և դորա վերայ, որովհետև Պատկանեանցը դորանից յետոյ էլ դեռ երկար ժամանակ մնում է Նախիջևանում [8]։

ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ

ՖՐԵԴԵՐԻ ՄԻՍԹՐԱԼ

ՄԻՐԷՅՕ

Պրովանսական քերթուած

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐԵՒԱՓԱՂ

—

Միրէյօ թթենիի տերևները կը քաղէ իր շերամներուն համար.—Դիպուածով, Վինսեն, կողով նորոգողը, կ'անցնի մօտակայ կածանէն.—Աղջիկը կը կանչէ զայն.—Պատանին կը վազէ, և էնոր օգնելու համար ծառին վրայ կ'ելլէ էնոր հետ.—Իրենց խօսակցութիւնը.—Վինսեն կը բաղդատէ իր Վինսենեթօ քոյրը Միրէյօին հետ.—Կապոյտ երաշտահաւներու բոյնը.—Ճիւղին կոտրիլը.—Միրէյօ և Վինսեն ծառէն վար կ'իջնան.—Աղջիկն իր սէրը կը յայտնէ.—Վինսենի հրաւառ. սրտաժայթքումը.—Ոսկի Այծը, վոքլիւզի թզենին.—Մայրը կը կանչէ Միրէյօն.—Յուզմունք և բաժանում երկու սիրահարներուն։

Երգեցէք, երգեցէք, շերամաբոյծ աղջիկներ,
Զի տերևքաղը երգելով կը քաղցրանայ.
Շերամներն աղուոր են ։՝ իրենց երրորդ քունը կը քնանան.
Թըթենիները լեցուն են աղջիկներով
Զոր գեղեցիկ օդը զըւարթ կ'ընէ ՝ւ աշխոյժ,
Նըման խարտեաշ մեղուներու որ իրենց մեղրը կը քաղեն
Քարուտ դաշտերու խնկունիներէն։

Հաւաքելով ձեր ոսկերուն տերևները,
Երգեցէք, երգեցէք, շերամաբոյծ աղջիկներ։
Այդ Մայիսի աղուոր առտուն, Միրէյօն ալ
Այնտեղ է, և ականջներուն

Այդ առաւօտը պչրուհին իրրև օղ
Երկու կեռաս էր կախեր...
Վինսեն հոնկից անցաւ նորէն այդ առտու։

Իր գլատակին վրայ ծիրանի
— Ինչպէս լատին ծովափներու բնակիչները կը կըրեն,—
Աքաղաղի փետուր մ'էր դրեր սիրուն ձևով.
Ու երբ կ'անցնէր կածաններէն,
Կ'փախչէին թափառական լորտուները.
Ու քարի հնչուն դէզերէն ցուլովն անդին կը նետէր
Գայլախաղները։

— Է՛ Վինսեն, կանչեց Միրէյօ, կանանչ
Ծառուղիներուն մէջէն, այդպէս շուտ
Ինչո՞ւ կ'անցնիս։ Վինսեն իսկոյն
Ծառաստանին կողմը դարձուց գլուխը,
Ու թղթենիի մը վրայ թառած
Նշմարեց աղջիկն արեղաձագի մը նման զբաղած.
Ու ցնծագին թռաւ էնոր մօտեցաւ։

—Միրէյօ, լաւ կը քալէ՞ կոր տերևքաղը։
—Կը մերկանան քիչ քիչ ոստերը բոլոր։
—Կ'ուզե՞ս, քեզ օգնե՞մ։— Այո։ Եւ մինչ էն վերէն կը խնդար,
Ուրախութեան յիմար ճիչեր արձակելով,
Վինսեն, ոտքովը հրրելով առուոյտը,
Առնէտի պէս մագլցեցաւ ծառն ի վեր։
—Միրէյօ, քեզ միայն ունի ծերուկ Ռամոն վարպետը.

Միայն վարի ճիւղերն ըրէ դուն, ես կատարը կ'ելլեմ։
Եւ իր թեթև ձեռքով տերևը հաւքելով,
Միրէյօ ըսաւ. «մարդ չի ձանձրանար
Երբ ընկերով կ'աշխատի.
Միս-մինակ, շուտ վրաղ թուլութիւն մը կուգայ։
—Ձիս ալ ճիշտ այդ է որ յաճախ
Կը նեղացընէ, ըսաւ պատանին.

Երբոր այնտեղ, մեր տընակին մէջ կը մընանք,
Ուր խիճեր լափող ամեհի Ռոնին
Ուրժըլտուքէն ուրիշ բան չենք իմանար,
Ախ, չես գիտեր Ինչպէս երբեմն սրտերնիս կը նեղուի։
Ամառը ոչ այնքան, ինչու որ հօրըս հետ

Սովորաբար ամառ օրերն ագարակէ ագարակ
Մեր պլտոյտները կ'ընենք։

Բայց չիչխանիկն երբ կարմրերի,
Երբ ձրմեռնան օրերը
Ու գիշերներն երկրննան,
Կրակարանին շուրջ կիսաշէջ՝ մինչդեռ ոգի մը մղլակէն
Կը մրլաւէ կամ կը սուլէ,
Լոյսը մարած, և անխօսուկ,
Հօրս հետ մինակ, պէտք է քունին գալն ըսպասենք...

—Հապա մայրիկդ ուր կը կենայ,
Ըսաւ աղջիկն իսկոյն անոր։
—Մեռած է... պահ մը լուռ մընաց պատանին,
Յետոյ յարեց.—Վինսենթօն
Երբ դեռ մեզ հետ էր ու թէպէտ և մատղաշ,
Կը հոգար մեր ուրնակը,
Այն ժամանակն հաճոյք մը կար։—Ի՞նչ, Վինսեն,

Դուն քո՞յր ունիս։—Հապա՛, կարճ աղջիկ մը,
Խելօքիկ ու ձեռքէն ամեն բան եկող,
Ըսաւ Վինսեն. այնքան, այնքան,
Որ Ֆոն-տու-ռէյ (պոքէրի մէջ) օր մը գացած ըլլալով
Արտունձներուն քով աշխատիլ,
Այնչափ հաւնեցան էնոր սիրունիկ ճարպկութեանը,
Որ սպասուհի առին իրենց և ալ այդպէս հոն մընաց։

— Կը նըմանիս քուրիկիդ։
—Էն ուր, ես ուր... Խարտիշուկ է էնիկա,
Եւ ես սևուլիկ՝ ինչպէս կը տեսնես.
Բայց աւելի գիտե՞ս որու կը նըմանի.
Քեզի. կարծես երկուորեակ են
Ձեր երկունքին գլուխներն արթուն
Ու ձեր մազերը յորդառատ՝ մրտենիի տերևի պէս։

Բայց գլխանոցին պայծառ կըտաւը
Շտկելու համար, դուն շատ աւելի
Ճարտար ձեռք ունիս...
Քուրիկս ոչ տրգեղ է և ոչ թմրած.
Բայց, ա՜խ, որքան դուն աւելի աղուոր ես։

Հոս, Միրէյօ, կէս-վաստրկուած,
Ճիւղը ձեռքէն փախցընելով՝ «Էյ, սա Վինսէնն ալ...» ըսաւ։

Երգեցէք, երգեցէք շերամաբոյծ աղջիկներ։
Թըթենիներու տերևն աղուոր է.
Շերամներն աղուոր են 'ւ իրենց երրորդ քունը կը քնանան.
Թըթենիները լեցուն են աղջիկներով
Զոր գեղեցիկ օդը կըւարթ կ'ընէ 'ւ ուշխոյժ,
Նըման խարտեաշ մեղուներու որ իրենց մեղրը կը քաղեն
Բարուտ դաշտերու ինկունիներէն։

—Այսպէս, քըրոջմէդ աւելի սիրուն
Կը գտնես զիս ուրեմն, ըսաւ Միրէյօ։
—Շատ աւելի, պատասխանեց Վինսենը.
—Բայց ինչ ունիմ աւելի։—Սուրը Աստուածածին,
Է՛, եկեղանիկը ինչ ունի աւելի
Քան թրոկլոտիթը վըտիտ,
Թէ ոչ նոյն իսկ գեղեցկութիւնն ու երգն ու շնորհ։

—Ուրիշ, ուրիշ։—Խեղճ քուրիկըս,
Պրասին ճերմակը քեզ բաժին պիտի չելլէ.
Վինսենթօն ծովու ջուրի պէս աչքեր
Ունի կապոյտ ու վըճիտ.
Քու աչուընիրդ դագատի պէս սև են,
Ու երբ իմ վրաս կը կայծկըլտան,
Լեցուն բաժակ մ'եփած գինի խըմածի պէս կ'ըլլամ կարծես։

Բարակ ձայնովը յստակ՝
Քուրիկըս երբ «փերունելօ» երգը կ'երգէր,
Շատ մեծ ախորժ կը զգայի քաղցր էնոր դայլայլը լըսելով,
Բայց դուն, էն փոքրը խօսքն անգամ
Որ ինձ կ'ըսես,
Հազար երգէ աւելի
Կը զմայլեցնէ ականջս ու սիրտս կ'ընէ տակն ու վերայ։

Արօտներուն մէջ վազելէն վազելէն,
Քուրիկս արմաւի ճիւղի մը նըման՝
Վիզն ու դէմքն այրած է արեգակէն.
Դուն կարծես թէ ասփոտելին
Ծաղիկներուն պէս շինուած ես.
Ամառուան ձեռքն արևահար
Չի յանդգնիր ճերմակ ճակատդ շոյել։

Բարակ է դեռ քուրիկս ինչպէս
Շերեփակոթ մ՚առուակի.
Խեղճն իր բոլոր աճումը մէկ տարուան մը մէջ ունեցաւ.
Բայց ուսերէդ մինչև մէջքդդ,
Միրէյօ, քեզի բան մը չի պակսիր։
Նորէն աղջիկը, ձեռքէն ճիւղը փախցնելով,
Ու կաս- կարմիր եղած, «Էյ, սա Վինսէնն» ըսաւ։

Հաւաքելով ձեր ոստերուն տերևները,
Երգեցէք, երգեցէք, շերամարոյծ աղջիկներ։
Այդպէս այդ երկու աղւոր տղաքները՝ տերևալից
Ծառին ոստերուն ներքև պահուըտած,
Իրենց տարիքին անմեղութեան մէջ,
Սիրոյ նախափորձը կը փորձէին։
Բայց տակաւ մէգը սարերէն կը փարատէր.

Հոն, վերը, մերկ ժայռերուն ու կիսակործան
Աշտարակներուն վրայ, ուր կ՚երևան՝
Գիշեր ատեն՝ ուրուականները Պօի հին իշխաններուն,
Միջոցին մէջ, ճակուրները,
Ըսպիտակափայլ, կը բարձրանային, ու լայն թևերնին
Կը շողային արևուն
Որ կը տաքցնէր արդէն թըղուկ—կաղնիները։

—Օ՜, դեռ ոչինչ ենք ըրած, ինչ ամօթ բան,
Սուտ-սրդոլած ձևով մ՚ըսաւ Միրէյօ.
Այս խայտառակն որպէս թէ ինձ օգնել եկաւ,
Եւ իր բոլոր ըրածը զիս խնդացնել է...
Հերիք է, ալ թող ձեռքերնիս քիչ մը ժիրնայ,
Որովհետև մայրիկս յետոյ կրնայ ըսել
Թէ կարգուելու համար դեռ շատ անճարակ եմ։

Իսկ դուն, աւելցուց, որ կը պարծէիր, խեղճ բարեկամըս,
Եթէ մէկուն քով վարձքով մտնէիր
Կենդինարի չափով տերև հաւաքելու,
Կարծեմ թէ նոյն իսկ եթէ քեզ միայն մորճեր յանձնէին,
Պիտի ստիպուած ըլլայիր օգ ուտելու։
—Ուրեմըն զիս ձախաւերի տեղ կը դընես,
Պատասխանեց պատանին, քիչ մ՚ամօթահար։

Լաւ, օրիորդ, հիմայ կ'տեսնենք
Ո՞վ աւելի շուտ կը քաղէ։
Ու, հօփ, աշխոյժ, երկու ձեռքով, գործին փակած,
Կը պրկեն ճիւղերն ու շուտ, շուտ, տերևը կը հաւաքեն,
Անխօսուկ, անդադրում,
(Մայող ոչխարն կը կորսնցնէ իրեն բաժինը խոտի).
Այն թրթենին որուն վրայ են՝ քիչ ատենէն կը մերկանայ,

Ընդհուպ, սակայն, կանգ առին.
Երիտասարդ ըլլալ, ա՜խ, ի՜նչ աղուոր բան։
Երբ տերևները նոյն պարկին մէջ կը դնէին միասին
Հեղ մ' աղջկան
Նուրբ մատուրները գեղեցիկ
Հոն հանդիպեցան ու խառնուեցան
Սա Վինսենին մատուրներուն հրատոչոր։

Սարսրռացին էն և ան.
Սիրով ծաղկեցան իրենց այտերը,
Ու երկուքը մէկ՝ կրակի մ'անծանօթ
Իրենց մէջ կիզիչ հոսումն ըզգացին։
Բայց տեսնելով որ էնիկա, սարսափով,
Տերևներէն իր ձեռքը դուրս կը հանէր,
Ան, այդ խռովքէն դեռ յուզուած,

—Ի՞նչ ունիս, պիծակ մ'արդեօք պահուրտած
Քեզ խայթեց, ըսաւ։
—Չեմ գիտեր, էն պատասխանեց ճակատը վար ծռելով։
Եւ, ալ լուռ ու մունջ, երկուքը մէկանց
Նորէն ըսկըսան տերև քաղելու։
Աչքի ծայրով՝ չարաճըճի ակնարկներով,
Կը նայէին թէ իրենցմէ էն առաջ ո՞վ պիտի խնդայ։

Կը բաբախէր իրենց կուրծքը.
Նորէն տերևն անձրևի պէս թափեցաւ.
Եւ երբ, յետոյ, վայրկեանն եկաւ զայն պարկի մէջ դընելու,
Ճերմակ ձեռքն ու ձեռքը թուխ
Դիպուածով կամ թէ դիտմամբ
Միշտ իրարու կ'մօտենային,
Ու մեծ ախորժ կը զգային այդ աշխատանքէն։

Երգեցէք, երգեցէք, շերամաբոյծ աղջիկներ,
Հաւաքելով ձեր ոսկերուն տերևները...
—Նայէ, նայէ, գոչեց յանկարծ Միրէյօ։
—Ի՞նչ է, ինչ կայ։ Մատը բերնին,
Շարժկոտ ինչպէս մորեխ մ'որթի բունի մը վրայ,
Դէպ ի այն ճիւղին որուն վերայ էր թառած՝
Մատովը ցոյց կուտար...—Տես, բոյն մը, շուտ, առնենք։

— Կեցի՛ր...։ Ու շունչը բռնելով հեւիհեւ,
Ինչպէս ճնճղուկ մը տանիքին եղերքէն,
Վինսեն ճիւղէ ճիւղ դէպի բոյնը ցատքեց։
Խորը լայն ծակի մ'որ բնականօրէն
Կարծեր կեղևին մէջն էր կազմուած,
Կ'երևային ձագերն, արդէն փետրազարդ ու շարժկըտուն։

Բայց Վինսեն որ իր սըրունգները ջլապինդ
Գալարուն ճիւղին փաթթեր էր արդէն,
Մէկ ձեռքով կախուած, միւս ձեռքն էր խօթեր
Խոռոչին մէջ կոճղին։ Իրմէ քիչ մը վեր,
Միրէյօ,այտերը կըրակ կտրած,
—Ի՞նչ է, հարցուց։
—Փէմփարէններ։—Ի՞նչ։—Գեղեցիկ երաշտհաւեր կապուտակ։

Բահքան խնդաց Միրէյօ.
— Ինծի նայէ, ըսաւ, դուն չե՞ս իմացած,
Երկու հոգի երբ մէկտեղ բոյն մը գտնեն.
Թըթենիի մը կամ ատոր նման ծառի մը կատարը,
Տարին չըլրացած՝ սուրբ եկեղեցին
Զանոնք իրարու կը միացընէ...
Առածը միշտ իրան կ'ելլէ, կ'ըսէ հայրը։

— Այո, բայց պէտք է աւելցնել, պատասխանեց Վինսենը,
Թէ այդ յոյսն օդը կը ցնդի
Եթէ փախչին ձագերը՝ դեռ վանդակի մէջ չըդրուած։
— Ցիսուս Քրիստոս, ուշադրութիւն ըրէ, գոչեց աղջիկը,
Եւ շուտ, խընամքով,
Բռնէ զանոնք, որովհետև ատիկա բաղդն է մերին։
— Ճշմարիտ որ, պատասխանեց պատանին,

Է՛ն աղէկ տեղը պահելու համար ասոնք,

Թերևոյ կուրծքդ է քուկին։
Ճիշտ է, ճիշտ, տուր...։ Վինսան խսկոյն
Ձեռքը խորշին մէջ մրխեց,
Եւ ձեռքն երբ դուրս հլաւ լեցուն,
Զորս ճաղ հանեց խոռոչէն։
— Աստուած, ըսաւ Միրէյօ, ձեռքն երկընցնելով, որչափ
ալ կան...

Ի՞նչ անուշիկ թռչնիկներ.
Խեղճ ձագուկներ. նա, ձեզ համբոյր մը տաքուկ։
Եւ, հաճոյքէն խելքը թռած, հազար հազար քաղցր համբոյրով
Կը լափէ զանոնք ու կը փայփայէ.
Յետոյ գորովով կը սահեցընէ զանոնք մեղմօրէն
Իր չրփակին տակ որ կ'ուռի։
— Ձեռքդ երկընցուր, գոչեց Վինսանը Նորէն։

— Ի՞նչ նոնոշիկ են, ահա, իրենց գլուխը կապոյտ
Ասեղի պէս ունի բարակ աչուկներ.
Ու շուտ, Նորէն, ճերմակ բանտին մէջ ողորկ
Երեք փոքրիկ երաշտահաւ կը փակէ.
Եւ աղջկան ծոցին մէջ գաղջ՝
Ձագերը որ կը պլլորուին,
Կը կարծեն թէ դիրենք Նորէն իրենց բոյնին մէջ են դրած։

— Բայց իրաւ, Վինսէն, դեռ ուրիշ ալ կայ։
— Այո, կայ։—Սուրբ Աստուածածին,
Հիմայ ըսեմ պիտի թէ ձեռքդդ դիւթուած է։
—Է՞ միամիտ աղջիկ. երբ Սուրբ Գէորգը գայ,
Երաշտահաւը տասերկու և մինչև իսկ մերթ տասնըչորս
Հաւկիթ կ'ածէ...։ Բայց տես, տես, ձեռքդ երկընցուր,
Ահա էն վերջը ծընածներն... Եւ դուն, խոռոչ, մընա բարով։

Հազիւ ծառէն պատանին վար էր ինջեր,
Եւ հազիւ էն իր ծաղկազարդ չրփակին մէջ քնքշութեամբ
Տեղաւորեր էր ձագերը,
Ա՜յ, այ, այ, այ, գոչեց յանկարծ
Խըտղըտացող ձայնով մը խեղճ աղջիկը,
Եւ, ամօթխած, երկու ձեռքերը սեղմեց
Կուրծքին վրայ. Ա՜յ, այ, հիմայ կը մեռնիմ։
—Ո՞ւյ, ույ, կուլար.
Կը ճանկռտեն) կը խայթեն կոր դիս ասոնք.

Հասքը, Վինսեն,... Ճիշտ է որ—պէտք է ձեզ ըսել—
Պահէ մ'ի վեր թաքստոցին մէջ մեծ էր,
Մեծ ու սաստիկ էր յուզումը.
Պահէ մ'ի վեր, փոքրիկ տարմին մէջ թեւաւոր՝
Նորածիններրը խռովութիւն էին հանած։

Եւ հովիտին մէջ անձուկ,
Խումբն անառակ,
Զբկրնալով ազատորէն տեղաւորուիլ,
Ճանկով ու թեւով կը թապըլտըկէր,
Զառիթափներն ի վար կ' ընէր չբտեսնուած կլըմպոշտիկներ,
Զորերուն մէջ՝
Հազար ազատ դլորտուքներ։

—Ա՜յ այ, եկուր, շուտ, առ սրտոնք.
Կը հառաչէր էն, և ինչպէս բարունակը
Հովէն կ'դողայ, ինչպէս երինջ մը խայթուած
Ձիաճանճերէն,
Այնպէս կը հեծէ, կ'ստնու, կը թեքուի
Լըստենիներու պատանեկուհին...
Վինսեն էնոր մօտ կը թռչի... Երգեցէք,

Հաւաքելով ձեր ոստերուն տերևները,
Երգեցէք, երգեցէք, շերամաբոյծ աղջիկներ...
Ոստին վըրայ ուր էն կուլայ, ան կը թռչի կը հասնի։
—Խըտղըտուքէն ուրեմն այդքան կը վախնաս,
Կ'ըսէ էնոր իր բարեկամ բերնովը.
Է՜հ, եղիճներուն մէջ եթէ ինձ պէս
Պէտք ըլլար որ թափառէիր դուն շատ անգամ,

Ի՞նչպէս պիտի ընէիր։
Եւ իր գլխարկը նաւագի կ'երկընցընէ խնդալով
Որ չըփակին մէջէն ձագերն էն հանէ ու հոն դընէ.
Արդէն Միրէյօ. կերպասին ներքև
Զոր թռչնախումբը կ'ուռեցնէր,
Ձեռքը կը խօթէ ու երաշտահաւերը մէկիկ մէկիկ
Գլխարկին մէջ կը նետէ։
Արդէն, ճակատը վայրահակ,
Ու քովընտի քիչ մը դարձած.
Արդէն ժըպիտն արցունքներուն կը խառնըւէր,
Նըման ցողին որ առտուանց, գեղձերուն
Կը թըրջէ կակուղ բոժոժիկները,

Եւ կը գլորի մարգերտաձև
Ու կ'շոգիանայ արևուն նախկին ճաճանչներուն տակ...։

Եւ իրենց ներքև ահա ճիւղն յանկարծ
Կը ճարճատի ու կը կոտրի...
Էն, սարսափի ճիչով մը սուր,
Երկու թևով Վինսենին վիզը կը փարի
Ու մեծ ծառէն որ կը ճեղքուի,
Թաւալումով մ'արագադարձ՝
Խոտին վրայ կ'իյնան երկուորեակներու պէս իրար փակած։

Զով զեփիւռներ, տուն՝ ծովու հով, տուն՝ հիւսիսոով,
Որ կը շարժէք անտառներուն ամպհովանին,
Այս ամոլին վրայ մատաղ թող ձեր մրմունջը զբաղթ
Թուլնայ պահիկ մ'ու լռէ։
Դուք, խօլ սիւքեր, մեղմ շնչեցէք,
Ատեն տուէք որ երազեն,
Ատեն որ գէթ երջանկութիւնն երազեն։

Դուն որ կ'անցնիս դայլայլելէն,
Կամաց գընա, փոքրիկ առուակ,
Այդքան ձայն մի հաներ հնչուն խիճերուդ մէջ,
Ձայն մի հաներ, վասըն զի' բենց հոգիները
Նոյն ճառագայթին վրայէն հրեղէն՝ ահա սըլացան
Ինչպէս մեղուներն որ փեթակէն դուրս կը թռչին խմբով։
Թողէք թաղուին այերին մէջ ատղալից...

Բայց էն, բոպէ մը չանցած,
Բաշեց թևերն անոր վրէն...
Սերկևլիին նըւաղ տժգոյն են ծաղիկներն։
Ցեռոյ մարգին վրայ նըստան
Քով քովի,
Պահ մ' իրարու նայեցան,
Եւ ահա ինչ բաւ Վինսենն այն առեն

—Միրէյո, մէկ տեղդ արդեօք ցաւեցա՞...
Ո՞վ դուն, ամօթ ծառաստանին,
Ծառ սատանի, անիծած ծառ, զոր ուրբաթ օր մ'են տընկած,
Թող քեզ ծիւրախտը բընէ,
Թող ցեցն ուտէ քեզ,

Եւ թող տիրոջդ աչքին գերծող երևաս։
Բայց էն, դողով մ՚ դոր չի կրնար արգիլել,

—Չէ, ըսաւ, ոչ մէկ տեղրս չեմ ցաւցուցած։
Բայց ինչպէս մանուկ մը խանձարուրքի մէջ, որ մերթ կուլայ
Եւ չի գիտեր թէ ինչու,
—Բան մը ունիմ, ըսաւ, որ զիս կը տանջէ,
Զիս կոյր ու խուլ կ՚ընէ կարծես.
Խելքս վերաս չէ ու սիրտս կ՚եռայ,
Բոլոր մարմնոյս արիւնն հանգիստ չի կենար։

—Թերևըս, ըսաւ կողովագործը,
Վախուտ է որ մայրիկդ քեզ չկշտամբէ՝
Տերևաքաղն ուշ աւարտած ըլլալուդ,
Ինչպէս ես ալ չախ կ՚ուտէի երբ շատ ուշ տուն կը դառնայի,
Վերաս զլուխս պատրուտած և Արաբի պէս սևցած՝
Թութ հաւաքելու գացած ըլլալով։
—Օ՜հ. չէ, ըսաւ Միրէյօ, ցաւս ուրիշ է։

—Կամ թերևս արևն է գլխուդ զարկեր,
Ըսաւ Վինսէն,
Լեռներուն մէջը Պօի,
Ես կը ճանչնամ պառաւ մ՚ (անունն է Թավէն).
Ճակտիդ լեցուն դաւաթ մը ջուր կը փակցընէ,
Ու գինովցած ուղեղէն
Ճառագայթները՝ հրմայուած՝ բիւրեղին մէջ կը թափին։

— Չէ, չէ, պատասխան տուաւ Միրէյօ.
Հուրքն արևուն Մայիսի՝
Քրօի աղջկան մը չէ որ կրնայ երկիւղ պատճառել.
Բայց քեզ շիտակն ինչու չըսեմ...
Սիրտս ալ չի կրնար գաղտնիքը պահել.
Վինսէն, Վինսէն, կ՚ուզես գիտնալ.
Սիրահարուած եմ քեզի...

Առուակին մօտ, դալարիքներն և օդը ջինջ,
Եւ ուռիներն հինաւուրց
Պայծառօրէն ըղմայլեցան հաճոյքէ...
—Ա՜խ, դուն, բամբիշ, այդքան աղէտ ըլլով,
Ունեցաս չար լեզու մ՚այդքան,

Գուչեց խկոյն Վինսենը,
Ապշութենէ գետին գլորիլը կուգայ...

Ի՜նչ, դուն ինձի սիրահարուած.
Խեղճ կեանքիս հետ, որ երջանիկ է տակաւին,
Միրէյո, մի՛ խաղար, ի սէր Աստուծոյ։
Մի՛ հաւատացներ ինձի բաներ այնպիսի
Որ երբ անգամ ա՛յստեղ մտնեն ու փակուին,
Կրնան յետոյ ըլլալ մահուանը պատճառ։
Միրէյո, այդ կերպով կատակ մ՚ըներ ինձի։

—Թող արժանի չըլլամ երթալ Արքայութիւն,
Եթէ սուտ կայ խօսքերուս մէջ.
Քեզ սիրելուս հաւատալէ դուն չես մեռնիր,
Վինսեն... բայց եթէ անողորմաբար
Զիս չուզես քեզ սիրուհի,
Ե՛ս եմ, ես, որ, տխրութենէ հիւանդ ինկած,
Ոտքերուդ տակ պիտի հատնիմ։

—Օ՜հ, ա՛լ այսպէս բաներ մ՚ըսեր,
Քու և իմ մէջս անդունդ կայ,
Ամպրուայի որդին ըսաւ Թոթովելով.
Դուն ազարակին Լըտենիներու
Թագուհին ես, որուն առջև ամէն գլուխ կը խոնարհի.
Ե՛ս, կողովագործ մը Վալապրէկի,
Խեղճ անկուտի՛ մը, դաշտ չափող մըն եմ ես։

—Է՜հ, ինչ հոգս է որ սիրականս
Պառոն է եղեր կամ կողովագործ,
Կ՚օգտէ որ ինձ հաճելի՛ ըլայ, պատասխանեց Էնիկա շուտ,
Ու կրակ կտրած ինչպէս որայ կապող մը։
Սակայն եթէ չես ուզեր որ բարակ ցաւը
Քամէ արիւնս, ինչո՞ւ համար, ո՛վ Վինսեն,
Ցնցոտիներուդ մէջ ինձի այդքան աղուոր կ՚երևաս։

Կոյսին առջև խորոտիկ,
Ան շըւարած մընաց, ինչպէս ամպերէն
Թովուած թռչուն մ՚որ վար կ՚իյնայ կամաց կամաց։
—Դուն կախարդ ես ուրեմն, ըսաւ յետոյ յանկարծ,
Քանի որ տեսքդ զիս այսպէս կը նըւաճէ,

Քանի որ ձայնդ խելքիս գլխէս կը տանի
Ու դիս հարբած մարդու պէս խենթ կը դարձընէ։

Չե՞ս տեսներ որ դիս գրկելդ
Ուղեղիս մէջ կըրակ ձրգեց.
Որովհետև, թէ որ կ'ուզես իմանալ,
Նոյն իսկ եթէ միտքդ ինծի պէս խեղճուկ խուրձ կրողի մը վրայ
Խնդալ է միայն,
Միրէյօ, ես ալ կը սիրեմ քեզ, կը սիրեմ,
Եւ, ա՜խ, այնքան որ քեզ լափելիս կուգայ...

Այնքան որ եթէ բերանդ ինձ ըսէ՝
«Կուզեմ Այծն ոսկի (1),
Այն Այծն որ ոչ մէկը կարող է արածել կամ կըթել,
Որ ժայռին տակ պօ-Մանեէրի (2)
Կը լըզէ մամուռն ապառաժներուն»,
Կամ քարահանքերն մէջ կը կորչէի,
Ու կամ կը բռնէի քեզ կը բերէի այծը շիկամազ։

Կը սիրեմ քեզ, ո՜վ մոգական աղջիկ,
Այնքան որ եթէ «Աստղ մը կուզեմ» ըսէիր ինծի,
Զըկայ ծով, անտառ, հեղեղ խելագար,
Զըկայ դահիճ, հուր կամ երկաթ
Որ դիս կեցընէր. երկընքին դպչող լեռներուն ծայրը
Կ'երթայի զայն կ'առնէի,
Ու կիրակի օրը վըղէդ կը կախէիր։

Բայց ո՜վ աղուորն աղուորներուն,
Քանի կ'նայիմ, այնքան աւա՜ղ, կը շլանամ...
Ճամբուս վըրայ անգամ մը ես տեսած եմ
Թըզենի մը
Որ մերկ ժայռին էր կառչած մօտը վոքլիւզի քարանձաւին,
Այնքան վըտիտ, աւա՜ղ, որ գորշ—մողէսներուն
Յասմիկի փունջ մանկից էվել կրնայ շուք տալ։

Տարուան մէջ մէկ անգամ անոր արմատին մօտ
Կուգայ դըդըչալ ջուրը մերձակայ.
Եւ ցամաք թուփը յորդահոս աղբիւրէն
Որ դէպ իրեն կը բարձրանայ անոր ծարաւն անցընելու,
Կը սկըսի խմել ուզածին չափ...

Եւ սա իրեն ամբողջ տարի մը կը բաւէ ապրելու.
Ասիկա ինձ կը պատշաճի ինչպէս որ քարը մատնիին։

Ինչու որ ես թրգենին եմ, Միրէյո,
Եւ դուն աղբիւրն ու գովութիւն.
Ու երանի թէ ես՝ խեղճուկս, հրանի թէ տարին հեղ մը
Կարենամ ծունկ չոգած՝ ինչպէս այս պահուս՝
Արևնալ դէմքիդ ճառագայթներէն,
Եւ մանաւանդ թէ կարենամ վերըստին
Շոյել մատներդ համբոյրով մը դողդոջուն։

Միրէյո, սիրով համակ բարախուն,
Մըտիկ կ'ընէր. բայց կը գրկէ ան զէնիկա,
Խելացընոր կը գրկէ ան, և իր կուրծքին վերայ հուժկու
Զէն՝ խելացնոր՝ կը քաշէ ու կը տանի...։—Է՜, Միրէյո,
Ծառուղւոյն մէջ կը բարձրանայ պառաւի ձայն մը յանկարծ,
Շերամներն ինչ պիտի ուտեն կէսօրին։

Շոճի մը մէջ, ճնճղուկներու
Երամ մը որ մեծ իրարանցումով կը զբաղեցնայ,
Մերթ կը լեցնէ ճրճրուցով մը զբաղեցնայ
Գիշերասկիզբն որ կը զովնայ.
Սակայն զիրենք լրտեսող
Հասկաքաղի մը քարն յանկարծ եթէ անոնց մէջ իյնայ,
Ամէն կողմէ, սարսափահար, կը փախչին խորն անտառին։

Յուզուած, վրդոված, այդպէս կը փախչի՝
Տափաստանին մէջէն՝ ամբողջ տարփաւոր։
Էն դէպ ագարակն՝ անձայն անխօսուկ՝ կը մեկնի արագ,
Գլխուն վերայ կերելով ծրարը հաւաքուած տերևի.
Ան, անշարժ ինչպէս երազատես մը,
Խոպան դաշտին վրայէն էնոր վազելն, հեռուն, կը դիտէ...

Ֆրանս. թարգմ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ [1])

Պատեմկինի «յունական նախագիծը»

Արևելեան խնդիրը, կամ ուրիշ խօսքով՝ Տաճկաստանի գոյութեան խնդիրը, 125 տարուայ անցեալ ունի։

Այդ խնդիրը առաջին անգամ դրեց Պատեմկինը։ Երբ դաշն էր կնքուում Կատարինէ երկրորդի և Աւստրիայի Կայսր Յովսէփ II-ի մէջ, Պատեմկինի խորհրդով, կազմուեց «նշանաւոր յունական նախագիծը», որ նախատեսում էր մահմեդական աշխարհի կործանումը Արևելեան Եւրոպայում և նորա ստրկացրած քրիստոնեայ ցեղերի վերածնութիւնը։

Պատեմկինը ցանկանում էր, որ տաճիկները քշուեն Ասիա և վերականգնէ Բիւզանդիան, որի գահի վերայ պիտի բարձրանար Կատարինէ II-ի թոռ մեծ իշխան Կոստանդին Պաւլովիչը, ռուսաց գահի իրաւունքից հրաժարուելու և երկու տէրութեանց յաւիտեան անջատ գոյութիւն ունենալու պայմանով։

Տաճկաստանն ազատուեց նորանով, որ այդ ժամանակ Արևմուտքում բռնկեց ֆրանսիական յեղափոխութիւնը և դարձրեց դէպի ինքը միապետների ուշադրութիւնը, իսկ այնուհետև Նապոլէոնի զօրքերի տարափը։

Բայց, խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ, նա մտաւ անընդհատ շփոթութեանց շրջանը, որ առաջ էր գալիս իր հպատակների ապստամբութեան, դրացիների իւր սահմանները թեակոխելու և օտար տէրութիւնների հետ ունեցած բանակցութիւնների շնորհիւ։

Յունաստանի եւ Ռումինիայի ազատութիւնը։

Տաճկաստանի բաժանման գործում առաջին քայլը եղաւ յունական ապստամբութիւնը (1820—27 թուերին)։

---

*) Փոխադրուած Руль թերթից։

Այդ ապստամբութիւնն առաջինը սկսուեց Եպիրոսում, Կրէտէյի վերայ, Մօրէայում, կենդրոնական Յունաստանում և կղզիներում և միանգամից խիստ սուր բնաւորութիւն ընդունեց, որի մէջ երևաց անխնայ ոչնչացնող երկու կողմերի ցեղային և կրօնական անհամբերողութիւնը։ Գերիներին կոտորում էին։ Չէին խնայում նոյն իսկ կանանց և երեխաներին։

Այս պատերազմը, մեծ ծաւալ ստանալով, անգամ բոլոր երկրների բանաստեղծների երգի առարկան դարձաւ։

Եպիրոսում և Կրէտէում ապստամբութիւնը համեմատաբար շուտով ընկճուեց։ Բայց Մօրէայում, կենդր. Յունաստանում և Կղզիների վերայ տաճիկները նեղն ընկան. նոցա զօրքը նեղուեց, նաւատորմիղը՝ ոչնչացաւ։

Ծովի վերայի յաջողութեան համար ապստամբները պարտական էին Հիդրա, Սպէցիա և Պսարա կղզիների նաւատորմին, որ լաւ զինուորուած՝ նշանակուած էր առևտրական նաւատորմը պաշտպանելու համար և լուրջ պատերազմող ոյժ էր ներկայացնում։

Ապստամբները հրաւիրեցին իրենց առաջնորդ Ալէքսանդր Ի-ի մինիստր՝ կոմս Կապոդիստրիին։ Նա հրաժարուեց։ Բայց կայսեր խորհուրդ տուեց միջամտել, որի համար և պաշտօնանկ եղաւ։

Այս հոգսը իւր վերայ առաւ ռուսական գնդապետ Իպսիլանդին։ Նա գրաւեց Եաշն ու Բուքարէշը և այնտեղից ապստամբութիւն քարոզեց բոլոր հայրենակիցներին։ Ալէքսանդր I այս լսելով՝ հրաժարեցրեց նորան։

Նորա ձեռնարկութիւնը լիուլի անյաջողութեան հանդիպեց. նա փախաւ Վեննա, ուր և բանտարկուեց։

Սա մի նշան էր, որին ամենուրեք հետեց տաճիկների կոտորածը։ Տաճիկներն էլ պատասխանեցին զարհուրելի վայրագութիւններով։ Ի միջի այլոց Կ. Պոլսում եկեղեցու առաջ Զատկի օրը կախեցին պատրիարքին և 3 միտրոպոլիտ ամբողջապէս զգեստաւորուած։

Ռուսիայի և Տաճկաստանի միջև պատերազմը անխուսափելի դարձաւ, բայց Անգլիան և Աւստրիան, վախենալով Ռուսիայի զօրանալուց, միջամտեցին և միջադէպը հեռացրին առ ժամ։

Հետագայ թշնամական գործողութիւնների ժամանակ

յոյների հերոսութիւնը և տաճիկների խստութիւնը անխուսափելի դարձրեց Եւրոպայի միջամտութիւնը։

Ռուսիան, Անգլիան և Ֆրանսիան դիմում արին Տաճկաստանին վերջ տալ ապստամբների հալածանքին և ինքնավարութիւն տալ նոցա։ Այս դիմումը մերժուեց Տաճկաստանի կողմից այն առարկութեամբ, որ վերջինս չի թոյլ տալ ում և իցէ միջամտել իւր ներքին գործերին։

Այն ժամանակ ռուս-անգլո-ֆրանսիական նաւատորմը մտաւ Նաւարին և կանգնեց դէմ յանդիման Իբրահիմի նաւատորմին։ Սուլթանը զայրացած՝ սրբազան պատերազմ յայտարարեց անհաւատների դէմ, գլխաւորապէս աչքի առաջ ունենալով Ռուսիային։

Սկսուեց 1828—29-ի պատերազմը միաժամանակ Բալկանեան թերակղզում և Կովկասում, որ վերջացաւ Ադրիանուպոլսի դաշնադրութեամբ, որով Յունաստանին անկախութիւն տրուեց և ոչնչացրեց տաճկական գերիշխանութիւնը Ռումինիայում։

Պոլինեակի ծրագիրը

Պատերազմը դեռ նոր վերջացած՝ նախարար Պոլինեակը Նիկոլայոս I-ին առաջարկեց Ֆրանսիայի հետ դաշն կապել և տուեց մի նախագիծ Տաճկաստանի բաժանման. Ռուսիան ստանալու էր Ռումինիա, Աւստրիան՝ Սէրբիա և Բուլղարիա, իսկ Ճնացեալը անցնում էր Նիդերլանդներին, որոնք Հոլլանդիան պիջանում են Պրուսիային, իսկ Բէլգիան՝ Ֆրանսիային։ Բայց մինչև Պոլինեակի պատգամաւորը հասաւ Ադրիանուպոլիս՝ դաշնադրութիւնն արդէն կնքուած էր։

Սէրբիայի անջատումը

Այդ իսկ ժամանակ Սէրբիայի իշխաններից մէկը՝ Միլոշ Օբրէնովիչը, սուլթանի հաւատարմութիւնը գրաւելով՝ իրաւունք ստացաւ հարկերը ժողովել և զէնք պահել։ Զեզոք մնալով յունական ապստամբութեան և Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ՝ նա ժառանգական ազնուականութիւն շահեց, ամբողջ երկրից տաճկական բանակը յետ կոչուեց և Բէլգրադի փաշայութիւնից դուրս մի քանի նահանգներ էլ միացրուեց իւր երկրին։ Այսպէս սկսուեց Սէրբիայի ինքնավար գոյութիւնը։

1833 թուականը

Ադրիանուպոլսի դաշնադրութեամբ սուլթանը պատերազմական ծախք պիտի վճարէր, ուստի և Ռուսիայի խիստ ազդեցութեան տակ ընկաւ։ 3 տարի չանցած նորա դէմ ապստամբեց Մէհմէտ-Ալին։ Նա ցրուեց իւր դէմ ուղարկած տաճկական բանակը, գրաւեց Ասորիքն ու Պաղէստինէն և առաջ շարժուեց դէպի Բոսֆոր։

Տաճիկներն օգնութիւն խնդրեցին Անգլիայից և Ֆրանսիայից, որից հրաժարուեցին՝ Անգլիան Հոլլանդիայի հետ ռմբակոծութեամբ զբաղուած լինելու, իսկ Ֆրանսիան դէպի Մէհմէտ-Ալին տածած համակրութեան պատճառով։

Այն ժամանակ Տաճկաստանը կոչ արեց Ռուսիային։ Խնդիրը յարգուեց և Նիկողայոս I նաւատորմ և զօրք ուղարկեց, որոնք բանակեցան Կ. Պոլսի մօտ։ Անգլիան և Ռուսիան վախենալով Ռուսիայի չափազանց զօրանալուց՝ այնպէս երկիւղ ազդեցին Տաճկաստանին, որ նա Մէհմէտ-ալու առաջարկներն ընդունեց, որով Ասորիքը կառավարելու իրաւունք ստացաւ մինչև որ կենդանի էր։ Ռուսիան Հունքեար-Սկէլէսի պայմանագրով պարտաւորուում էր կարիք ժամանակ զօրքով օգնել Տաճկաստանին, իսկ վերջինս օտարների առաջ փակեց նեղուցները։ Անգլիան և Ֆրանսիան բողոքեցին, բայց անհետևանք։

1841-ի պայմանագիրը նեղուցների մասին

Այս երկու տէրութիւնների համաձայնութիւնը շուտով խախտուեց իրանց տարբեր յարաբերութեամբ Մէհմէտ-Ալիի գործողութիւնների վերաբերմամբ։

Նա, Ֆրանսիայից լքուած, ի վերջոյ հաշտուեց։ Որից յետ Մերձաւոր Արևելքով շահագրգռուած պետութիւնները յայտարարեցին մի պայմանագիր, որով նեղուցները փակուած էին բոլոր պատերազմական նաւերի առջև։

1854—5 թ. Խրիմի պայմանագիրը։

Նիկողայոս I 1852-ին կրկնեց Անգլիային 8 տարի առաջ արած առաջարկը. խորհրդակցել հիւանդ մարդու թաղման մասին (Տաճկաստանի) և Եգիպտոսն ու Կրիտէն առաջարկեց նորան, Կ. Պոլիսը իբրև գրաւական՝ թողնելով իրան։ Անգլիան, ինչպէս միշտ, պնդում էր Տաճկաս-

տանի պահպանութեան վերայ և անգամ խրախուսում էր նորան որ ընդդիմանայ։ Առիթը չուշացաւ. յունադաւան կղերը կռուի բռնուեց կաթոլիկ կղերի հետ ս. տեղերի տիրապետութեան առթիւ։

Ռուսիան և Ֆրանսիան, իբրև նոցա հովանաւորներ, բաւարարութիւն պահանջեցին։ Սուլթանը երկու կողմերի մրցութիւնից օգտուելով՝ դիմեց նոցա միմեանց հակասող հաւաստիացումներով։ Կ. Պոլիս եկաւ լիազօր դեսպան Մենշիկովը, որին յանձնարարուած էր Ռուսիայի խնամակալութիւնը ձեռք բերել ամբողջ Տաճկաստանի յունադաւան եկեղեցիների վերայ։ Անգլիայի ազդեցութեամբ մերժուեցաւ այս։ Մենշիկովը ուլտիմատում դրեց և մերժում ստանալով՝ խզեց դիւանագիտական կապերը։

Այս անգամ պետութիւնների համակրութիւնն առաջինը անցաւ Տաճկաստանի կողմը։

1856-ի Պարիզի վեհաժողովը։

Սևաստոպոլի անկումից յետոյ տեղի ունեցաւ Պարիզի կոնդրէսը, որ ի միջի այլոց նպատակ ունէր արևելեան հարցը լուծել։ Ռուսիան, Անգլիան, Ֆրանսիան, Աւստրիան, Պրուսիան և Սարդինիան ճանաչեցին Օսմանեան տէրութեան անձեռնմխելիութիւնը և հրաժարուեցին որ և է միջամտութիւն ունենալ նորա ներքին գործերում, Դանուբը համարուեց ազատ, Սև ծովը չեզոք, Ռումինիան իսպառ անկախ Տաճկաստանից։ Սուլթանը խոստացաւ բարենորոգումներ մտցնել և ի միջի այլոց քրիստոնեաների իրաւունքները հաւասարել տաճիկների հետ։

1875—78 թ. Բալկանում։

Խոստումը թղթի վերայ մնաց։ Հերցեգովինայում ճընշուած ազգերը ապստամբեցին։ Պետութիւնները արևելեան հարցից խոյս տալու համար իրանց դեսպաններին յանձնեցին բանակցել ապստամբների հետ։ Սոքա համաձայնեցին զէնքը վայր դնել, բայց ապահովութիւն պահանջեցին, որ մերժուեց։

Բերլինի մեմօրանդումը, որով պետութիւնների համերաշխութիւնը խթան պիտի լինէր Տաճկաստանին բարենորոգումներ մտցնել Բալկանում, նպատակի չհասաւ։

Ապստամբութիւնը զօրացաւ։ Սէրբիան և Չէրնոգորիան պաշտպան կանգնեցին իրանց ցեղակիցներին և պատերազմ յայտարարեցին Տաճկաստանին, որին մասնակցում էին և ռուս կամաւորները։ Սէրբիան կորստի վերայ էր, երբ Ալէքսանդր II-ը, Անգլիային հետևելով, ստիպեց Տաճկաստանին երկամսեայ հաշտութիւն անել և տեսնելով Տաճկաստանի յամառութիւնը պատերազմ յայտարարեց նորան։

Բերլինի վեհաժողովը 1878-ին։

Իշխ. Բիսմարկը միջամտելով՝ առաջարկեց վեհաժողով կազմել Բերլինում, ուր ի միջի այլոց Աւստրիային անորոշ ժամանակով յանձնեց Բոսնիան և Հերցեգովինան, իսկ Տաճկաստանին՝ Մակեդոնիան։ Իսկ Հայաստանի բարենորոգումներ մտցնելու 61-րդ յօդուածը կնքուեցաւ։

Հայաստանը, Մակեդոնիան եւ Կրետէ կղզին 1090—96 թ.

Մօտ 12 տարի Աբդուլ Համիդի քաղաքականութիւնը սուր կերպարանք չէր տալիս արևելեան խնդրին։ Բայց նորա վերաբերմունքի փոփոխութիւնը հայերի նկատմամբ նորից հերթական դարձրեց նորան։ Ռուսաստանն և Անգլիան կարծես թէ դերերը փոխեցին։

Անգլիան առաջարկում էր միջամտել, բայց Ռուսիան, մատնանշելով Բերլինի կօնգրէսը, Տաճկաստանի կողմն էր, իր կողմը քաշեց Աւստրիան ու Գերմանիան և, միջամտութիւնը մերժելով, Իլդիզ-Քիոսկում իւր վարկը վերականգնեց։

Անընդհատ յուզումները Մակեդոնիայում, երբ ի միջի այլոց սպանուեց Միտրովիցի ռուս դեսպան Շչերբինը, Կրէտէի մի շարք ապստամբութիւնները, այլ և յեղափոխականների ցուցանքաւոր գործողութիւնները նոյն իսկ Կ. Պոլսում (օսմանեան բանկի վերայ յարձակումը)—այս ամենը վերջի վերջոյ ստիպեց Եւրոպային իւր ասելիքն ասել։

Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան յանձնարարեցին այդ դերը Աւստրիային և Ռուսիային։

Նորից՝ բեմի վերայ։

Այսպէս ծնուեցաւ Աւստրիայի հէնց նոր խախտած Միւրցշտէգի համաձայնութիւնը։

Գերմանիայի այս դէպքում ոգևորող դերը, Ռուսիայի ստորացումը հեռաւոր արևելքի կոտորածից յետոյ—անվիճելի է։

Աւստրիային թելադրուած է քայլել դէպի Սալոնիկ, Տաճկաստանին—Կովկաս և Պարսկաստան։

Արևելեան հարցը նորից բեմի վերայ է, բայց այսքան երկիւղ չէ ներշնչել նա երբէք։

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐը [1]

IV

Ամերիկահայերը եւ յեղափոխութիւնը

Ամերիկահայոց յեղափոխական կեանքը կսկսի 1889 թուականէն։ Յեղափոխական գաղափարը այս նոր գաղթականութեան մէջ առաջին անգամ տարածողը Տիար Մկրտիչ Փորթուգալեանը կ՚ըլլայ, իր թերթին՝ Արմէնիան միջոցաւ, որ արդէն հրատարակուիլ սկսած էր 1885-ին, Մարսէյլի մէջ։ «Արմէնիա»-ն իր սկիզբի օրերէն սկսեալ իր կէտ նպատակը կընէ Արտասահմանի հայոց տեղեկութիւններ հաղորդել ազգային վիճակին և Հայաստանի վիճակին մասին, ու անիկա կը յաջողի այս կերպով արտասահմանի հայ գաղութներուն՝—ի մասնաւորի ամերիկահայ գաղութին— մէջ նոր ոգի մը արթնցնել և անոնց ուշադրութիւնը հայ ազգի իսկական պահանջների վրայ դարձունել։

«Արմէնիա» լրագրի պաշտօնը կը լինի յեղափոխական գաղափարի տարածումը հայ ժողովուրդին մէջ։ Անոր նպատակը կըլլայ հայ ժողովուրդին մէջ տարածել իր հայրենիքի վերականգման գաղափարը և քարոզել հայ ժողովուրդին ներքին ոյժ գոյացնել ազգին մէջ յեղափոխութեան համար։ Անոր այս սկզբունքներուն վրայ ահա Ամերիկահայ գաղթականութեան մէջ կը կազմուի «Հայոց Հայրենասիրական Միութիւն» անունով առաջին յեղ. կազմակերպութիւնը, 1899 թուականին, որուն կազմութեան

[1]) Լումայ 1907 3—4.

կը մասնակցի նաև Արմէնիա ի խմբագիր-տնօրէն պ. Մ. Փորթուգալեան։ Ասկէ քիչ յետոյ կը ծնի Հնչակեան կուսակցութիւնը, ընկերվարական հողի և Հայաստանը քանի մը տարիներու մէջ ազատելու ծրագրին վրայ։ «Հայոց հայրենասիրական» միութեան անդամներէն շատերն այնպէս կը վարուին որ իրենց տարեկան բաժանորդագին վճարելէ մէկ տարի յետոյ երբ կը տեսնին թէ հայոց թագաւորութիւն մը չի տրուիր և իրենց տուած քանի մը տալերներով, ով գիտէ ինչեր կերազէին իրենք, իրենց երևակայած մեծ մեծ բաներ չեն իրականանայ, կը ձգեն անդամակցութիւնին, մինչդեռ անդին Հնչակեան կուսակցութիւնը ասպարէզ իջած՝ յեղափոխական ըէքլամներ ընել սկսի, հայկական ապստամբութիւնը մօտալուտ է կը յայտարարէ և գեղջուկների սիրտերը թունդ հանելով՝ կազմակերպութեան գործը յառաջ կը տանէ։

Ամերիկահայ գաղթականութիւնը յեղափոխական տեսակէտով շատ գործ ըրաւ, բայց ոչինչ ըրաւ կարելի է անուանել, որովհետև իր ըրածին փոխարէն Հայաստանի օգուտ մը ծնանելու՝ փորձանքներ ծնաւ անոր գլխուն։ 1890—1895 թուականը Ամերիկահայը յեղափոխութեան համար ահագին գումարներ տուած է։

1896-ի Հնչակեան կուսակցութեան երկուքի բաժանումը, հին (Նազարբեկեան) ու նոր (վերակազմեալ) հընչակեան անուններով, պատճառ կը դառնայ Դաշնակցական կուսակցութեան զօրանալուն, որոնք ասկէ առաջ շատ թոյլ և անտես առնելու աստիճան կազմակերպութիւն մըն են եղեր։ 96 էն յետոյ Ամերիկահայ գաղթականութեան մէջ ուրեմն երեք տեսակ յ.ղ. կազմակերպութիւններ գոյութիւն կ'ունենան, հին ու նոր հնչակեան կուսակցութիւն և Դաշնակցական։

Նոր Հնչակեանները 96 էն մինչև 1901, հինգ տարուան շրջան մը, շատ աղուոր ու գնահատելի գործունէութիւն մը ցոյց կ'ուտան, իրենց միակ նպատակ ընելով՝ Ամերիկահայ ժողովուրդին միտքը, որ հայկական կոտո-

բածներէն յետոյ յեղափոխութեան դէմ ծռած էր և յեղափոխութիւնը ատել սկսած էր, շիտկել յեղափոխութիւնն ատել սկսած էր, շիտկել յեղափոխութեան հանդէպ։

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը՝ իր օրկանին (Նոր-կեանք որ կը հրատարակուէր Լոնդոնի մէջ Տիար Արփիար Արփիարեանի խմբագրութեամբ) միջոցաւ աշխատած է ժողովուրդին վրայ տիրող յուսահատութիւնը փարատել, ժողովուրդը յեղափոխական գաղափարին հետ հաշտեցնել, որմէ խրտչիլ սկսած էին ջարդերէն յետոյ, և զանի ապագայ յեղափոխական ապստամբութեան մը պատրաստել, անձայն ու անշշուկ։ Ասոնք շարունակեցին իրենց այս ընթացքը մինչև 1901 թուականը։ Ամերիկահայ ժողովուրդը շատ սիրալիր համակրութիւն մը ցոյց տուեց ասոնց հանդէպ մինչև այդ թուականը իր դրամական ձեռնտուութիւնն երբէք չի խնայեց, տուեց ինչ որ կ՚սպասուէր իրմէն։ Նոր Հնչակեան կուսակցութեան այս հինգ տարիներու շրջանին մէջ իրենց բոլորած աղուր ու ժողովուրդին սիրելի և Հայաստանի համար նպաստաւոր գործունէութիւնը վերագրելու է նոյն կուսակցութեան պետ՝ Տիար Արփիար Արփիարեանի իմաստուն ղեկավարութեան, որը Նոր-կեանքին միջոցաւ ժողովուրդը հաշտեցուց յեղափոխական գաղափարին հետ, կրթեց զանի ազնիւ գաղափարներով և իր կուսակցութիւնը տարբեր յեղափոխական կուսակցութեանց հետ ջանաց միշտ համերաշխ պահել։ Բայց այն օրէն երբ սոյն կուսակցութեան կարգ մը ուրիշ անձնաւորութիւններ, որոնք կեսրոնական վարչութեան ալ անդամներ էին և հեղինակութիւն ունէին կուսակցութեան մէջ, անհատական գձուձ հաշիւներէ ու փառասիրութենէ մղեալ վատ կերպով դուրս ձգեցին կուսակցութենէն Արփիարն, այն օրէն սոյն կուսակցութիւնը կարգ մը անհատներու ձեռքը շահու աղբիւր դարձաւ և իր հմայքը կորսնցուց ժողովուրդին աչքին առջև։

Ամերիկահայուն մէջ գիտակցական ոգի մը չի զարթ-

նեցաւ, անիկա չի կրցաւ հասկնալ թէ՝ որուն, որ կուսակցութեան ոյժ տալ պէտք էր, որ հայրենիքին համար նպաստաւոր ըլլար. չի կրցաւ ըմբռնել թէ՝ յեղափոխութեան անունով իր տուած դրամները նպատակին թէ իր կուսակցութեան գլխաւոր պետերուն հանգստի ու երջանիկ ապրուստներուն համար կը գործածուէր։ Ամերիկահայը զինքը յեղափոխութեան առաջնորդել հանդիսացողներուն ձեռքը կոյր գործիք մ եղաւ, տգէտ ամբոխ մը՝ որ անոնք իրենց անհատական հաճոյքներին ապահովելու միջոց մը գործածեցին, յաւէտ և ոչ ուրիշ օգտակարութեան մը համար։ Ամերիկահայ յեղափոխական տղայքներ, բարի ու միամիտ ամենքն ալ, ամենայն անկեղծութեամբ հետևեցան իրենց ներկայացուցիչներուն, նուիրեցին իրենց վաստակի արդիւնք եղող հազարաւոր տալէրները յեղափոխական սուրբ գործին համար, բայց չի կրցան գիտակցութեան հասնիլ որ իրենց կեղծ առաջնորդները իրենց մէջէն վտարէին և յեղափոխութիւնը սուրբ ու ճշմարիտ հողի մը վրայ դնէին։ Ընդհակառակը ոյժ տուին ամեն անոնց որ զինքը խաբեցին, իր դրամն ու կեանքը առին։ Արտառոց բան մը թող չի թուէր Ձեզ երբ ըսէի թէ՝ հոս, կուսակցականներ, գաղափարի մը ետև երթալէ առաջ մարդերու ետևէն գնացին, շիք հագուած, մօրուսաւոր, վայելչակազմ մարդերու, ասոնց գաղափարներն ընդգրկելէ առաջ՝ անձերը գրկեցին, պաշտեցին ասոնք իրենց ներկայացուցիչները՝ որովհետև ան իրենցն էր ու իրենց կուսակցութեան կը պատկանէր։ Ասունկ ծխեցին ասոնց ոտքերուն իրայ, հմայուեցան, մագնիսացուան ասոնցմէ, ու այսպէս տեսակ մը մարդապաշտներ դարձան. ալ կարելի էր որ իրենց պաշտած անձերուն թերութիւնները տեսնէին, անոնց սխալն հասկնային, անոնց որ ատիճանի վատ, աննկարագիր ըլլալնին ըմբռնէին և ասոնց ետևէն երթալէ զգուշանային։ Չէ, այս բանը կարելի չէր ասոնց համար, ասիկա անհանդուրժելի էր ու մահու չափ դժուար։

Կուսակցական մոլեռանդութիւնը մղեց զիրենք որ

եղբայրասպանութիւն ալ կատարուէր. Աբիկ էֆ. Ունճեանի նման ազգասէր ու պատուական հայեր ալ սպանուէր, Հայաստանը աղէտներով ալ լեցուէր, նորէն իրենք իրենց առաջնորդին ըրած սխալներուն առջև ծունկի գային ու երկրպագէին։

Ամերիկահայ կուսակցականներու հոգիներուն վրայ ճշմարտութեան ճառագայթը չի կրցաւ ծագիլ, անոնք մութին մէջ մնացին շարունակ և այսպիսով շահու աղբիւր մը դարձան իրենց պետերուն ձեռքն։ 1900 էն մինչև այս թուականն ասոնք շահագործուեցան պարզապէս իրենց առաջնորդներուն կողմէ, ու այս վիճակը պիտի շարունակուի տակաւին մինչև որ այս աշխարհի հայոց մէջ զիտակցութիւնը կարթննայ, մինչև որ յեղափոխութեան ոյժ տուողներ բարին ու կարճ իրարմէ զանազանելու աստիճան մտածումով չի հասուննան. Եթէ ամբոխը ամբոխ մնայ, զինքը շահագործողներ չպիտի պակսին, որ վատ կերպով պիտի խաբեն ժողովուրդը փայլուն ու շլացուցիչ խօսքերու տակ և անոր քրտինքի կաթիլներով ձեռք բերած զոհողութիւնը իրենց ստամոքսներուն մէջ պիտի հոլեցնեն ու փորերնին հաստացնեն։ Այս հաւաստումը կրնամ ըսել ձեզ, ու ասիկայ առանց վերապահումի, որովհետև պարագան ակներև է։

Հին Հնչակեաններ (Նաղարբէկեան) 96 էն մինչև 901 թուականը շատ ցանցառ ու տարտամ գործունէութիւն մ'ունեցած են ամերիկահայ քաղաքականութեան մէջ, անոր համար որ նախ՝ իրենց ծրագիրը ընկերավարական հողի վրայ դրուած ըլլալուն՝ ժողովուրդն անօգուտ ու անիրագործելի համարեց, երկրորդ ու ամենէն գլխաւոր պատճառը՝ երբեմնի իրենց ընկերակից և նոյն ժամանակուայ իրենց հակա-կուսակցութեան (նոր Հընչակեան) իրեն դէմ հանած արգելքներն ու խոչնդոտները, որուն պատճառաւ այդ կուսակցութիւնը չի կրցաւ մուտք գործել ամերիկահայ ժողովուրդին մէջ՝ այն չափով, որ չափով որ միւս կուսակցութիւնները (դաշնակցական և

նոր հնչակեան) գտան 96 էն—1901 ու գրեթէ մինչև ցայսօր։

Դաշնակցական կուսակցութեան գործունէութիւնը այս գաղթականութեան մէջ՝ 96 էն յետոյ սկսած կարելի է անուանել, կամաց-կամաց անոնք ալ իրենց վարդապետութեան ետևէն քալողներ ունեցան։

Նոյն երեք կուսակցութեանց մրցակցութիւնը գրեթէ մինչև 1900 թուականն ժողովուրդին անվնաս եղած է, բայց այդ թուականէն յետոյ մեծապէս աղէտաբեր։ Անոնք իրենց ուրոյն օրկան թերթերն ունէին արդէն այս երկրին մէջ 1900-ին (բացի հին հնչակեաններէ), որոնց միջոցաւ իրենց յեղափոխական (?) սկզբունքն ու գաղափարները կտարածէին ժողովուրդին մէջ։

Կուսակցական մրցակցութեան ամենագէշ, վատ ու աղտոտ թուականը 901 էն որ կը բացուի։ Մրցումը ակն յայտնի կերպով երկու կուսակցութեանց մէջտեղ էր. Դաշնակցական և Նոր Հնչակեան։ Մէկը միւսին արգելք հանդիսանալու, ժողովուրդը անկէ հեռացնելու, անոր գործունէութիւնը կասեցնելու համար ամենավատ միջոցներուն կդիմէին, իրար կը զրպարտէին, իրարու կը հայհոյէին, իրար կը հալածէին թշնամիէ մ՝աւելի և կաշխատէին իրարու արիւն խմելու։ Իրար հալածանքի այս քաղաքականութեան ծնունդ տուողները սոյն երկու կուսակցութեանց Ամերիկայի մէջ գտնուող ներկայացուցիչներն էին, թուով քանի մը անհատներ, որոնք ամբողջ կուսակցութիւնը իրենց ձեռքին մէջ առած՝ իրենց քմահաճոյքի ուզածին պէս կը ղեկավարէին, միւս հետևող դասակարգը պէտք էր ամենայն խոնարհամտութեամբ համակերպել այս ներկայացուցիչներուն։ Ասոնց թերթերը կարդալ անհնարին էր առանց խղճահարուելու, որովհետև լիքն էր հայհոյութիւններով։ Ամերիկահայը թոյլ գտնուեցաւ կուսակցական այս գէշ մրցակցութեանց առջևն առնելու։ Ամերիկահայը—ամբողջութիւն չեմ առներ, այլ այն մասը որ այս կուսակցութեանց ետևէն գնաց

այնպէս ինչպէս հրեայ ժողովուրդը Մովսէսին—չի կրցաւ ասոնք սանձահարել, չի կրցաւ ասոնց մրցակցութիւնը սահմանափակել, չի կրցաւ ասոնց արժանի բարոյական պատիժը տալ, այլ թոյլ տուաւ որ ասոնք իր մէջ եղբայրասպանութիւնը քարոզեն, ատելութիւն սերմանեն, եղբայրն եղբօր դէմ զինեն, իրար ամբաստանեն, իրարու հայհոյեն, իրարու հանդէպ թշնամանքով վերաբերուեն, սատեն, կեղծեն, ազգի մէջ աւերներ գործեն յանուն յեղափոխութեան։

Ամերիկահայեր, որոնք կուսակցութիւններու անդամներ արձանագրուեցան, կուրօրէն հետևեցան զիրենք դէպի կորուստ, դէպի անդունդ առաջնորդող իրենց առաջնորդներուն. մոլեռանդութիւն մը ստեղծուեցաւ ասոնց մէջ շնորհիւ սոյն կուսակցութեանց այս տեղի կարգ մը ներկայացուցիչներուն, և այս մոլեռանդութիւնը իրենց աչքերը կուրցուց. անոնք չի տեսան ճշմարտութիւնը որ իրենց պատկանած կուսակցութեան սահմաններէն դուրս կը յայտնուէր, անոնք մոռցան իրենց պարտականութիւնը՝ հայրենիքի հանդէպ, մոռցան թէ՝ եղբայրն ատելը վատ բան է, հայը՝ հայուն դէմ զինելը նոյնչափ ու աւելի վատ, մոռացան վերջապէս գաղափարական տեսակէտով տարակարծիք եղողի մը հանդէպ իրենց բռնելիք տարբրական օրէնքը ու մոռցած ամեն նրկատում նոյն ինքն այս մոլեռանդութեան երեսէն, և թոյլ տուին որ այս բոլոր սրտմաշուք բաները ըլլան և շահագործուեն իրենք իրենց կուսակցական պետերէն։

Ամերիկահայը տեղի տուաւ որ յեղափոխական անուանին տակ ապաստանող կարգ մը խաչագողներ շահագործեն ամբոխին տգիտութիւնը, ու ասոնք մեծաւ մասամբ յաջողեցան իրենց այս անարգ ծրագրին մէջ շնորհիւ նոյն այս ամբոխի տգիտութեան։

Ամերիկահայ յեղ. կուսակցութեանց վարիչ անդամները—շատ քիչ բացառութեամբ—չանացին որ ժողովուրդը գաղափարական պատրաստութիւն չ'ունենայ, ըմբռ-

նումով ու հասկացողութեամբ չի հասուննայ և ջանացին չեզոքացնել այն ամէն ջանքեր որոնք ժողովուրդը դաստիարակելու ընոյթն ունէին։ Ասոնք ժողովուրդը տգէտ պահելէ զատ իրենց գործելակերպը դրած էին զարնել, սպաննել իրենց դրամ տալ չուզող հայ հարուստները և իրենց համակարծիք չեղող հայ գրագէտները ու անկեղծ գործիչները։ Ու ասիկա յեղափոխութիւն(?) կը նշանակէր ասոնց համար։ Ամերիկահայը այսպիսի անձերի գրածներին նշանակութիւն տուեց և թոյլատրեց որ իրենց ուզածի չափ սուտեր և զրպարտութիւններ տարածեն ազգին անկեղծ գործիչներին վրայ և այդպիսով ժողովուրդը նախապաշարեց անոնց դէմ, որպէսզի անոնք երբ՝ փորձուեն իրենց շահատակութիւնները հրապարակ դնել չի յաջողին։ Ամերիկահայը մեր այս յեղափոխական գործիչներին հաւատաց, և ասոնք, այս տգէտ խուժանը որոնք ազգային կեանքէն բնաւ տեղեկութիւն չունէին, կոյր զկուրոյն հետևեցաւ անոնց, այնպէս որ եթէ հացի տեղ քար ալ տրուէր իրենց, ծամել կաշխատէին։

Ամերիկահայը սնոյց ու ապրեցուց այս կուսակցութիւնները և կը շարունակէ դեռ իր այդ պաշտօնը, կուսակցութիւններ՝ որ իրենց այպանելի ընթացքով թէ՛ ամերիկահայուն բարոյականը աւերեցին և թէ՛ մեծ մեծ ջարդելով, պոռոտախօսութիւններով հայ ազգը դէպի կորստեան անդունդը գահավիժեցին, և յեղափոխական գործը, որ երեսուն տարիներէ ի վեր պատրաստուել սկսած էր, ետ գարկին։

Ամերիկահայը մեղադրելի է այս բանին մէջ, որովհետև նոյն ինքն էր ասոնց գոյութեան պատճառը, ասոնց նեցուկ եղողը. Ամերիկահայը եթէ ինք իր գլխուն տէրն ըլլար, գիտակցութիւն ունենար, այն ատեն ոչ այս խաչագողները իր մէջ երևան կ'ուգային, ոչ այս հայրենասէր գործերը կը կատարուէին և ոչ ալ յեղափոխական գործը կը վտանգէին։ Ասոնք, այս պատահարները, որ սիրտեր կարիւնէ, չ'ըլլալէ չատ՝ գուցէ շէնք շնորհք բա-

ըիք մըն ալ ծընէր Հայաստանի գլխուն, ամերիկացուն տուած դրամով։ Ամերիկահայ յեղ. կուսակցութիւնները առ հասարակ պատուհաս և փորձանք դարձան թէ այս գաղթականութեան և թէ Հայաստանի գլխին։ Այս պիտի ըսեն ինծի հետ նոյնպէս անոնք՝ որոնք ազատ կըխորհին, ազատ ու խղճի մտօք կը մտածեն, կը դատեն, որոնց միտքերը կուսակցական նեղմիտ զգացումներով բեռնաւորուած չէ և կուսակցական մոլեռանդութեամբ չեն ապրիր...։ Այս նիւթին վրայ ալ այսչափ։

Ցաջորդիւ կը գրեմ ձեզ թէ Ամերիկահայերը ինչ օգտակարութիւն ունեցան Ազգային տեսակէտով։

Մ. Պէրպէրեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ամենքին յայտնի է, որ ծուլութիւնը հետևանք է մարդու կազմուածքի մկանային և նեարդային համակարգութեան սատակ թուլութեան. ծոյլ կամ անընդհատ յոգնած մարդը ընդունակ չէ աշխատելու։ Ահա թէ ինչու դիտնականները երկար ժամանակ է ինչ զբաղուած են յոգնածութեան հետազօտութեամբ, բայց մինչև այժմ ոչ մի հետևանքի չէին հասել։ Միայն նորերս Բերլինի բժիշկ Վէյնարգին յաջողուել է գտնել յոգնածութեան պատուասար։

Կենդանի կազմուածքի ամեն մի մկանային և նեարդային աշխատանքի ժամանակ, տեղի են ունենում մի շարք քիմիական, էլեքտրական և մեքենայական գործողութիւններ, որոնք պատճառ են լինում մկանային և նեարդային հիւսուածքների քայքայման։ Այդ գործողութիւններից առաջ են գալիս մի շարք նոր գոյացութիւններ, որոնք իրանց մէջ թոյն են պարունակում։ Ցիշեալ թոյնը թունաւորելով մարդուս կազմուածքը նրան դարձնում է թոյլ և գործելու անկարող։

Բժշկապետ Բանկէն գտաւ, որ յոգնածութեան գլխաւոր թոյնը մսակաթնային թթուուան է։ Սպիրօյի փորձերը ցոյց են տուել, որ մսակաթնային թթուու
ը խիստ յոգնածութեան ժամանակ հաւաքւում է արեան մէջ։ Մասսոն բազմիցս անգամ կատարել է հետևեալ փորձը՝ կենդանուն, օրինակ՝ շանը, այնքան են վազեցնում, մինչևոր նա յոգնածութիւնից վայր է ընկնում։ Այդ շան արիւնը սրսկում են մի ուրիշ՝ առողջ և հանգիստ շանը։ Այս գործողութիւնից անմիջապէս յետոյ վերջինիս վրայ նկատւում են յոգնածութեան բոլոր նշանները։

Հարկաւոր է ասել, որ բացի կատարեալ յոգնածութիւնից

կայ և յարաբերական յոգնածութիւն։ Ցանախ ասում են «մարդը յոգնել է, նրա մկանները ընդունակ չեն աշխատելու», այդ հիշա չէ։ Մինչև կազմուածքը ապրում է, չնայելով նրա յոգնածութեան, միշտ կարելի է արհեստական կերպով մկանները ի կծկում առաջացնել։ Սորանից երևում է, որ դեռևս չմեռած կենդանու յոգնածութիւնը կարող է լինել միայն յարաբերական. այսինքն՝ թէպէտ մկանները այլևս չեն հնազանդւում նրա կենդրոնական ուղեղային գործիքին, բայց դեռ ընդունակ են կրծկուելու։ Մինչդեռ կատարեալ թուլութիւնը նշանակում է մահ, կամ նրա գործնական նիւթի քիմիապէս այրուելը։

Այսպէս ուրեմն Վէյհարդը մկանը հասցնում էր մինչև կատարեալ յոգնածութեան. այնուհետև լաւ ջարդում էր, հարում և ստացուած զանգուածից հիւթ պատրաստում. ապա ասպիճանաբար հանելով յայտնի և արդէն հեատազօտուած հիւթերը, մնացորդը թորում էր կենդանու թաղանթի միջով։ Այս կերպով նրան յաջողուեց ստանալ յոգնածութեան թոյնը մաքուր տեսակի, որ և անուանուեց յոգնածութեան տոկսին։

Այս գիւտից յետոյ Վէյհարդը փոխեց իր ծրագիրը և փորձեց յոգնածութեան տոկսինի դէմ հակաթոյն դտնել։

Նրա ջանքերը իզուր չանցան և նրան յաջողուեց դտնել հակայոգնածութեան շիճուկը։

Բայց ասած է «չիք բարիք առանց չարեաց և չարիք առանց բարեաց». հակայոգնածութեան շիճուկը ոչնչացնելով յոգնածութեան անախորժ զգացողութիւնը, միևնոյն ժամանակ զրկում է կազմուածքը ֆիզիքական աշխատանքը կանոնաւորող ոյժից։ Բայց չպէտք է մոռանալ, որ գիւտը դեռ նոր է. պարզ է, որ գիտութիւնը դորանով չի բաւականանայ, այլ կ'ջանայ զոբաղնել և վնասակար կողմի ոյժը։

Փորձերը առ այժմ կատարուել են միայն կենդանիների վրայ, բայց կան հիմունքներ, որոնք թոյլ են տալիս հաստատ համոզուելու, որ այս ամենը գործադրելի կ'լինի և մարդու վերաբերմամբ։

Օր. Սուարդ Աղաննանց

ՆԱՄԱԿ Կ.-ՊՕԼՍԻՑ

10 յունուարի 1908

Հոգելոյս Հայրապետի մահուան առիթով նոյեմ. 6-ին փառաւոր հանդէս տեղի ունեցաւ Մայր եկեղեցւոյ մէջ, ամբողջ եկեղեցականութեան, դեսպանական ներկայացուցիչներու, ժողովականներու և խորհրդականներու ու խուռներամ բազմութեան հետ։ Շնորհքով դամբանական մը ալ խօսեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Եւ մացես 'ի գերեզման իբրև զցորեան հասեալ 'ի ժամանակի հնձեալ» բնաբանով։ Կառավարութիւնը չմոռացաւ դամբանականի քաղուած հրատարակել. և հազիւ թէ հանդիսին վրայ քիչ մը բան գրեցին լրագիրները։ Բայց բոլոր ունկնդիրներ մեծապէս գոհ մնացին։

Հանդուցեալին վրայ խօսիլ աւելորդ կը տեսնեմ, որ ամենէն եռանդնոտ լրագիրներդ ալ վարչական գործունէութեան մասին վերապահութիւններ կրնեն, և ես ալ կրսեմ, որ եթէ աւելի կանուխ մեռած ըլլար, աւելի փառաւոր մեռած պիտի ըլլար։ Բայց այլևս անցածին վրայ խօսելու տեղը չէ։

Մինչև հիմայ կարծիքը այն էր թէ Հայութեան դերակշռութիւնը տաճկահային է. և անոր կենդրոն ալ Պոլիս է։ Այժմ այդ գիրքը սկսած է խախտիլ. ռուսահայը աւելի է քան տաճկահայը, թուով ալ աւելի, զարգացմամբ ալ, կարողութեամբ ալ։ Ռուսիոյ վերջին կացութիւնը նպաստաւոր է յառաջադիմելու, մինչ Թուրքիոյ կացութիւնը կը մղէ յետսդիմելու։ Ամերիկա, Եւրոպա, Պուլկարիա, Եգիպտոս նոր հայութիւններ կազմեցին, որոց վրայ Պոլիս այլ ևս չկրնար ազդել, և աւելի կրնան ազդուիլ էջմիածինէ։ Ըստ այսմ Հայութեան դերակշռութիւնը կը փոխուի դէպի էջմիածին, բայց էջմիածինը նախապատրաստելու է այդ գիրքին և տալու է այնպիսի կերպարան, որ կացութեամբ և վարչութեամբ և մասնակցութեամբ կարենայ տանել նոր բեռը։ Ահաւասիկ կաթողիկոսական ընտրութեան մէջ նկատուելիք կէտը. այժմ շինելու և շտկելու և ամրացնելու պէտքն է որ պիտի նայուի։

Սակայն կաթողիկոսական խնդրոյն վրայ այստեղ բնաւ խօսք չկայ տակաւին, վասնզի առիթ ալ չկայ, սինոդի հրաւիրագրերն տակաւին չէ հասած 'ի պատրիարքարան, որ ինչպէս յայտնի է, Ռուսաց դեսպանատան միջոցաւ պիտի ժամանեն։

Հայրունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

[redacted] Դեկտեմբեր ամսին կարճատև հիւանդութիւնից յետոյ Բաղուում վախճանուեց Պերճ Պռոշեանցը, հայոց վերջին կէս դարու այնքան բեղմնաւոր վիպագիրը, «Սօս և Վարդիթերի», «Հացի խնդրի» և ուրիշ բազմաթիւ վէպերի հեղինակը, որի գրուածների մեծագոյն մասի նիւթը իւր հայրենի Աշտարակ գիւղի հայ ժողովուրդն է:

Պռոշեանցի մարմինը ուղարկուեց Թիֆլիս, ուր Վանքի ս. եկեղեցուց կատարուեց նորա յուղարկաւորութիւնը դէպի Խոջիվանքի հանգստարանը:

Հայ ժողովուրդը բուռն կերպով արտայայտեց իւր յարգանքը դէպի այդ նշանաւոր գործիչը, բազմաթիւ պատգամաւորներ և պսակներ ուղարկելով թաղման արտասովոր հանդիսին:

Հանդուցեալը բացի տառանծին գրքերով տպուած վէպերից՝ մասնակցում էր գրեթէ բոլոր ազգային թերթերին, 'ի միջի այլոց աշխատակցում էր «Լուսային» և մենք խորին կերպով համակուած մեր քանքարաւոր աշխատակցի մահով՝ մեր վիշտն արտայայտեցինք հետևեալ նամակով յանուն թաղման կարգադրիչ մասնաժողովին.

«Խմբագրութիւնս խորապէս վշտացած ազգային վիպասան և իւր համակրելի աշխատակից Պերճ Պռոշեանի մահուամբ՝ յայտնում է իւր առ ի սրտէ ցաւակցութիւնը և որոշել է պսակի փոխարէն յանուն Պռոշեանի հիմնուելիք գրադարանին նուիրել «Լուսայի» 12 տարուայ բոլոր համարները: Թաղման հանդիսին խմբագրութեանս կողմից ներկայ է լինելու Վարդգէս Աղանեանը»:

[redacted] Հին գործիչները մէկը միւսի ետևից անյայտանում են, ոյժերը պակասում,բռնում են արդեօք նոցա փոխարէն նորերը՝ դժուար է ասել. երեկ Պռոշեանը թողեց աշխարհը, այսօր էլ Սմբատ Շահազիզեանը, «Լեռնի վշտի» քանքարաւոր հեղինակը, բայց որ զուգադիպական է՝ երկուսն էլ Աշտարակցի, երկուսն

էլ դաղափարներով և հայեացքներով շատ նման մէկմէկու։ Հայ ժողովուրդը, սուտ չէ ասած, թէ գիտէ թաղել. թէ՛ մէկին և թէ միւսին թաղեց արժանաւորապէս։ Խմբագրութիւնս իւր վիշտը միացնում է հայ հասարակութեան ղդացած թախիծին տաղանդաւոր բանաստեղծի մահուան առիթով։

[redacted] „Стол. поч."-ը հաղորդում է, որ Կովկասի Փոխարքայութեան խնդիրը վերջացել է այս օրերս։ Փոխարքայութիւնը վերացուում է։ Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ կնշանակուի գեներալ Զարուբաևը, իսկ զինուորական մասինը գեներալ Ռէննէնկամպֆը։

[redacted] Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը, ինչպէս յայտնի է, Գալիցինի հրամանով սեղմուեց և վերածուեց Թիֆլիսի Հայոց բարեգ. ընկերութեան։ Վերջինս օգտուելով ժամանակիս յարմարութիւնից՝ անցեալ տարի խնդրամատոյց էր եղել ներկայ Փոխարքայ կոմս Վորոնցովին, որ վերադարձնէ իրեն նախկին կանոնադրութեան շնորհած արտօնութիւնները և վերակոչուի ընկերութիւնը Կովկասեան Հայոց։ Ուրախութեամբ պիտի արձանագրենք այսօր, որ կոմսը յարգեց այդ խնդիրը և այս օրերս հաստատեց Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութեան լիուլի կանոնադրութիւնը։

[redacted] Յունուարի 25-ին ուրբաթ երեկոյեան «Աղբիւր» մանկական ամսագրի 25 ամեակի առիթով՝ նորա խմբագիր պ. Տ. Նազարեանցի հրաւէրով «Աղբիւր-Տարազի» խմբագրատանը կայացաւ նուագահանդէս՝ բազմաթիւ հրաւիրեալների ներկայութեամբ։ Նատ թերթերի խմբագրութիւններից ներկայ էին պատգամաւորութիւններ՝ 25 ամեակը շնորհաւորելու և մատուցուեցան անխոնջ և ստկուն խմբագրին բազմաթիւ շնորհաւորական ուղերձներ։ «Լումայ»-ի խմբագրութիւնն ևս իւր խմբագրով և երկու աշխատակիցներով ներկայ գտնուելով նուագահանդէսին՝ խմբագրութեան ուղերձը մատուցին պ. Նազարեանին։

Այդ ի հարկէ յոբելեան չէր, այլ միայն մի յարգանք 25 ամեայ թերթի գոյութեան. իսկ յոբելեանի և «Աղբիւր-Տարազ» թերթերը ապահովելու համար նուագահանդէսի վերջը մի քանի առաջարկներ եղան հանդիսականների կողմից, որ ցանկալի էր անշուշտ իրականացած տեսնել։

Բոլոր հրաւիրեալները սիրալիր կերպով հիւրասիրուեցան պ. Նազարեանի կողմից թէյով և քաղցրեղէնով։

[redacted] Բաքուի Հայոց Կուլտուրական միութեան ճիւղերն են բացուել մի քանի հայաբնակ վայրերում, օրինակ

Էջմիածին, Երևան և այլն. և ինչպէս մեզ հաղորդում են Բաղուից, շուտով բաժանմունքներ կբացուեն նաև մի քանի այլ քաղաքներում։

Ս. Էջմիածնից մեզ գրում են, որ առ այժմ ճեմարանում հանգստութիւն է տիրում. շնորհիւ տեսուչ պ. Մինաս Բերբերեանի կամաց-կամաց բարձրանում է նա ընկած վիճակից։ Այդ դուր չէ գալիս Էջմիածնի և դրսի մի քանի մութ անձերին, որոնք բոլոր միջոցների դիմում են՝ ճեմարանի հանդիսաը վրդովելու համար։ Ըստ երևութին աշակերտութիւնը և ուսանողութիւնը հասկացել են այս խաղը և այլ ևս չի ուզում թակարդը ընկնել։ Աշակերտութիւնը ուզում է աշակերտութիւն անել։—Ամենապատ պատիժը՝ բանտարկուների համար։

Հային յատուկ անհանդիստ բնաւորութիւնը բուռն կերպով երևան է եկել և Պարսկաստանի մի անկիւնում—Զուղայում։ Թէպէտ ոչ մի տեղ էլ պակաս դեր չէ կատարում այդ պատմական յատկութիւնը։

Մեզ ուղարկուած է Զուղայի Ամենափրկչեան վանքի տպարանում տպած մի «արձանագրութիւն» և «ակամայ պատասխան», որոնցից երևում է, որ Պարսկաստանում պաշտօնավարող երկու վարդապետներ—Բաղրատ վարդ. Վարդապետեանը և Խորէն վ. Տէր-Վարդանեանը իրենց անբարեացակամ յարաբերութիւններով միմեանց հետ՝ պատակոտում են առաջացրել Զուղայի ու Համադանի հայ նահապետական բնակչութեան մէջ։ Այդ տպած թերթիկները երկսեռ դպրոցների հոդաբարձութեան կողմից հրատարակուած պատասխանն ու հրաւիրած ընդհանուր ժողովի որոշումն է, որոնք պաշտպան են հանդիսանում առաջնին և դատապարտում երկրորդին։—Սակայն մենք ստիպուած ենք մեր կարծիքը վերապահել՝ գործին հանգամանքներն ծանօթ չլինելով։

Յունուարի վերջերին Թիֆլիսում վախճանուեց մեր ականաւոր հայերից մէկը—Միքայել Ց. Թամամշեանցը, որ յայտնի էր իւր մաքուր և գաղափարական գործունէութեամբ։ Հանգուցեալը երկար տարիներ վարում էր քաղաքիս Առևտրական բանկի կառավարչի պաշտօնը և միաժամանակ մասնակցում էր ազգային բոլոր նշանաւոր գործերին։ Թամամշեանը յատուկ սիրահար էր հայրենիքի և ժողովում էր հայութեան վերաբերեալ ամեն տեսակ հնութիւններ։ Ինքնանկան թուականներին նա իւր տանը ժողովներ անելով՝ խմբագրում էր մի կանոնադրութիւն Թիֆլիսում հայկական թանգարան հիմնելու։

ժողովներին մասնակցում էին պ. Կ. Կոստանեանը, հանդ. Ա. Երիցեանը և Թերթիս խմբագիրը. և դեռ նորա այս դեղեցիկ դիտաւորութիւնը չիրականացած՝ երկու մեծ դժբաղդութիւն միանեանց ետևից քայքայեցին նորա առողջութիւնը և ստիպեցին պաշտօնը թողնել ու Եւրոպա տեղափոխուիլ. վախճանուեց նրա ամուսինը՝ տ. Լիդիան, որ նոյնպէս հասարակական լաւագոյն գործիչներից մէկն էր, ծանր հիւանդացաւ ինքը Միքայել Իվանիչը։

Եւրոպայում փոքր ի շատէ վերականգնելով իւր առողջութիւնը՝ Թամամշեանը ստանձնեց Փարիզի ռուսական դպրոցում ռուս լեզուի և արևելագիտութեան դասերը և այնտեղից աշխատակցում էր տեղւոյս Թերթերին, 'ի միջի այլոց և «Լուսային», փոքրիկ մատենախօսական յօդուածներով։

Վերջերս նորա հիւանդութիւնը զօրանալով՝ վերջ տուեց նորա բաղմարդիւն կեանքին։

Բաղուի Կուլտուրական միութիւնը խնդրել է Կովկասեան Փոխարքայից թոյլ տալ իրան՝ հանգանակութիւն բանալ ամեն կողմ՝ Վէրք Հայաստանի հեղինակ Խաչատուր Աբովեանի անուան արձան կանգնելու համար։

«Մշակը» հաղորդում է, որ այս տարի լրանում է պ. Նիրվանզադէի 25-ամեայ գործունէութիւնը և առաջարկում է յօբելեանը տօնել։ Նատալում ենք յայտնել, որ դեռ անցեալ տարուանից խմբագրութիւնս յանձնարարել է իւր աշխատակիցներից մէկին գրել մեր տաղանդաւոր աշխատակցի գրական գործերի մասին մի ընդարձակ մատենախօսական յօդուած նորա 25-ամեակի առիթով։ Մենք կվերադառնանք այս խնդրին։

Հանդ. Կաթողիկոսը դպրոցական գործիչների համար կարգադրութիւն էր արել զանազան ժամանակ՝ կոնդակներով։ Հրամայել էր Ներսիսեան դպրոցին թոյլ տալ Ֆրանսերէնի ուսուցիչ յայտնի դրագէտ պ. Յարոյին և Յովհաննեան ուսումնարանի տեսուչ՝ նախկին «Մուրճ» ամսագրի խմբագիր-հրատարակիչ պ. Լ. Սարգսեանցին. այդ երկու կոնդակներն էլ իւր ժամանակին չկատարուեցան պատշաճաւոր հոգաբարձութիւնների կողմից։ Այժմ Մշակը հաղորդում է, որ պ. Սարգսեանը դատարանի է դիմել իւր իրաւունքը պաշտպանելու և ռոճիկը ստանալու համար, իսկ մենք էլ լսել ենք, որ պ. Յարոն դատ է սկսում Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեան դէմ, որ չէ կատարել կաթողիկոսի իւր մասին արած կարգադրութիւնը։

Եգիպտոսում սպանուել է «Մշակի» երկարամեայ թղթակից Արփիար Արփիարեանը, որի գործունէութեան մա-

սին այսօր ընթերցողը կգտնէ տեղեկութիւններ «Լումայի» մէջ «Ամերիկայի հայերը» յօդուածում: Ցաւում ենք, որ 20-դ դարում, կարծիքների և հայեացքների ազատութեան այս դարում, ժառանգութիւն ենք ստացել վայրագ սպանութիւններ. հասել ենք այն միջնադարեան օրերի՝ երբ մի ճշմարտութիւն ասելու համար մարդու լեզուն էին կտրում և մարմինները դաղում: Ամօ՞թ...

Բագուի Հայոց Կուլտուրական միութեան հրատարակութեամբ Թիֆլիսում մամուլի տակ է Խաչատուր Աբովեանի Վէրք Հայաստանին և այս օրերս լոյս կտեսնի: Այդ հրատարակութեան համար պ. Դ. Աւան Իւղբաշեանը նուիրել է մի հազար ռուբլի:

Յունուարի 28-ին Թիֆլիսի Հայ Թատրոնը ասնեց իւր դոյութեան 50-ամեակը: Արտիստիք Թատրոնում տուած հանդիսաւոր ներկայացմանը, ուր խռնուել է մեծ բազմութիւն, այն հաստատութիւնները, որոնք հրաւէրներ էին ստացել, ուղարկել են իրանց ներկայացուցիչներն ու պատգամաւորութիւնները, որոնք հերթով ուղերձներ են կարդացել իրանց ուղարկող հաստատութիւնների կողմից:

Վերջին օրը ստացանք «Արարատ» ամսագրի յունուարի գիրքը, որ հրատարակւում է Գարեգին վարդ. Յովսէփեանի խմբագրութեամբ. ամսաթերթը գլուխ կերպով տարբերւում է նախկին «Արարատից» թէ ծաւալով, թէ արտաքինով և թէ բովանդակութեամբ: Իսկոյն երևում է, որ խմբագրւում է մի հմուտ և լուրջ անձնաւորութեան ձեռքով:

Եղբորք Ալէքսանդր և Միքայէլ Նազարեանց ի յիշատակ իրենց հանգուցեալ եղբօր դուստր Մարիամի՝ մի հարիւր ռուբլի յանձնեցին Թերթիս խմբագրին յօդուտ կովկասահայ սովեալների: Խմբագրութիւնս այդ հարիւր ռուբլին անցեալ դեկտ. 13-ին յանձնեց Թեմիս սրբ. Առաջնորդին՝ Նպատաստամատոյց Ցանձնաժողովին հասցնելու համար:

Հետաքրքրական նորութիւն է մեր քաղաքի համար չլի կանանց դրամարկղներ (կասսա) բանալը: Մինչև այսօր բացուած են մօտ 8 դանազան կասսաներ և ինչպէս ասում են աւելի քան 50 այդպիսի կասսաներ հիմնելու խնդիրներ են տուած նահանգապետին: Կասսան պահւում է անդամների անդամավճարներով, իսկ իւրաքանչիւր ապատուոյ ծննդական տանում է իւր փնտրածի կրկնապատիկ դումարը: Կասսաները մեծ յաջողութեամբ գործում են այսօր, բայց թէ ի՞նչ կլինի նոցա վախճանը, երբ փոխանակ 8—10-ի՝ գործեն 50 և աւելի

կասաներ, կարծում ենք շատ պարզ է—գրեթէ բոլորն էլ միանգամից կփակուեն, ճիշտ այնպէս, ինչպէս որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստից յետոյ՝ հայ լրագիրները։

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Անցեալ տարուայ վերջերին Վանքի ա. եկեղեցում կայացաւ նոր երեցփոխանի և 3 հոգաբարձուների ընտրութիւն։ Ժողովում Վանքի 1804 ընտրողներից ներկայ էին 29 հոգի, որոնք և կատարեցին ընտրութիւնները։

Այդ ժողովի մասին մի լուր կար տպուած «Վասակ» լրագրում, ուր, 'ի միջի այլոց ասուած էր, թէ ես ցանկանում էի ընտրուել հոգաբարձու, բայց հէնց որ տեսայ միածայն չեն ընտրում, այլ պիտի ենթարկուիմ քուէարկութեան՝ հրաժարուեցի։

Այս լուրը զուրկ է ամենայն ճշմարտութիւնից. իրողութիւնն այս է, որ ժողովականներից մէկը և յատկապէս պ. Օքրոյեանը առաջարկեց, որ հոգաբարձուներից մէկը ցանկալի էր քահանաներից ընտրել և մատանիշ արին ինձ վրայ։ Ես դորան պատասխանեցի, թէ «բացէ ի բաց հրաժարուում եմ որևէ պաշտօնի քուէարկուելուց» և իմ կողմից առաջարկեցի ընտրել մեր աւագերէցին։

Ո՞րտեղից «Վասակի» պ. լրատուն հնարեց վերոյիշեալ անհեթեթ սուտը՝ չգիտեմ. բայց ես կարծում եմ աւելի լաւ կանէր պարոնը, եթէ դորա փոխարէն պարզէր հասարակութեան, թէ ինչպէս 1804 քուէ ունեցող մի ծխից՝ 29 հոգով կայացած ժողովում ինն ձայն ստացողներից մէկը, դիցուք հէնց պ. Տիգրան Յովհաննիսեանը ընտրուած համարուեց հոգաբարձութեան պաշտօնի։

Վանքի ա. եկ. ծխական Գիւտ ա. ք. Աղանեանց

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱԳՈՒ. Ա. Տ.-Գ.—Ձեր բանաստեղծութիւնը կտպուի միւս համարում։

ՔԻՇՆԵՒ. Կրպէ.—Ձեր յօդուածը կտպուի. մենք մեղաւոր չենք, որ ուշանում է։ Հայ մամուլի վիճակն է այդպէս։

Ն.-ԲԱՑԱՉԻՏ. Խանդալէ.—Ձեր վէպի մասին որոշում կանէ խմբագրութիւնս շատ շուտով. և այդ մասին նամակ կստանաք։

ԿԱՐՍ. Ա.-Բ. Յ.—Ստացել ենք «Այր Աստուծոյ Միշան» և «Քրիստոս յարեաւ». կկարդանք և խմբագրութեանս որոշումը կյայտնենք։

ՂԱԶՎԻՆ. Պ. Ա. Յ.—Ստացանք ձեր բանաստեղծութիւնները. կարդացէ՛ք վերևի պատասխանը։

ՄՈՍԿՈՒԱ.—Լազարեան նեմարանին Արևելեան լեզուաց.—Ստացանք Ձեր ուղարկած յայտարարութիւններից մի կապոց, որոնք վերաբերում են Էմինեան ազգագրական ժողովածուին։ Հետաքրքիր է իմանալ, ինչ նպատակով է ուղարկուած մեզ յայտարարութիւնների ծրարը. եթէ տարածելու համար՝ հապա ինչպէս գպրոցիդ վարչութիւնը խարութիւն է դնում հայ թերթերի խմբագրութիւնների մէջ և մեր թերթին երբէք ոչ մի օրինակ իւր հրատարակութիւններից չէ ուղարկել ծանօթանալու այն հրատարակութիւններին, որոնց յայտարարութիւնները ուղարկում է մեզ՝ ծրիարար տարածելու։

ԲԱԳՈՒ.—Լևոնեանին. ստացանք. կկարդանք և կպատասխանենք։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Օրացոյց ս. Էջմիածնի 1908 թ. Մայր Աթոռից.

Албертъ Вандаль. Армяне и турецкія реформы, пер. съ фр. М. Алавердянцъ, Спб., 1908.

Վարկատու ընկ. կանոնադրութիւն, փոխ. Գ. Ենգիբարեան, Բաղու 1907 թ. գ. 30 կ.

Ն. Վ. Մէլիք-Թանդեան, Հայոց եկեղ. իրաւունքը բ. գիրք. կաղմակերպութիւն և կառավարութիւն. Շուշի, 1907 50 կ.

Բ. Իշխանեան. Թիւրքիայի ապագան, Թիֆլիս, 1907 10 կ.

Իսրայել սարկ. Քնարիկ, ժողովրդ. ծայն. երգեր, տեար տ. Վաղարշ. 1907 15 կ.

Ա. Հայկունի, ժողովրդական տատկներ, Վաղ. 1907 30 կ.

Կրթութեան բարեկամներուն, Լօզան, 1907.

Մ. Զմշկեան, տարեցոյց 1908 Թիֆլիս, 30 կ.

Տեղեկագիր և հաշիւ Բաղուայ Հայոց Կուլտուր. միութեան 1906—7. Բաղու 1907.

Լևոն Վարդ. Հին Նախիջևանի նպաստամատոյց մասնաժողովի հաշիւները, Վաղ. 1907

Ներսէս ք. Տէր-Կարապետեան. Յարութիւն մարդկան, բ. տպ. Թիֆլիս, 1908 10 կ.

Ընդարձակ օրացոյց ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց 1908 թ. Կ.-Պոլիս.

Մինաս Բերբերեան. Գրական ակնարկներ. Պերճ Պռոշեանց. Վանդ. 1908.

Կանոնագիր դիւղական կամ ընկերական շուկամարան-թանկարանի. Սպբ. 1907 2 կ.

Թէոդիկ. Դմէնուն տարեցոյցը 1908 բ. տարի. հրատ. և տպ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան. Կ.-Պոլիս 10 ղրուշ.

Լ. Մ.-Ա. Իմ պատասխանը բարոյապէս ընկածին. Թիֆլիս 1908.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1908 Թ. ՍԿԶԲԻՑ

Թիֆլիսում կը հրատարակուի

ԳԵՂԱՐԻԵՍՏ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Պատկերազարդ հանդէս

(Ամսագիր)

«Գեղարուեստի» դիրքը լինելու է մեծադիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարուեստական առաջնակարգ հանդեսներին. ծաւալը իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշեները պատրաստուում են Լայպցիկում և Պետերբուրգում. Թուղթը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն խնամքով և շքեղ:

Աշխատակիցների անպայման վարձատրութիւն

Տարեկան բաժանորդագինը 10 ռուբլի:

Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆրանկ:

Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 ռուբլի 50 կ.

Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакціи «Гехарвестъ»,

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԻՒՈՆԵԱՆ

Բացուած է 1908 թ. բաժանորդագրութիւն

XXVI-ՐԴ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XIX

Հանդէսները կը հրատարակուեն 1908 թ. այնքան № №, որքան կը թելադրէ հայ վճարող բաժանորդների թիւը:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր., (արտասահման 5 ր.), ՏԱՐԱԶԻ-6 ր. (արտասահման 10 ր.) երկուսը միասին 10 ռուբլի (արտասահման 50 ֆռ.)

Յաւելուածներն ու անակնկալ պրէմիաները սատանում են ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶԻ միևնոյն հասցէով տարեկան բաժանորդները։

Առանց բացառութեան Նոր-տարուայ № №-ը կուղարկուեն հին բաժանորդներից միայն նրանց, որոնք նորոգած կը լինեն իրենց բաժանորդագրութիւնը։

Հասցէ՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ» Tiflis (Gaucase) Rédaction «Agbur» կամ «Taraz».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Փետրվարին կսկսուի հրատարակուել ամենաէժանագին-ամենքին մատչելի շաբաթաթերթ։

ԽԱՐԱԶԱՆ

Բաժանորդագրութիւն վեցամսեակով և վեցամսեակի ընթացքում միանուագ եւ մաս-մաս վճարող բաժանորդները կստանան։

25 համար շաբաթաթերթ (պատկերազարդ)։

6 գրքոյկ պատկերազարդ, այն է՝

1) Նախապատմական կեանք. 2) Հայերի հայրենիքը կամ Ուրարտու. 3) Լեհաստանի հայեր. 4) Լեւոն Զ. հայոց թագաւոր. 5) Միքայէլ Նալբանդեան. 6) Մանկական գիրք։

Եթէ բաժանորդների թիւը հասաւ 1000-ի ամեն մի բաժանորդ կստանայ ձրիաբար «Հայաստանի բարտէզը»։

Բաժանորդագին

Վեցամսեակ—1 ռուբլի.	կոպ.	Արտասահման	1 ռուբլի	50 կ.
Եռամսեակ	«	« 50	1 ռուբլի	
Ամիսը	«	« 20	«	50 կ.

Բաժնեգինը կարելի է ղրկել նամակադրոշմներով (մարկա)։

Հասցէն՝ Тифлисъ, Михайловская ул. Церковный домъ. № 38 Хачатуру Теръ Маркарянцу. 2—2.

Բացւած է 1908 թ. բաժանորդագրութիւնը

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ ուր շո-

շափուում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարեւորագոյն հարցեր։

Առանձին գրքոյկով լոյս կը տեսնի՝ «Ինչ կարդան մանուկները»—քննադատութիւն վերջերս լոյս տեսած հայերէն մանկական գրքերի։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան. ՀԱՍԿԵՐ մանկ. բաժին 3 ռ. մանկավարժ. բաժնով 4 ռ.
Կէս տարեանը. 1 ռ. 80 կ. . . . . 2 ռ. 10 կ.
Մէկ ամսեանը — 30 կ. . . . . — 35 կ.
Պարսկաստանում 3 ռ. 50 կ. . . . . 4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան. 9 ֆր. . 12 ֆր.
Հրատարակութեան սկզբից մինչև 1908 թ. վերջը 9 ռ., 11 ռ. 50կ.

Հասցեն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ Редакція журнала «Аскеръ», կամ Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր—Հրատարակիչ՝ Կաս. Լիսիցեան

Թիֆլիսում կարելի է գրուել նաև «Գուտենբերգ» գրախանութում և «Փարոս» կիոսկում, իսկ Բագուում՝ Сотрудникъ գրախանութումն։

Բացուած է բաժանորդագրութիւն

ՄՇԱԿ

Քաղաքական եւ Գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակ»-ի տարեկան գինը 10 ռուբլի։

Մայրիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակ»-ին գրուել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն Тифлисъ, Редакція «МШАКЪ». արտասահմանից Tiflis Rédaction du journal «Mschak».

Բացուած է բաժանորդագրութիւն

1908 թ.

ՎՏԱԿ

Հասարակական, Քաղաքական, Գրական, Տնտեսական Օրաթերթի

1ա. 11ա. 10ա. 9ա. 8ա. 7ա. 6ա. 5ա. 4ա. 3ա. 2ա. 1ա.

Ռուսաստ. 8ր. 7,50 7ր. 6,50 5,50 4,50 4ր. 3,50 3ր. 2,25 1,50 80կ
Արտասահ. 12ր. 11ր. 10ր. 9 ր. 8ր. 7ր. 6ր. 5ր. 4ր. 3,50 2,40 1,20
Պարսկաս. 9ր. 8,50 8ր. 7,50 7ր. 6ր. 5ր. 4,50 4ր. 3ր. 2ր. 1ր.

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս, յու՝ նուարին 4 ր., մարտ. 2 ր. և յունիսին 2 բուբլի։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ բացի օրաթերթից կստանա- սեւ մի ՀՐԻ յաւելուած (200—300 մեծադիր երես)։

Գրական-գիտական ժողովածու

որ լոյս է տեսնելու յունուար ամսին, աշխատակցութեամբ՝ Ա. Ահարոնեանի, Ա. Աբեղեանի, Ե. Թովչեանի, Յովհ. Թումանեանի, Յ. Թադէոսեանի, Ա. Իսահակեանի, Գ. Խաժակի, Սիմ. Յակոբեանի, Միք. Յովհաննիսեանի, Լ. Նազարեանի, Յ.Շահպազեանի, Ս. Շխեանի և ուրիշների։

Բաժանորդագրութիւնն ընդուն. է խմբագրատանը Ванкская, № 6·
» » «Փարոս» Կոօսկում Эриванская пл.
» » «Գուտտենբերգ» գրավ.—Эрив. пл.

Այլ տեղերից դրամ փոխադրել անպայման հետևեալ հասցէով. Тифлисъ, почт. ящ. № 23 Левону Абовьянцу.

Բացուած է 1908/9 թ. բաժանորդագրութիւնը

(Այս տարւայ մարտից մինչեւ 1909 թ. մարտը)

ՅՈՒՇԱՐԱՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԴԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ

պատկերազարդ երկշաբաթաթերթի

(Բ. ՏԱՐԵՑՔԱՆ)

«Յուշարար»-ը իւր բ. շրջանին տալու է 20 պատկերազարդ համար (փոխանակ 18-ի) և 10 ընտիր պիէսներ, (փոխանակ 9-ի) որոնք գլխաւորաբար նւիրուած պէտք է լինեն գաւառական բեմերի պահանջներին։

ԲԱԺՆԷԳԻՆԸ Ռուսաստանում տարեկան 5 բուբլի
Արտասահմանում » 6 »

Բաժանորդագրութիւնը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ր. ապրիլին 1 ր. մայիսին 1 ր.։ Նամակներով պէտք է դիմել՝ Тифлисъ Редакція «Ушараръ» կամ Rédaction «Houcharar» Tiflis. Խմբագրատունը գտնւում է Սօլոլակի փողոց № 14 և բաց է ժամի 2—3

Թիֆլիսում կարելի է գրւել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Փարոս» կիոսկում, իսկ Բաքւում Сотрудникъ գրախանութում։

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

— 1908 թուին —

Կհրատարակուի պաշտօնական—կրօնական—եկեղեցական և մանկավարժական—գրական—բանասիրական բաժիններով։

Բացի մեր հին աշխատակիցներից այս տարուայ ընթացքում «Արարատի» յառաջադիմութեան անմիջապէս կմատակարարեն Մ. Աթոռի կարող միաբաններն ու ճեմարանի ուսուցչական խումբը իւր ստուար մասով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ { ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 4 ր. / ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ 5 ր.

Այն բաժանորդները, որոնք կարող են մեր թերթն անմիջապէս փոստից ստանալ, թող հաճին յայտնել իրենց հասցէները։

Մեր հասցէն՝ Св. Эчміадзинъ, Типографическому Комитету.

Արտասահմանի համար՝ Rédaction de la Revue „Ararat"
Etchmiadzine (Caucase)

Բացուած է բաժանորդագրութիւն 1908 թ. համար

ՄԵՐ ՁԱՅՆ

Հասարակական, գրական եւ բաղաքական օրաթերթ

Հրատարակւում է Նոր-Նախիջևանում շաբաթն առ այժմ 3 անգամ՝ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը

Թերթի մէջ կրկնեցուն հասարակական գործիչների ՊԱՏԿԵՐՆԵՐ, կարևոր ՆԿԱՐՆԵՐ և ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Տարեկան Նոր-Նախիջևան և Ռոստով 5 ր., դուրսը 6 ր., կէս տարուանը 3 ր., երեք ամսուանը 1 ր. 50 կ., ամիսը 50 կ., հատը 5 կոպ.։ Արտասահման 10 ր.։

Յայտարարութեան իւրաքանչիւր տողատեղը առաջին երեսում 20 կոպէկ, չորրորդ երեսում 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար 25 կոպէկ։

Օտար տեղերից դիմել՝ Нахичеванъ на-Дону. ред. „Меръ Дзайнъ", իսկ արտասահմանից՝ Nachitchevan s-Don, Russie, Rèdaction „Mer Dzain".

ԲԱՑԻՍԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1908 Թ.

ՀՈՎԻՒ

Ազգային, հասարակ. և գրական շաբաթաթերթ
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ { Տարեկան . . 4 բուբլի։ / Կէս տարուան . 2 ր. 50 կ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում

ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵԼ.

Թիֆլիսում—խմբագրատանը՝ Большая Ванкская № 16. Կայսերութեան այլ քաղաքներից—դիմել՝ Тифлисъ, Редакція «Овивъ» Արտասահմանից՝—Redaction «Hovive» Tiflis—Gaucase, Russie։

Խմբ.-հրատ.՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանց

1908

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳՐԻ

Վերսկսելով «ԼՈՒՄԱՅ»-ի կանոնաւոր հրատարակութիւնը՝ խմբագրութիւնը յայտնում է իւր ընթերցողներին, որ

1, Բաժնէգինը իջեցնում է 6 ռուբլու։

2, Անպայման ընդունւում է միայն կանխիկ բաժանորդագրութիւն, որովհետև մենք բաւական ենք համարում թէկուզ 100 բաժանորդ ունենալ և վճարած, քան 1000 և ապառիկ՝ երկար տարիների ընթացքում։ Ոչ մի ապառիկ պահանջ չի կարող կատարուել խմբագրութեանս կողմից, ում կողմից էլ լինի այդ։

3, Երբ բաժանորդների թիւը 500-ից անցնի՝ խմբագրութիւնս կձեռնարկէ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ «ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի տպագրութեան, որ և ձրի կուղարկուի բոլոր վճարող բաժանորդներին։

4, Խնդրում ենք մեր թերթի ուղղութեան բոլոր համակրողներին տարածել «ԼՈՒՄԱՆ» և մեզ միջոց տալ աւելի ընդարձակել հրատարակութեան գործը։

Խմբ.-Հրատ. ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Մեր հասցէն՝ Թիֆլիս Պօլիցէյսկաեա 7, «Լումայ»-ի խմբագրութիւն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս համարը ուղարկւում է միմիայն կանխիկ վճարող, մէկ էլ մեր մշտական բաժանորդներին և ուրիշ ոչ ոքի։

Ցանկացողները ստանալ՝ թող շտապեն բաժանորդ գրուեն կանխիկ վճարով։

Իսկ հայ թերթերից միայն նոցա, որոնք փոխանակութեամբ ուղարկւում են մեր խմբագրութեան։

Մնացեալ հայ թերթերի խմբագրութիւնները, որոնք ցանկանում են «ԼՈՒՄԱՆ» ստանալ՝ թող բարեհաճեն իրանց թերթերն էլ մեզ ուղարկել։